Էջմիածին

ՌՆԴ

ԺԱ. ՏԱՐԻ

Աեպտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

Պաշտօնական ամսագիր

Հայրապետական աթոռոյ

Ս. Էջմիածնի

IX

1955

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԿԻՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Առաջնորդվելով Հայրապետի ընտրության համար 3

Հեռագրերի փոխանակություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մնծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքությունների միջև . 7

ԱՌՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Ողջույնի խոսք արտասահմանյան պատգամավորներին 11

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈՂԱՏՅԱՆ.— Դեպի Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք 12

Գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանի դասախոսությունը Ռուխարեստում 19

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 21

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը . 25

Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ.— Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգումը ավարտված է 28

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ.— Մեսրոպ Մաշտոց 36

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Դ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Յոթերորդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին 43

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ.— Կեչառիսի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները 50

Շատ պատվիրակություններ Սովետական Հայաստանի մասին . 56

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ 58

Ռ. Մ.— «Գիրք ելից Հայոց», Կարապետ ավագ քահանա Դալֆյան . 61

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1953 թ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Այն թվականի սեպտեմբերի վերջերին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ճանդիսավոր իրադրության մեջ ու խանդավառ մթնոլորտում, կրացվի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գերագույն օրենսդիր մարմինը՝ Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության համար:

Ազգային-եկեղեցական համազգային ժողովի աշխատանքները կտևեն մինչև սեպտեմբերի 30-ը: Հայրապետական ընտրությունից բացի, ժողովում կքննարկվեն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար հրատապ և մեծ կարևորություն ունեցող մի շարք հարցեր՝ կապված մեր եկեղեցու հետագա աշխատանքների հետ:

Ընդունված հնավանդ սովորությունների համաձայն, որոնք օրենքի նվիրականություն և ուժ են ստացել վաղուց հայ հավատացյալ ժողովրդի կրոնական ըմբռնումների մեջ, համազգային եկեղեցական պատկառելի ընտրական ժողովը կգումարվի Մայր Տաճարում, և դռնփակ նիստում, պատգամավորների հանդիսավոր երդումից հետո, գաղտնի քվեարկությամբ, կընտրվի Ամենայն Հայոց Հայրապետը:

Պատմական, հավետ անմոռանալի օրեր են լինելու Հայաստանյայց Առաքելական եկեղեցու համար, որովհետև Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունը միշտ էլ հանդիսացել է նշանակալից ազգային-եկեղեցական իրադարձություն հայ կյանքում:

Արդեն Մայր Աթոռ են ժամանել թե՛ Հայրենի երկրի, թե՛ Սովետական Միության և թե՛ Սփյուռքի մեր թեմերի սիրելի պատգամավորները:

Վստահ ենք, որ Ազգի և եկեղեցու անունից ընտրված այդ ազնիվ, հայրենասեր ու էջմիածնասեր պատգամավորները, ինչպես միշտ, այս պատմական ընտրության առթիվ ևս, կգտնվեն իրենց պարտականության, կոչման բարձրության վրա:

Նրանց Հայրենիք են բերել Սովետական Հայաստանի պայծառ իրականությունն ու Հայրենյաց սերը, հայ ժողովրդի կարոտը, Ս. Էջմիածնի անունն ու խորհուրդը, Ամենայն Հայոց Հայրապետության նվիրն ու պատմական նշանակությունը:

Լցված դեպի Հայրենիքն ու Ս. Էջմիածինը այդ բարձր գիտակցությամբ, անա նրանք՝ մեր ժողովրդի ներկայացուցիչները եկել են իրենց հայրենասիրական, էջմիածնասիրական պարտքը կատարելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու օրրան, հայ ժողովրդի Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնի հանդեպ, և վստահ ենք, որ նրանց միասնականության շնորհիվ, ժողովի օրակարգում դրված հարցերը միահամուռ և հաջող լուծում կստանան:

Պատգամավորների անկաշառ հայրենասիրությունից, եկեղեցասիրությունից է կախված Ազգային-եկեղեցական մեծ ժողովի աշխատանքների արդյունավետությունն ու բեղմնավորությունը:

Այս պատմական օրերին բովանդակ հայության սիրտն ու խոհերը թևածում են այս նվիրական վայրերում: Անցյալի ու ներկայի ողջ հայության սիրտն է բաբախում այս ոստիններ այս վայրերում:

Ս. Էջմիածի՞ն... Սրբազա՞ն Հայրենիք...

Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ հայ հավատքի համար հանդիսացել է մեր ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԵՐՆԱՏՈՒՆԸ, ուր Ս. Հոգու առաջնորդությամբ հավաքվել է բովանդակ հայ ժողովուրդը իր պատմության մերթ մռայլ ու հակատագրական օրերին, մերթ երջանիկ ու փառքի օրերին, լույս ու ճանապարհ որոնելու, կորով ու ներշնչում՝ իր ապագայի համար. «...էին ամենեքեան միաբան ի միասին...», ստանալու համար «զօրութիւն ի Հոգւոյն Սրբոյ...», «...եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով» (Գործք, Բ 1—4):

Աշխատության, արդարության, խաղաղության սիրով այդ աստվածային «զօրացուցիչ, սատուածացուցիչ, միշտ ընդունող, սրբոյդ» Ս. Հոգին է տաջնորդել մեր Եկեղեցուն և ժողովրդին դարերի միջով իբրև «ճրագն սիւն»: Այդ աստվածային Հոգով է ապրել և ստեղծագործել հայ ժողովուրդը, այդ Ս. Հոգու ներկայությամբ է զոյատևել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, պահելով իր ազգային նկարագիրը, ուղղափառությունը, ժողովրդանվեր ոգին, մարդասիրական քրիստոնեական վեհ իդեալները, «վասն դի ուղղափառ հաւատոյ քո լոյս, ո՞վ Եկեղեցի Հայոց, ոչ նուազեցաւ, ի բարի սերմանս ցորենոյդ՝ որոմն ոչ խառնեցաւ, զաղբիւր յստակ աւանդութեանց քոց՝ աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց, ի ստուգութեան և ի ճշմարտութեան հացն քո կենդանական՝ մեռելական խմոր և ներծուած քացախութեան չարութեան ոչ գանգեցաւ, յոսկի անբիծ հաւատոյն և յարծաթ լուսատեսիլ բանին՝ պղինձ ժանգաճոտ և կապար սնաբոյր ոչ գտաւ» (Հովհան Երզնկացի):

1955 թվականի նոյեմբերի սկիզբները ցնծատոն է հանդիսանալու հայ հավատացյալ ժողովրդի համար, որովհետև «մեր նախնյաց և մեր ներկա Սրբություն Սրբոցը, հայ քրիստոնյա մարդու Լուսո Տաճարը, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր սրբություններով, և մեր ներկա Մայր Հայրենիքը՝ իր պատմական հուշարձաններով, որպես մաղնիսական ույժ բերել են հայ հավատացյալներին ու համախմբել պատմական Տաճարի շուրջ, բերել՝ Սփյուռքի պատգամավորներին Հայրենիքի կարոտն առնելու, Հայրենի երկրի անցյալ ու ներկա հուշարձանները տեսնելու, ոգեշնչվելու և արձագանքելու նախնյաց սրտառուչ զգացմունքներին. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհին»:

Ազգային-եկեղեցական ժողովը, բացի իր զուտ կրոնական նշանակությունից, կունենա նաև այլ կարևոր նշանակություն: Սփյուռքի հայրենակարոտ ժողովրդի ներկայացուցիչները՝ Ազգային-եկեղեցական ժողովի մեծաքարգ պատգամավորները, կաթողիկոսական ընտրության կապակցությամբ հնարավորություն կունենան համբուրելու Հայրենի սրբազան հողը, ողջագուրվելու Հայրենիքի իրենց հարազատների հետ, մոտիկից ծանոթանալու Հայրենիքի նվաճումներին և հայ ժողովրդի երջանիկ ու խաղաղ կյանքին, որ իր ձեռքում վերցրած իր կյանքը տնօրինելու ազատությունն ու իշխանությունը, իր հարազատ պետականության պայմաններում ժայռերից վարդեր է բազում, քարերը փոխակերպում հացի, և իր ու զալիք հայ սերունդների համար կերտում է նոր կյանք ու լուսավոր ապագա:

Պատգամավորները իրենց վերադարձին իրենց հետ կտանեն Ս. Էջմիածնի օրհնությունները ու նորընտիր Հայրապետի ողջույնները և Մայր Հայրենիքի սրտագին պատգամը Սփյուռքին:

Հայ ժողովրդի համար միշտ էլ նվիրական է եղել Հայրենիքի պատգամը և Մայր Աթոռի օրհնությունը: Տարագիր հայ ժողովրդի սիրտը բաբախել է միշտ հայրենասիրական ու էջմիածնասիրական բոցավառ զգացմունքով, որովհետև հայ ժողովուրդը, ուր էլ որ գտնվի, ազգային հպարտության ամենաազնիվ զգացմունքներով է լցված դեպի իր Սովետական Հայրենիքը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Պատգամավորներին Մայրենի երկիր է բերել եկեղեցասիրության և հայրենասիրության վառ զգացմունքը: «Հայ հավատացյալ ժողովրդի պատմական առանձնահատկությունն է այդ, եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը սերտ կապված երևան բերել կյանքի կարևորագույն դեպքերի ժամանակ, Ս. Սահակի, Ս. Մեսրոպի և Վարդանանց ու Ղևոնդյանց օրերից սկսած»:

Սեպտեմբերի վերջերին մի նոր ու պատմական ամսաթիվ ևս ավելանալու է մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ: Այդ օրը ընտրվելու է Ամենայն Հայոց նոր Կաթողիկոսը, որը կոչված է բազմելու Լուսավորչի պատմական Աթոռի վրա և հովվական ցուպը ձեռին առաջնորդելու Հայաստանյայց Առաքելական եկեղեցին դեպի խաղաղ նավանիստ, Ազգի սիրով և Հայրենիքի զաղափարով: Ս. Էջմիածնի Գահն ու Գահակալները հանդիսացել են ազգային ինքնագիտակցության ու պահպանության հիմնական ազդակներ: «Հայոց Հայրապետությունը,— գրել է Վեհափառ Հայրապետը,— վեհ գաղափարների մի փունջ է, որ հյուսվել է Հայոց մեծ Հայրապետների ձեռքով»:

Այդ վեհ գաղափարների փնջի ամենավառ ծաղիկներն են եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը, որոնք տնքառամ փայլով ու բարմությամբ գեղեցկացրել են Հայաստանյայց Առաքելական եկեղեցու մեծ Հայրապետների կյանքն ու գործունեությունը: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին միջոց էլ եղել է հայ ժողովրդի Սրբություն Սրբոցը: Հայ եկեղեցու կամարների տակ միշտ հնչել է հայրենասիրության սրբազան զաղափարը: Մեր մեծ հոգևորականները եղել են միաժամանակ մեծ հայրենասեր, ինչպիսի էին Ս. Լուսավորիչը, Մեծն Ներսեսը, Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը, Ղևոնդ Երեցը, Ներսես Աշտարակեցին, Խրիմյան Հայրիկը, Գեորգ Զ.ը: Հայաստանյայց Առաքելական եկեղեցին հայրենասիրական իր հաստատուն եկարագրով միշտ հանգես է եկել ներքին, պառակտողական, կենտրոնախույս ուժերի դեմ, որովհետև «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԵՆՏՐՈՆՆ Է ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ»: Եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը մեր մեծ հայրապետների կյանքի և գործունեության էությունն է հանդիսացել:

1955 թվականին գումարված Ազգային-եկեղեցական ժողովը, պատվով ու սրբությամբ կատարելով իր պարտքը, Լուսավորչի Աթոռի վրա կրազմեցնի ամենահայրենասեր հոգևորականներից մեկին, որն իր կյանքի օրինակով ու գործունեության քարոզով, նախնյաց ոգով և հավատքով, վառ կպահի հայ հոգիներում հայրենասիրության, եկեղեցասիրության սրբազան հուրը, ինչպիսին էր Գեորգ Զ.ը:

Ուրախ ենք հոգին և մխիթարված սիրտը, որ մեր մեծ եկեղեցականների անխոխարինելի կորստից հետո ևս այսօր, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության շարքերում, ունենք Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռի համար մի շարք արժանավոր թեկնածուներ:

Մեր Ազգային-եկեղեցական այս ժողովի հարգելի պատգամավորների սրտագին պարտականությունն է՝ հանդես բերել քաղաքացիական արիություն, զոհաբերություն, շրջահայեցողություն, մանավանդ այս նոր ընտրության մեջ: «Պարզամիտ լինել որպես աղավնի, բայց զգոնարգիտուրիւն օձին մեզ ունիմ և ոչ տամք զողանալ զմեզ քանառար գայլոցդ ի լուսակազմ փարախէ» (Որբելյան):

Ազգային-եկեղեցական ժողովի, մեր հոգևորականության, հայ հավատացյալ ժողովրդի պատվի, խղճի, հայրենասիրության, եկեղեցասիրության պարտքն է՝ ընտրել լավագույն թեկնածուին, որը կարողանա վառ պահել հայ ժողովրդի հոգում հայրենասիրության վեհ զգացմունքը, եկեղեցասիրության բոցավառ ոգին, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կարգն ու կանոնը, մեր եկեղեցու հատուկ ազգային սրբազան ավանդությունները, մեր եկեղեցու ինքնուրույնությունը, ազգային նկարագիրը, ուղղափառությունը, ժողովրդական սկզբունքները, սահմանադրական ոգին, համերաշխությունը, ազգային միասնությունն ու եկեղեցական միասնականությունը:

Պատմական այս ընտրությունը պետք է վերածել հայ ժողովրդի միասնականության և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միության տոնի, հայ ժողովրդի սիրո և հարգանքի տոնի՝ իր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և նրա արժանավոր նոր Գահակալի շուրջ:

Զգիտի տարվել երկրորդական ամոլ պայմաններով, որոնք ոչ մի լավ բան չեն տվել մեր ժողովրդին և չեն էլ կարող տալ, բացի նրանից, որ կարող են ուրախացնել մեր թշնամիներին:

1955 թվականի կաթողիկոսական ընտրությունը պետք է դրսևորի մեր բոլոր բեմերի պատգամավորության իղձերի, կամքի, գործողությունների միասնությունն ու համերաշխությունը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շուրջը:

Այս են պահանջում Հայ եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահը, ժամանակի ոգին և հանգամանքները:

1955 թվականի հայրապետական ընտրությունը պետք է վեր ածել հայ ժողովրդի հայրենասիրության փայլուն և սրտառուչ միասնականության:

Նոր Կաթողիկոսի ընտրությամբ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու գերագույն Հայրապետական Աթոռից կվերանա սուգի սև քողը և նա կմտնի նորից իր պատմական դերի և նշանակության մեջ՝ շարունակելու համար իր հոգևոր առաքելությունը հայ կյանքում և մեր նվիրական Հայրենիքի հզորացման, բարգավաճման վսեմ և խաղաղ աշխատանքներում:

Թող նշմարտության, խաղաղության սատվածային և Սուրբ Հոգին առաջնորդի Ազգային-եկեղեցական ժողովին, որպեսզի արդյունավետ և բեղմնավոր դառնան ժողովի աշխատանքները և արժանավոր նոր Դահակալի ընտրությամբ մի անդամ ևս փառավորվի Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և ուրախանա հայ նավատացյալ ժողովուրդը:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո Հայաստանեայց անշարժ պահեա՛»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՀԵՌԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

ԽԱՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ

Նկատի ունենալով, որ սեպտեմբերի վերջերին նախատեսվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը և մեռոնօրհնությունը, ուստի և խնդրում ենք Կիլիկիայի կաթողիկոսական ընտրությունը հետաձգել ավելի ուշ ժամանակ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

10 օգոստոսի 1955 թ.
Էջմիածին

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հուլիսի 8-ին հաղորդեցիք Ձեզ, թե Կիլիկիայի Կաթողիկոսի ընտրությունը տեղի պիտի ունենա հոկտեմբերի 14-ին: Մենք այդ թվականը ծանուցիք մեր բոլոր թեմերին որպես վերջնական, հետևաբար մեր ընտրությունը չի կարող հետաձգվել: Խոնարհաբար խնդրում ենք հետաձգել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը:

ԽԱՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽԱՌ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության ակնդիտ սպասում է Հայրենիքի և Սփյուռքի հավատացյալ հայությունը: Ընտրության հետ նախատեսված է նաև Սրբալույս Մեսրոպի օրհնությունը, որը կապված է տարվա որոշ ուխտագնացությունների հետ և հետաձգվելու դեպքում պետք է փոխադրել հաջորդ տարվան, իսկ այդ հնարավոր չէ անել, քանի որ երկար տարիներ է ինչ մեռոնօրհնությունն չեն կատարել: Վերջապես, հետաձգումը կապված է մի շարք պաշտոնական բնույթ ունեցող բարդությունների հետ: Ելնելով այս ամենից, Գերագույն Հոգևոր Խորհուրդը ո՛չ մի դեպքում հնարավոր չի համարում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության հետաձգումը: Ուստի խնդրում ենք Ձեզ վիշտ լինել այս հարցում, մանավանդ, որ Ձեր ընտրությունը կապված է մի քանի համախմբված թեմերի հետ և կարելի է կատարել ցանկացած ժամանակ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽԱՌ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ

Մեզ հայտնի դարձավ, որ Դուք չեք ցանկանում հեռաձգել Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունները, որը հավասարազոր է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրավիրած Ազգային-եկեղեցական ժողովի գումարման խանգարմանը: Բարեկամաբար խորհուրդ ենք տալիս ընդառաջել մեր խնդրանքին և հետաձգել Կիլիկիայի կաթողիկոսական ընտրությունները:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

1 սեպտեմբերի 1955 թ.
Էջմիածին

ԽԱՌ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ

Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության Համազգային կենտրոնական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար անհրաժեշտ է Ձեզ Սրբազնության Մայր Աթոռ ներկայությունը: Բարեհաճեցեք մեկնել:

Համազգային կենտրոնական հանձնաժողովի անդամներ՝
ՎԱՉԳԵՆ ՍՊԻՍԿՈՊՈՍ
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
ՍՏԵՓԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

6 սեպտեմբերի 1955 թ.
Էջմիածին

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՃԱՆԻՆ, ԿԻԼԻԿԻԱՅԻ ԲՈԼՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ ԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովում կարողիկոսական ընտրությունից բացի, ենթարկվելու է մի շարք կարևոր եկեղեցական հարցեր, ուստի անհրաժեշտ ենք համարում Ձեր և Ձեր տեսակետի պատգամավորության ներկայությունը: Այդ են թելադրում Հայոց եկեղեցու և Ազգի շահերը: Խիստ ցավալի կլինի, եթե Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունն իր արժանավայել մասնակցությունը չունենա համազգային-եկեղեցական ժողովին: Սփյուռքի բոլոր համայնքներից պատգամավորներ ընտրված են և վիզաներն ապահովված բացի Ձեր թեմերից: Վիզաներ ապահովել ենք նաև մեծ թվով ուխտավորների համար: Ցավոք սրտի մինչև այժմ տեղեկություն չունենք Ձեր որոշման մասին: Կրկին խնդրում ենք, որպեսզի Դուք անձամբ, ինչպես և Ձեր եպիսկոպոսներն ու աշխարհական պատգամավորները մասնակցություն ունենան Ազգային-եկեղեցական ժողովին: Ձեր որոշման մասին հաճեցեք շտապ հեռագրել:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

15 սեպտեմբերի 1955 թ.
Էջմիածին

ԾԱՆՈԹ.— Սույն հեռագիրը ուղարկված է խաղ սրբազանին Կիպրոսի հասցեով, քանի որ նա այդ ժամանակ Աքրիլիայից մեկնել է Կիպրոս:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՃԱՆԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ

Ձերդ Սրբազնության բացակայությունը Ազգային-եկեղեցական ժողովից կարող է սխալ մեկնաբանություններին և անախորժ խոսակցությունների տեղի տալ, ուստի և նորից բարեկամաբար խնդրում ենք հանուն մեր Աթոռների ավանդական միասնականության և հօգուտ մեր ազգային եկեղեցական շահերի՝ կարճ ժամանակով հետաձգեիք Ձեր ընտրությունը և Ձեր շքախմբով հանձնիք մեկնել Մայր Աթոռ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

28 սեպտեմբերի 1955 թ.
Էջմիածին

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Կիլիկիո Կաթողիկոսության անունից նշանակել ենք Դերենիկ եպիսկոպոսին և Հրանտ Գրիգորյանին պատգամավորներ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության մասնակցելու համար:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ցավով նշադրելի Ձեր հեռագիրը: Առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովում ենթարկվելու է մի շարք կարևոր եկեղեցական հարցեր, ուստի և Ձեր ներկայությունը, որպես Հայ եկեղեցու ավագագույն ներկայացուցչի, պատմականորեն խիստ անհրաժեշտ ենք համարում: Խնդրում ենք մի անգամ ևս գործ դնել հնարավոր ջանքերը Ձեր գալուստը կարելի դարձնելու համար: Հաճեցեք հեռագրել Ձեր, ինչպես և Պատրիարքության պատգամավորության գալստյան մասին Ձերդ Սրբազնության վերջնական որոշումը:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

15 սեպտեմբերի 1955 թ.
Ս. Էջմիածին

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հաստատում ենք սեպտեմբեր 18 թիվ մեր հեռագիրը: Ցավում ենք կրկնելու, թե ներկայիս ոչ հարմար, ոչ էլ հնարավոր է մեր գալուստը: Ցոր ձայնը տալիս ենք հետևյալներին. Սիրունյան արքեպիսկոպոս, Ներսոյան արքեպիսկոպոս, Պալճյան եպիսկոպոս, բանաստեղծ Իսահակյան, պրոֆեսոր Աբրահամյան, Արգենտինայի պատգամավոր Տեր Ավետիսյան, Եգիպտոսից Նասիպյան...

Ճշմարտության Սուրբ Հոգին առաջնորդ լինի ամենքիդ:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

19 սեպտեմբեր 1955 թ.
Էջմիածին

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ազգային-եկեղեցական ժողովի նախապատրաստական աշխատանքների կապակցությամբ անհրաժեշտ է Ձերդ Սրբազնության ներկայությունը էջմիածնում: Ուստի և խնդրում ենք կարգադրել Պատրիարքարանի գործերը և բարեհաճեք մեկնել Մայր Աթոռ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ԿՈՍՏԱՆՅԱՆ ԲԱՐԵԽՆԱՄ ՆԱԽԱԳԱՀ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Սրբազա՛ն եղբայր,

Հակառակ ջերմ փափաքիս և Ս. էջմիածնի նկատմամբ խղճորեն զգացած պարտականության, կարելի չեղավ արտոնություն ստանալ Հորդանանի վերին իշխանություններեն՝ Ս. էջմիածին գալու և մասնակցելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության, որ մեծագույն պարտականությունն է ամեն հայ բարձրաստիճան և հանգամանավոր եկեղեցականի:

Խորապես կցավիմ, որ պարագաները անբույլատու կեանդիսանան այսպես, և ես հակառակ կամքիս ստիպված եմ նկատի առնուլ զանոնք. հակառակը կրնա վնասել Ս. Աթոռոս գերագույն և բազմերես շահերուն, քաղաքական այժմու կացության ընդմեջեն:

Նկատի առնելով վերոհիշյալ պարագան և իմ անկարողությունս, կնայտնեմ նույնպես, թե ես թեկնածու չեմ ուզեր ըլլալ Ամենայն Հայոց Կաթողիկոսության, իբրև Հայաստանյայց եկեղեցվո եպիսկոպոսներեն մին: Այս նվիրական պատճառությամբ կմաղթեմ ի սրտե, որ Տերը թանասան և հաստատ պահե Ս. էջմիածինը, պարգևելով անոր և համայն Հայ եկեղեցիին արժանավոր Հովվապետը: Խնդարեմ Գերագույն Հոգևոր խորհուրդեն և Ազգային-եկեղեցական ժողովս բոլոր եկեղեցական և աշխարհական անդամներեն, որ ներողամիտ գտնվիք ակամա այս բերացումիս համար:

Կմնամ միշտ հավատարիմ Ս. էջմիածնի և ընտրվող սրբազնասուրբ Հայրապետին, իբրև խոնարհ և հարազատ որդի Մայր Աթոռոս և պատրաստ ծառայելու իրեն մինչև կյանքիս վերջը:

Եղբայրական սիրով, աղոթակից՝

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

16 սեպտեմբեր 1955 թ.
Երուսաղեմ

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

(Ասված Երևանի օդանավակայանում)

Սրբազան և հոգեշնորհ հայրե՛ր, սիրելի պատգամավորնե՛ր.

Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության և Մայր Հայրենիքի հավատացյալ հայ ժողովրդի անունից քաղցր պարտականություն ունեմ, այս պատմական ու նվիրական պահին, սրբազանին ողջունելու Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովի հարգարժան պատգամավորներին, Մայր Աթոռի հյուրերին և հոգնաշատ ճանապարհորդությունը հանձն առած մեր ուխտավոր հարազատներին։

Դուք բարո՞վ եկաք։

Հեռու թե մոտիկ թեմերից, Արևելքից թե Արևմուտքից, հյուսիսից թե հարավից, հնոավոր ափերից, եկել եք ծնրադրելու մեր նախնյաց և մեր ներկա Սրբություն Սրբոց՝ հայ քրիստոնյա մարդու Լուսո Տաճար՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խորաններին առաջ, եկել եք համբուրելու դարավոր ու մեռոնաբույր սրբություններ, Լուսավորչի արժանավոր հաջորդի Ս. Աջը, Արքալույս Մեռոնի կաթսան, եկել եք համբուրելու Հայրենի սրբազան այս հողը, որի տերն է այսօր մեր ժողովուրդը, և ողջագուրվելու Մայր Հայրենիքում ապրող ձեր հարազատների հետ, ձեր կարոտն առնելու Հայրենի երկրից և ժողովրդից։

Դուք բարո՞վ եկաք...։

Զեղանից շատերը առաջին անգամ է, որ ոտք են դնում Հայրենի հողի վրա... այս խորհրդավոր բոպեին, ինչպիսի՞ քաղցր ու անանուն զգացումներ ալեկոծում են ձեր հավատավոր ու հայրենասեր հոգին...։ Ձեզ համար անմոռանալի պիտի մնան այս բոպեները, Հայրենիքից և Ս. Էջմիածնից ստացված առաջին ու խորը տպավորությունները։

Դուք բարո՞վ եկաք, մեր թանկագին բարեկամներ և հարազատներ։ Սքանից մոտ մի տարի առաջ, ձեղանից շատերը այս սրբազան հողերի վրա էին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեծ սգի օրերին, երբ Սիբիրի մեր սիրելիները եկել էին անկեղծորեն բաժանելու հայ ժողովրդի մեծ վիշտը...

Անցան սգի տխուր օրերը...։

Այսօր դուք եկել եք ուրախ և երջանիկ առիթով, ձեր ձեռքերով վերացնելու սգի սև քողը Հայրապետական Մայր Աթոռի վրայից և մի անգամ ևս ուրախացնելու մեր այրիացյալ Եկեղեցին և համախմբվելու Հայրենիքի և Ս. Էջմիածնի շուրջ։

Բարի գալուստի այս սրբազան պահին, մի անգամ ևս աղոթելի խոնարհվե՛նք մեծագործ ու հայրենասեր Հայրապետի նվիրական շիրմի և հիշատակի առաջ, ուխտե՛նք վառ պահել Լուսավորչի կանթեղը Մայր Աթոռում և հայ ժողովրդի սրտում և կենսագործե՛նք հանգուցյալ Հայրապետի ազգային եկեղեցական միասնության, հայրենասիրության, եկեղեցասիրության, խաղաղասիրության, կրոնների և ժողովուրդների միջև համերաշխության և համագործակցության վսեմ պատգամները։

Աշխատենք սրբությամբ պահել նրա ազգային միասնության և եկեղեցական միասնականության սրբազան ավանդը մեր առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովում։

Դուք բարո՞վ եկաք, մեր հարազատնե՛ր, մեր սիրելինե՛ր։

Թո՛ղ հավետ պայծառ փողփ ողա Լուսավորչի անմար կանթեղը՝ հայոց կայուտ երկնակամարի վրա...

Թո՛ղ հավետ կանգուն մնա Լուսավորչի Հայրապետական Աթոռը այս պատմական հողերի վրա։

Թո՛ղ ծլի ու ծաղկի հզոր վերելքով՝ անցյալի մոխիրներից վերածնված մեր պանծալի Սովետական Հայաստանը։



ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

ԴԵՊԻ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵՎ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Երագույն Հոգևոր Խորհուրդեն եկած հեռագիր մը կավետե, թե հառաջիկա սեպտեմբերի վերջը Ս. Էջմիածնի մեջ կաթողիկոսական ընտրություն պիտի կատարվի, իսկ հոկտեմբերի սկիզբն ալ եպիսկոպոսական ձեռնադրություն և Սրբալույս Մեռոնի օրհնություն։

Հայ ազգայինները պետք է որ օգտվին այս բարեպատեհ առիթեն։ Պաշտոնական պատգամավորներեն զատ, որոնց համար հատուկ կանոնադրություն մշակեց Ազգային-եկեղեցական ժողովը Էջմիածնի մեջ 1945-ի հունիսին, պետք է որ բոլոր թեմերեն ուխտավորներ երթան ներկա ըլլալու նորընտիր Հայրապետի և եպիսկոպոսցուներու օծման և ձեռնադրության, ինչպես նաև Մեռոնի օրհնության սրտահույզ հանդիսության։

Պետք չէ ամենևին մտածել, որ տարբեր երկիրներու վարչաձևեր կրնան արգելք հանդիսանալ Մայր Հայրենիք երթալ ցանկացող ուխտավորներուն։ Առարկել, թե փափուկ են ժամանակները և Հայաստան երթալով ուրիշներու կասկածը կհրավիրենք մեր վրա, ավելորդ են բոլորովին. երբ մարդ մը քաղաքականության հետ գործ չունի, որևէ բանե վախնալու չէ։ Կաթողիկոսական ընտրության, օծման, Ս. Մեռոնի օրհնության երթալով քաղաքականություն չէ որ ըրած պիտի ըլլանք, այլ՝ սոսկ մեր հայ հավատացյալի պարտականությունը կատարած՝ հանդեպ մեր Մայրենի Ս. Եկեղեցվու։

Էջմիածինը մեր Մայր Աթոռն է, մեր Սրբությունն Սրբոցը, մեր լույսն է, մեր հույսը, մեր հոգին, մեր էությունը։ Մայր Հայաստանը մեր նախնիքներու արյունով ներկված մեր Հայրենիքն է, սուրբ ու նվիրական՝ մեղի համար։ Պիտի երթանք հոն, անոր նվիրականացած հողը համբուրելու, մեր ծաղկյալ երկիրը տեսնելու, Ս. Էջմիածնի և մեր հազարամյա վանքերուն մեջ աղոթելու ու վերջապես, մեր նախնիքներու հոգիներուն հետ հաղորդվելու։

Հայությունը ցրված է աշխարհի չորս կողմը. կրնակի տարբեր երկիրներու մեջ և ենթարկված՝ տարբեր պետությանց։ Կխոսի տարբեր լեզուներ և ունի այլազան սովորություններ. կղեկավարվի տարբեր օրենքներով։ Բայց հավերժական Ս. Էջմիածնի կաթողիկեին ներքև այդ բոլոր տարբերությունները միության մը կվերածվին։ Հոն՝ Ս. Էջմիածնի կամարներուն ներքև մեր եռամեծ վարդապետներու և սուրբերու նայվածքին ներքև հայության բոլոր հոգիները մի կըլլան։ Հայ ոգիներու անբաժանականության կեդրոնը Հայաստանյայց Ս. Եկեղեցին է մշտական-գուն Ս. Էջմիածնով։ Ուրիշ ոչ մեկ զորու-

թյուն կամ հաստատություն կրնա անոր տեղը բռնել։ Ս. Էջմիածնի 1650-ամյակի հիմնարկության առթիվ ըսեր էինք. Հայաստանյայց Ս. եկեղեցին իր Մայր Աթոռ Ս. Էջմիածնով, հայ հավատացյալներու դարավոր միությունն է, հայ հոգիին թանձրացյալ մարմնացումը, անոր իսկության ստեղծագործ ճառագայթումը։ Հայաստանյայց եկեղեցին է, որ անքակտելիորեն կկապե հայությունը իր անցյալին, իր պատմության, իր ազգային ազատ զարգացման ոգիին, ու այս բոլորին փթթած իր ինքնուրույն մշակույթին, որ ըսել է իր ներկային մեջեն անշեղ իր ապագային...»

ռում ամենեին չի կրնար մոտոմ գործել։ Հայ հայրենասիրությունը քաղաքական բնույթ չունի, կամ որևէ գաղափարաբանությամբ մը կապված չէ, և չպիտի է ալ ըլլա։ Հայուն հայրենասիրությունը կվերացնե այդ բոլորը։ Հայ ժողովուրդը անասելի սիրով մը սիրած է իր Հայրենիքը, իր արյունը թափած է անոր պաշտպանության և անձեռնմխելիության համար՝ պատմական և քաղաքական ինչպայմաններու ներքև ալ գտնված ըլլա ան։ Հավերժական է Հայաստանյայց եկեղեցին և իր Մայր Աթոռը, հավերժական է Հայ Հայրենիքը, որուն սիրտին վրա հաստատված են ա-

Մի խումբ պատվիրակներ Երևանի օդանավակայանում

Հայաստանյայց եկեղեցին իր աստվածային առաքելության գործը կատարելու համար պետք է կապված ըլլա մարմնավոր Պետի մը և կեդրոնի մը։ Այդ գլուխը Ամենայն Հայոց աստվածարյալ Հայրապետն է, մեր հոգևոր Հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի հաջորդը, իսկ կեդրոնը՝ Ս. Էջմիածինն է, զոր Աստված ինք հիմնեց իր Միածին Որդիին միջոցավ 1650 տարի առաջ մշտնջենափառ Արարատի ստորոտը։ Մեր մյուս հայրապետական ու առաջնորդական աթոռները իրենց գահակալներով ու առաջնորդներով Ս. Էջմիածնի և անոր սրբազնակատար Պետին հետ կկազմեն անբակտելի և անխորտակելի միություն մը։ Անհրաժեշտ է հստակորեն շեշտել, թե այդ միությունը էապես կրոնական է ու ոգեկան, և անոր մեջ որևէ քաղաքական նկատում ու գունավո-

նոնք։ Հայը աշխարհի որ կողմն ալ ըլլա, իր հոգվույն խորեն կապված մնալու է այդ ղույդ հավերժությանը։

Այս հավատքով ապրեցան ու գործեցին մեր հայրապետներն ու առաջնորդները։ Շատ հեռուները պետք չէ երթալ ասիկա ապացուցելու համար։

Կիլիկիո վերջին կաթողիկոսները իրենց եպիսկոպոսներով միշտ ձգտած են Հայաստանյայց եկեղեցվո միության գաղափարին և ջանացած են զայն իրականացնել։ Սահակ Կաթողիկոսը իր հայրապետական անդրանիկ պատարագին մեջ հիշած է Ամենայն Հայոց Հայրապետի՝ Խրիմյան Կաթողիկոսի անունը։ Բայց պատմության մեջ առաջին անգամ էր, որ Բարգեն Կաթողիկոս՝ ջանաց Ս. Էջմիածին երթալ և ներկա ըլլալ Ամենայն Հայոց Հայ-

բապետի ընտրության և օծման։ Այս կերպով իր գերագույն փափագն էր Հայաստանյայց եկեղեցվո Աթոռներուն միջև սեր, միություն և համերաշխություն ստեղծել։ Արտավազդ սրբազան իր «Դեպի Հայաստան» հոդվածաշարքին մեջ այս առթիվ կգրե. «Մայր Աթոռ իր նոր Գահակալը պիտի ունենար Հայրենի ազատ հողի վրա ու առաջին անգամ ըլլալով Կիլիկիո Հայրապետ մը պիտի մասնակցեր Ընդհանուր Հայոց Հայրապետի ընտրության։ Աթոռակից Բարգեն կխայտար. հայրենասեր հոգևորականին լայն ճակտին, դեմքին ու լուսավոր աչքերուն մեջ կճառագայթեր հոգին բովանդակ հրճվանքը...

— Մինչև քանի մը օր պատրաստվե,— ըսավ Բարգեն Կաթողիկոս,— միասին մեկնելու համար Հայաստան։ Կիլիկիո մեր պատմության համար մեր մեկնումը մեծ ակտ մը պիտի մնա ու առաջին անգամ ըլլալով Կիլիկյան Կաթողիկոս մը պիտի նախագահե եկեղեցական համագումար-ժողովին ու օծե Ամենայն Հայոց Կաթողիկոսը...»

«Դիվանագիտական մարմիններու քիչ անդամ միայն անհասկնալի մնացող տրամադրությունները կարող են մեկ բոպեի մեջ խանգարել բոլոր ծրագիրները, ու այդպես ալ եղավ։

Բարգեն Կաթողիկոսի համար — գործածելով իր իսկ բառերը — «Ամենեն գլխավոր խնդիրն էր Հայաստանյայց եկեղեցվո պահպանությունը ամեն տեղ և ամեն գնով»։ Բարգեն Վեհը Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի՝ այն ժամանակ Նվիրակ Ս. Էջմիածնի, հետ իր տեսակցության ընթացքին հայտարարեց և շեշտեց, թե «Կիլիկիո Աթոռը կպահվի Էջմիածնի Աթոռին համար և իր բոլոր եպիսկոպոսներով հավատարիմ է Մայր Աթոռին»։ Զափազանցած չենք ըլլար ամենեին, եթե հայտարարենք, որ չենք հանդիպած հայ բարձրաստիճան եկեղեցականի մը, որ այնքան ջատագոված ըլլա խոսքով և գրչով Հայ Եկեղեցվո միասնությունը, որքան Բարգեն Ա. Կաթողիկոս Կիլիկիո։

Թե ինչ գործ կատարեց Գարեգին Կաթողիկոս Հայաստանյայց եկեղեցվո միասնությունը իրագործելու համար, ծանոթ է ամենուն։ 1945-ին ան իր եկեղեցական և աշխարհական պատգամավորներով Էջմիածին գնաց մասնակցելու Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության և ազգային-եկեղեցական համաժողովին։ Նորին Վեհափառությունը բացման նիստին մեջ հետևյալ հատկանշական հայտարարությունը ըրավ. «Այս ժողովը առաջին կարգի երևույթ է մեր պատմության մեջ. ծովեր և հեռավոր տարածություններ ոչինչ եմք համարել և եկել եմք ցույց տալու, որ մի է Հայ եկեղեցին և մի է Հայոց Հայրապետությունը»։ Անիկա իր այս հայտարարությամբ յուրաքանչյուր պատգամավորի զգացումներուն թարգմանը կհանդիսանար։

Կհիշեմ, 1945-ին Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությենեն հետո, ընթրիքին, Գարեգին Կաթողիկոս Հայ Եկեղեցվո Նվիրապետական Աթոռներու Պետերուն — Գեորգ Զ. Կաթողիկոս, Կյուրեղ Պատրիարք և Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյան — ձեռքերը սեղմեց ու սրտեռանդ մաղթեց, որ բոլոր Աթոռները սիրո, միության, համագործակցության ոգիով աճին ու զարգանան։ 1945-ի Ազգային-եկեղեցական համագումարին մեջ աճեցավ այս ոգին ու տարածվեցավ բոլոր պատգամավորներուն վրա։ Անոնք զանազան առիթներով հաճախ կրսեին. «Հայ ժողովուրդը, թե՛ Մայր Երկրի և թե՛ արտաքսահման մեջ, ըլլա միշտ միասնական, ինչպես միասնական հանդիսացավ այս մեծ Պատգամավորական ժողովը։ Պիտի ուզեինք, որ միասնականության այս հոգին արմատանար և զարգանար ազգային բոլոր մարդերու մեջ։

Հայ Եկեղեցվո միությունը շեշտվեցավ նաև նոր կանոնադրությամբ, ըստ որում Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են «Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իր եպիսկոպոսներով, Էջմիածնի ու Կոստանդնուպոլսի Պատրիարքները, Հայոց Եկեղեցու բոլոր առաջնորդները և բոլոր եպիսկոպոսները»։

Համերաշխության, համագործակցության, փոխադարձ հասկացողության, սիրո և միության գաղափարը Ամենայն Հայոց Գեորգ Զ. Կաթողիկոսի անդրանիկ կոնդակին մեջ հրատարակորեն կպարզվի։

«Ցայտնեմք զուրախութիւն Մեր և զոհունակութիւն հոգևոր եղբօր Մերում Տ. Գարեգնի շնորհազարդ Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ, որ ընդ եկեղեցական և աշխարհական պատգամաւորօք իւրովք նպաստաւոր եղև յոյժ միաբանականութեան Հայաստանեայց եկեղեցւոյ և բարձր սրամտութեան ժողովականաց և առ հասարակ յաջող վերջաւորութեան ժողովոյս ըստ ամենայն մասանց։ Զնոյն յայտնեմք և Ամենապատիւ Պատրիարքին Երուսաղէմի Տ. Կիւրղի և Տեղապահի Պատրիարքութեան Կոստանդնուպոլսի Արսլանեանցս։

Այս արտահայտության ի պատասխան Գարեգին Կաթողիկոս կգրե.

«Այս խոսքերը ընդունելով որպես առհավատչյա եղբայրական սրտագին հարաբերության, պատասխանում ենք, թե պարտականություն ենք համարում, Մեր բոլոր ուժերը, գրիչը, խոսքը, փորձառությունն ու պաշտոնի հեղինակությունը ի սպաս դնել բոլորանվեր, ընդհանուր Հայաստանյայց Եկեղեցու փառքի, պայծառության և բարոյական աղդեցության զորացման համար։

«Միասնականությունը կամենում ենք իրականացած տեսնել գիտակցական փոխադարձ հասկացողությամբ և հարգանքով կատարված պարտքերի, նպատակների և ձգտումների միության մեջ, յուրաքանչյուրը իր պարտքի և իրավունքի շրջանում։ Մենք իրրև Կիլիկիո Հայրապետական Աթոռի Գահակալ պատրաստ ենք մեր կարելին բերել, հավերժացնելու ավելի սերտ, ավելի գիտակցական և միևնույն ժամանակ ավելի շրջահայաց հարաբերություն Մայր Աթոռի հետ, առաջնորդվելով միշտ առաքյալի խոսքով, թե ոգին սպանանէ, այլ հոգին կեցուցանէ» («Հասկ», 1946, հուլիս-օգոստոս, էջ 197—198)։

Ըստ ավանդության, Հայ Եկեղեցվո մեջ Մեռոնի օրհնությունը Ս. Գրիգոր Լուսավորչեն կսկսի։ Սրբալույս Մեռոնով է որ կխորհրդանշվի Հայոց Կաթողիկոսին շնորհաշխության իրավունքը։ Իրմե՝ թեմական եպիսկոպոսներ կստանան դայն իրենց վիճակներուն մեջ գործածելու համար։ Սրբալույս Մեռոնով կկնքվին Հայաստանյայց Եկեղեցվո բոլոր զավակները։ Ու այսպես շնորհաբեր ձեթով ստեղծված միությունը հայ միասնականության ոգին մեծագույն արտահայտություններ կշանդիսանա։ Յուրաքանչյուր Կաթողիկոս իր օրհնած Մեռոնին մեջ կխառնե իր նախորդներեն օրհնված Մեռոնը, ցույց տալու համար, թե Հայոց Եկեղեցին մի է իր նվիրապետությամբ անցյալին, ներկային և ապագային մեջ։ Ինչպես և թե բոլոր նվիրապետական Աթոռներու Գահակալները անրաժանելի միություն մը կկազմեն, իրր գլուխ ունենալով Ս. Էջմիածնի Հայրապետը։

Ս. Գրիգոր Լուսավորչեն սկսյալ մինչև վերջին Կաթողիկոսով նվիրագործված նույն Մեռոնը ծառայած է հայ ժողովուրդին զավակները կնքելու և հոգեպես իրար մոտեցնելու, միացնելու։ Կմաղթենք, որ նոր Սրբալույս Մեռոնի օծությունը փոխակերպվի դերագանց ուժի ու գերագույն կյանքի ծավալելու Ս. Հոգիեն՝ հայ հոգիներուն մեջ։

Գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը. Հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ասլանյանը և աշխարհիկ պատգամավորներ Երևանի օդանավակայանում։

Հաստատիկ հայրապետական ընտրությունը առիթ պիտի ըլլա ուրեմն, որ նորեն ամբողջ հայության մեջ և բոլոր Աթոռներու միջև միասնականության և համագործակցության հոգին ավելի ուռճանա և զորանա։

Գերագույն հոգևոր խորհուրդը իմաստուն կարգագրությամբ մը որոշած է, որ Հայրապետական օծումեն ետք անմիջապես Սրբալույս Մեռոնի օրհնություն կատարվի Հայաստանյայց Եկեղեցվո ամենեն հոգեպարար արարողություններեն է Մեռոնի օրհնությունը։ Մեռոնը կխորհրդանշե հայ հոգիներու միությունը։

Երկու տարի առաջ, երբ Էջմիածին գացինք դաս տալու Հոգևոր Ճեմարանին մեջ, երջանկահիշատակ Գեորգ Զ. Կաթողիկոսը քանիցս մեզի ըսավ, որ մտադրած է մեռնօրհնեք կատարելու և այդ առթիվ կփափագի, որ ամեն երկիրներե հայ հավատացյալներու մեծ բազմություն մը Էջմիածին երթա։ Իր սրբատառ կոնդակին մեջ (21 ապրիլի 1954) ազգիս Սրբազնագույն Հայրապետը կգրե.

«Մենք հավատում ենք, որ մեր նախնյաց և մեր ներկա Սրբություն Սրբոցը՝ հայ քրիստոնյա մարդու Լուսո Տաճարը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր սրբություններով, և մեր ներկա Մայր Հայրենիքը՝ իր պատմական հուշարձաններով, որպես մագնիսական ուժ, կբերեն տարաբնակ և հեռաբնակ հայ ժողովրդի ներկայացուցիչներին ու կհամախմբեն պատմական Տաճարի շուրջը՝ Հայրենիքի կարոտն առնելու, Հայրենի երկրի անցյալ և ներկա հուշարձանները տեսնելու, նորա ներկա կուլտուրական վերելքով հիանալու, նորա տնտեսական խոշոր հառաջխաղացմամբ ոգևորվելու և իր կրոնական ծարավը հագեցնելու՝ համբուրելով իր սրբություններ ու՝ իր սրտի մոտիկ Սրբալույս Մեռոնի օրհնությունը տեսնելով՝ ոգեշնչվելու։

Դժբախտաբար Վեհափառ Հայրապետը չտեսավ իր երազին իրականացումը։ Բայց իր հոգին ի վերուստ պիտի հրճվի, երբ տեսնե բազմաթիվ ուխտավորներու երթը դեպի Ս. Էջմիածին։

Շեշտեցինք ուխտագնացության հոգևոր կողմը. բայց կա նաև նյութական մասը։

Գեորգ Կաթողիկոսը Իր նույն թվի շրջաբերականին մեջ, ուղղված «Հայրենի և արտասահմանի բոլոր թեմերինը» կրսե.

«Ս. Էջմիածինը, որպես Հայոց Եկեղեցու բարձրագույն կենտրոն, մշտապես հավատացյալ հայ ժողովրդի տնտեսական օգնությամբ է ապահովել իր կարիքները։ Այս տեսակետով ցանկալի կլիներ, որ Դուք նշնիք այն անձանց, որոնք՝ իրենց ներքին թելադրությամբ կկամենային իրենց բարոյական պարտքը կատարել հանդեպ Ս. Էջմիածնի, լինի այն դրամական նվերներով կամ շինարարությամբ։ Այսպիսիների ցուցակը պետք է վաղօրոք հաղորդել մեզ, պահանջվող տեղեկանքներով, որպեսզի ժամանակին միջնորդենք մեր բարեխնամ կառավարության առջև վիզա ստանալու և մեր հատուկ հրավերը նոցա ուղարկելու համար։ Անկախ վերոհիշյալից՝ հին ավանդական սովորությամբ Սրբալույս Մեռոնի օրհնության առթիվ կատարվելիք ընթացիկ ծախսերը հավատացյալ ժողովուրդը միշտ ինքն է ցանկացել հոգալ և այդ առթիվ դարբաս է ուղարկել։ Վատ չէ պահպանել այդ հնավանդ սովորությունը, որ հասարակական պարտքի գիտակցության արտահայտությունն է» («Էջմիածին», ապրիլ, 1954)։

Այս առթիվ պետք է դիտել տանք Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդին, թե կարգադրությունները շատ կանուխեն անհրաժեշտ էր իմացնել արտասահմանի հայությանն։ Էջմիածին եղած միջոցիս Վեհափառ Հայրապետը հատկապես թելադրած էր ինձի, որ Մեռոնօրհնության առթիվ ուխտագնացություն մը կազմակերպենք դեպի Մայր Աթոռ։ 1954 սեպտեմբերին կատարելիք Մեռոնօրհնությունը նույն տարվո ապրիլ ամսուն հրահանգած էր արդեն «Հայրենի և արտասահմանի բոլոր թեմերինը. մինչ՝ այս պարագային դեռ նոր ստացվեցավ Գերագույն Հոգևոր Խորհուրդի հրահանգը, և այս կարճ ժամանակամիջոցին մեջ արդյոք քանինե՞ր պիտի կրնան իրենց գործերը կարգադրել և Էջմիածին երթալ։ Բայց ուր որ կամք կա, հոն կա նաև իրագործում։

Վեհափառ Հայրապետը կհիշե դարբասի սովորությունը և կթելադրե, որ ուխտավորներ կատարեն իրենց պարտքը հանդեպ Ս. Էջմիածնի դրամական նվերներով կամ շինարարությամբ։

Պատգամավորներ և ուխտավորներ նկատի ունենալու են Մայր Աթոռի տնտեսական կացությունը։ Ներկայիս Էջմիածինը հասութաբեր կալվածներ չունի. սահմանափակված են անոր եկամուտները։ Մայր Աթոռը իր միաբանությամբ կկառավարվի մոմավաճառությամբ և այլ կամավոր նվերներով։ Այդ մասին նորին Ս. Օծությունը կգրե. «Մայր Աթոռը ապավինած է միայն Ս. Էջմիածնի, Երևանի երեք եկեղեցիների և Լենինականի մեր եկեղեցու մոմավաճառության արդյունքների, այլև մկրտության, լուսագնի և դանձանական դրամներից դրյացած եկամուտին։ Հետո ասաց վրա ավելցան Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցվո եկամուտները։

Երանաշնորհ Գեորգ Կաթողիկոսի գլխավոր ծրագիրն էր Ճեմարանի աշակերտներուն թիվը եռապատկել, քառապատկել։ Անշուշտ ճիշտ այս պատճառով է, որ Գերագույն Հոգևոր Խորհուրդը ոչ միայն հայրենի թեմերեն, այլև արտասահմանի թեմերեն ալ հարմար աշակերտներ կուզե, և առ այս ամենուրեք հայտարարություններ ղրկած է։ Ուսանողներու թիվը ավելցնելով պետք է կրկնապատկվի ուսուցիչներուն ալ թիվը և այս բոլորը նյութական միջոցներե կախում ունին։ Էջմիածնի վանքը ունենալու է նաև արդիական տպարան մը լման սարքվածքով կրոնական և եկեղեցական հրատարակությանց համար։ Անշուշտ նորընտիր Հայրապետը պետք է ավելցնե Էջմիածնի միաբանության թիվը և այս իսկ նյութական գոհո-

դություն կպահանջեն։ Ինչպես Անթիլիասի Դպրեվանքին և Երուսաղեմի Ժառանգավորացին համար բարերարներ ու նվիրատուներ կան, նույնպես անհրաժեշտ է, որ Մայր Աթոռին համար ալ սանապարհներ և տարեկան որոշ նվեր մը տվողներ ըլլան։ Այս պարագաները նկատի ունենալով, յուրաքանչյուր պատգամավոր և ուխտավոր իր նվերը տանելու է Մայր Աթոռ Ս. Էջմիածին Մեռոնօրհնեքի առթիվ։ Ոչ միայն պատգամավորներ և ուխտավորներ, այլ նաև թեմեր անոնց միջոցավ ղրկելու են իրենց նվերները, փոխարեն ստանալու օրհնությունը Նորընտիր Հայրապետին։

Իսկ բայոր անոնք, որոնք գործի բերումով և այլ պատճառներով չեն կրնար մեկնիլ, կրնան իրենց նվերները պացողներուն միջոցավ ղրկել։ Էջմիածինը ամբողջ հայությանն է, մեր ինքնուրույնության և գոյության խարիսխը. յուրաքանչյուր հայ, աշխարհի որ կողմն ալ գտնվի, պետք է իր լոմանները նետե անոր սրբազան դանձանակին մեջ, որպեսզի անով միշտ վառ մնա Լուսավորչի կանթեղը։

Անհրաժեշտ է, որ Հայ Եկեղեցին ունենա նոր մշակված Սահմանադրություն։ Գրեթե յուրաքանչյուր թեմ ունի իր առանձին եկեղեցական կանոնագրությունը և ըստ այնմ կկառավարվի։ Անոնցմե շատեր տեղական պայմաններու հարմարցված են. այնպես որ երբեմն այնպիսի հոդվածներ մուծված են կանոնագրության մեջ, որոնք կխախտեն Հայաստանյայց Եկեղեցվո հիմնական սկզբունքները։ Եկեղեցական գործերու մեջ աշխարհիկ տարրին ազդեցությունը շատ դդալի դարձած է, իբր թե եկեղեցականը սոսկ պաշտոնյա մը եղած ըլլար։

Երբեմն՝ կանոնագրությանց մեջ սահմանափակված են նույնիսկ Ամենայն Հայոց Հայրապետության իրավունքները, այնպես որ կարծես թեմեր կան, որոնք բոլորովին անկախ են Մայր Աթոռեն։

1932-ին Էջմիածին գումարված Ազգային-եկեղեցական ժողովը որոշեց հմուտ անձերե հատուկ հանձնախումբ մը կազմել, մշակելու համար Հայ Եկեղեցվո Սահմանադրության նախագիծ մը, հիմ ունենալով Հայաստանյայց Եկեղեցվո կանոնական և ավանդական սկզբունքները։

Այս հանձնարարությունը լիովին կատարված չէր 1945-ի Ազգային-եկեղեցական համագումարի ժամանակ։ Գեորգ Զ. Կաթողիկոս, իր Տեղակալության ժամանակ այդ նախագիծը կազմելու իրավունքը հանձնած էր նշանավոր իրավաբան Աղեքսանդր Պապովյանին, թելադրելով, որ ան հետեի Հայ Եկեղեցվո միասնականության սկզբունքին, իրեն առաջնորդ ունենալով Հայ Եկեղեցվո

Դեր. Տ. Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը (ձախից) Երևանի կայարանում դիմավորում է Ռումինահայ թեմի առաջնորդ գեր. Տ. Վազգեն Եպիսկոպոս Պալճյանին

կանոններն ու ավանդությունները։ Պապովյանի կազմած նախագիծը «Հայ Եկեղեցու կյանքին և պատմության դիտակ անձանց քննարկման բովից անցնելուց հետո» ներկայացվեցավ 1945-ի Ազգային-եկեղեցական ժողովին։ Սույն ժողովը Գեորգ Կաթողիկոսի թելադրության վրա, որոշեց որ՝ «ժամանակավորապես» գործադրվի և հաջորդ «Ազգային-եկեղեցական ժողովի կողմից վերջնականապես իմբագրվի և հաստատվի»։

Ուստի սեպտեմբերի վերջը գումարվող Ազգային-եկեղեցական ժողովը այս շատ կարևոր խնդրով ալ պետք է զբաղի։ Անհրաժեշտ է, որ Հայ Եկեղեցին ունենա իր Սահմանադրությունը հարմարցված նոր պայմաններու։

Կաթողիկոսական ընտրության առթիվ կատարվելիք Ազգային-եկեղեցական համաժողովը ներկա պայմաններու ներքև շատ օգտակար պետք է համարել մեր Եկեղեցվո

համար։ Քաղաքական դժվարի պարագաներու պատճառավ քիչ անգամ առիթ եղած է Ազգային-եկեղեցական ժողով գումարել, դրաղելու համար վարչական, ծիսական, կրոնական և վարդապետական այլ խնդիրներով։ Ոտար եկեղեցիներ հաճախակի համաժողովներ կունենան իրենց վերաբերյալ վարչական-կրոնական խնդիրներու տնօրինությանց համար։ Ժողովներ փոխադարձ հասկացողություն կստեղծեն եկեղեցականներու և մանավանդ նկեղեցվո Նվիրապետական և առաջնորդական Աթոռներու միջև։ Մեր եկեղեցին կարգադրելիք բավական վարչական ու կրոնական ծիսական խնդիրներ ունի։ Աշխարհի նոր պայմաններու բերումով Հայաստանյայց Նկեղեցին կդիմագրավի ներքին բարեկարգական անհետաձգելի հարցեր։ Ազգային-եկեղեցական համաժողովն է, որ, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, այդ խնդիրները պիտի լուծեն խորհրդակցությամբ և փոխադարձ հասկացողությամբ ու գործակցությամբ կենտրոնացյալ հեղինակության մը շնորհիվ՝ հարուցված բոլոր անպատեհությանց, դեղծումներուն և եկեղեցականներե ոմանց սանձարձակությանց վերջ կտրվի։ Ջերմորեն պիտի փափագինք, որ ո՛չ միայն կաթողիկոսական ընտրությանց առթիվ միայն ազգային-եկեղեցական ժողովներ գումարվին, այլ հաճախ, գեթ հինգ տարին անգամ մը։

Պատգամագորներ և ուխտավորներ պիտի երթան տեսնելու Ս. Էջմիածինը վերանորոգված ու ավելի գեղեցկացած։ Ի տես այս ավելի քան 1650 տարվան հնություն ունեցող նվիրական Տաճարին, պիտի լեցվին ազգային անպատում ուրախությամբ։ «Որքան նա կա, կմնա հայ ժողովուրդը, և որքան հայ ժողովուրդը կա, նա կմնա։ Մայր Հայրենիք գացող հայորդիներ պիտի տեսնեն փյունիկի նման հարություն առած վերածնյալ Հայրենի երկիրը։ Պիտի դիտեն անոր տնտեսական, իմացական, շինարարական կյանքի մեծ հառաջդիմությունները — Մատենադարան, Ձեռագրատուն, Թանգարան, հաժալսարան, երաժշտական և նկարչական դպրոցներ, մասնագիտական վարժարաններ, օպերա, պետական հաստատություններ, գործարաններ և այլն։ Այս բոլորը հիացում պիտի ազդեն իրենց վրա։ Անոնք պիտի տեսնեն Երևանը, Լենինականը, Կիրովականը հայկական հարազատ ճարտարապետությամբ վերակառուցված, ընդարձակված, շքեղազարդված։ Պիտի տեսնեն նոր ավաններ—Նոր-Կիլիկիա, Նոր-Արաբկիր, Նոր Սեբաստիա, Նոր-Մալաթիա, Նուպարաշեն և այլն և այլն։

Պիտի տեսնեն մեր արևահամ Հայրենիքի հրաշափառ տեսարանները, վսեմական Արարատը իր հավերժական ճերմակ ղուլպ գմբեթներով, սիրուն Արագածը, որուն վերև Ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղը միշտ կպլպլա, Արարատյան դաշտը իր շքեղափառ անդորրությանը մեջ, աննման Սևանը իր թովիչ, բանաստեղծական տեսարաններով, Դիլիջանը իր մշտագալար անտառներով և գլղլացող ագռեակներով։

Պիտի տեսնեն մեր հազարամյա վանքերը, անոնց սրբացած, հավերժացած խորաններով ու որմերով—Ս. Գայանեն, Ս. Հռիփսիմեն, Ս. Շողակաթը, Գեղարդը, Օշականը, Հաղարծինը, Գոշավանքը, Սանահինն ու Հաղբատը, Բջնին, հրաշակերտ Զվարթնոցը, իր մշտախոս՝ առինքնող ավերակներով։

Բայց ո՞րը հիշեմ։ Հայաստանի յուրաքանչյուր թիզ հողը սուրբ է մեզի համար, յուրաքանչյուր քարը ունի սրբազան պատմություն մը։ Ամենուրեք մեր հայրերուն, սուրբերուն ու նահատակներուն, մարտիրոսներուն և հերոսներուն, վարդապետներուն և հայրապետներուն շունչը կհածի, կդղաս զայն, կը հրճվիս ու կապրիս անով։

Ո՜ն ուրեմն, սիրելի՝ հայորդի, ուխտի երթանք Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք։

(Թեյրուր, «ԱՐԱՐԱՏ» օրաթերթ, 4 սեպտեմբերի 1955 թ.)

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԲՈՒՔՐԵՇ.— Հինգշաբթի 2 հունիսին, «Ստեփան Շահումյանի» Մշակույթի տան հանդիսասրահին մեջ խոսեցավ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս, նյութ ունենալով «Հայաստանյայց Եկեղեցին Սովետական Միության մեջ»։

Սրբազան հայրը պատմական ակնարկ մը նետելե հետո Հայաստանյայց Եկեղեցվո ստեղծման և կազմակերպման առաջին շրջանին վրա, ներկայացուց Հայ Եկեղեցվո իրավական կացությունը 19-րդ դարու ընթացքին, երբ ան զեկավարվեցավ Արևելյան Հայաստանի մեջ, ցարական իշխանության օրով՝ 1836-ին հռչակված Պոլոժենիայով, իսկ Թրքահայաստանի մեջ՝ 1863-ի Ազգային Սահմանադրությամբ։

«Իր պետական անկախությունը կորսնցնելե հետո,— ըսավ սրբազանը,— մեր ժողովուրդը դարեր շարունակ ապրեցավ կրոնական համայնքի մը իրավական շատ նեղ սահմաններուն մեջ, միշտ հալածված և հաճախ նահատակված՝ ցարական լինչիկներու և արյունարբու սուլթաններու և փաշաներու մտրակին տակ։

Այսօր, Սովետական Հայաստանի ստեղծումով, վերածնած հայ ժողովուրդը ինքնավար դարձած է պետականության պայմաններու տակ, Սովետական հանրապետություններու դաշնակցային միության մեջ։ Որով իրավական նոր վիճակ և կյանքի նոր պայմաններ ստեղծված են մեր Եկեղեցվո համար, հայրենի պետության մեջ։

Այսօր պետությունն է, որ ստանձնած է ազգին ու Հայրենիքին քաղաքական, ընկերային, տնտեսական, կրթական, մշակութային կյանքի ամբողջ զեկավարությունն ու պատասխանատվությունը, և պարզ է, թե տարբեր չէր կրնար ըլլալ։

Հայաստանյայց Եկեղեցին այսօր կոչված է ծառայելու իր հիմնական, բուն նպատակին, այն է՝ հայ հավատացյալներու հոգևոր կյանքի մշակման և Հայ Եկեղեցվո վերաշինության ու կազմակերպման, Ս. Էջմիածնի դարավոր Մայր Աթոռը ունենալով իբրև կենդրոն և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ իբրև հոգևոր գլխավոր Պետ։

Վազգեն սրբազան ներկայացնելե հետո լրիվ պատկերը Հայ Եկեղեցվո այսօրվա կազմակերպության, իր նվիրապետական Աթոռներով և թեմերով, կանգ առավ Սովետական Միության սահմաններեն ներս գործող հայ եկեղեցիներու կյանքին վրա. եկեղեցիներ, զորս սրբազանը անձամբ այցելած է իր ճանապարհորդությանց ընթացքին թե՝ Հայաստան, թե՝ Վրաստան, Ադրբեջան և Հյուսիսային Կովկաս։

Սրբազանը շարունակեց. «Հայ Եկեղեցվո իրավական գոյավիճակը և կրոնական կյան-

քի արտահայտություններն ու կազմակերպությունը ապահովված և ճշտված են Սովետական Միության Սահմանադրությամբ և օրենքներու ուժով, Սովետական Հայաստանի Սինիստրներու Խորհուրդին կից կգործէ Դավանությանց խորհուրդ մը, որուն նախագահը— նախարարի իրավասություններով— կպահէ կապը Պետության և Եկեղեցական իշխանության միջև, նպատակ ունենալով խղճի ազատության և կրոնական կյանքի անկաշկանդ կազմակերպման ապահովումը և կենսագործումը Եկեղեցական իշխանությանց կողմէ ներկայացված ծրագիրներու և առաջարկներու, օրենքի սահմաններուն մեջ։

Հայրենի պետությունը այսօր կապահովէ ոչ միայն կրոնական կյանքի արտահայտություններու ազատությունն ու բնականոն ընթացքը, այլև բարյացակամ վերաբերմունք մը ունի դեպի Հայաստանյայց Եկեղեցին՝ վերաշինելով անոր պատմական տաճարները։

Ս. Էջմիածինը իբրև պատմական կրոնական կեդրոնը հայ ազգին, այսօր ալ կենդանի վեմն ու խորհրդանիշն է Հայ Եկեղեցվո և ի սփյուռս աշխարհի ցրված հավատացյալներու միասնականության։

Սփյուռքի Հայ Եկեղեցին և հավատացյալները իրենց հոգևոր միությունը և ներդաշնակությունը կրնան ամբողջ ու անաղարտ պահել ու պահպանել միմիայն իրենց հավատարմությամբը և նվիրումովը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին։ Կողմնակի և անցողական պարագաներ, որոնք կրնան ստեղծվիլ Սփյուռքի մեջ, որոշ տեղեր, իբրև հետևանք միջազգային քաղաքական կյանքի իրադարձությանց, չեն կրնար և պետք չէ որևէ ազդեցություն գործեն մեր հիմնական կեցվածքին վրա, մեր մտածումներուն և զգացումներուն վրա, ինչ կվերաբերի Հայ Եկեղեցվո միասնականության գիտակցության և պաշտամունքին դեպի հայ հավատացյալներու Սրբություն Սրբոց՝ Էջմիածինը։

Մեր սիրո և պաշտամունքի զգացումը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, առավել ևս կխորանա մեր գիտակցության մեջ, տեսնելով այն հայրենասիրական ոգին, որ կճառագայթէ Միածնաէջ Մայր Աթոռեն։

Ս. Էջմիածինը, հարազատ ու ջերմ օջախ հայրենասիրական տեսիլքներու և իղձերու, այսօր խոր մխիթարության զգացումով գեղուն՝ ցնծագին հրճվանքով կտեսնէ ու կապրի մեր Մայր Հայրենիքի վերաշինությունն ու լուսաշող վերելքը։

Եվ իբրև քրիստոսավանդ խաղաղության և հայրենաշունչ քարոզության հոգևոր կեդրոն, Ս. Էջմիածինը ջերմ աղոթող է ի խնդիր աշխարհի խաղաղության և ժողովուրդներու տևական բարեկամության, ազգերու համերաշխության, այն պայծառ գիտակցությամբ, թե Հայ Եկեղեցին դարեր շարունակ բազում արհավիրքներու փորձանքներեն փրկված, իր շինարար ու ծաղկյալ կյանքը պիտի կարողանա շարունակել խաղաղության և միջազգային համերաշխ մթնոլորտին մեջ, միայն վերածնված Սովետական Հայաստանի մեջ։

(Բուխարեստ, ՀՈՐ ԿԱՌԼՈՍ)



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1955 թվականի օգոստոսի 17-ին, շորեքշաբթի օրը, հրավիրվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի արտակարգ նիստը։ Ներկա էին գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոսանյանը, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, պարոնայք Ստեփան Կամսարականը, Մինաս Մինասյանն ու մարտիրոս Տեր-Ստեփանյանը։ Նիստին խորհրդակցական ձայնով մասնակցում էին նաև բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և պրոֆ.-գոկտ. Աշոտ Աբրահամյանը։

Նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը, նիստը բացված հայտարարելուց հետո, հայտնում է, որ հայրապետական ընտրության համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն ավարտված են և անհրաժեշտ է.

ա) Նշանակել ժողովի հրավիրման ճշգրիտ ժամանակը և մշակել Ազգային-եկեղեցական ժողովի աշխատանքների և եպիսկոպոսական ձեռնադրության ու Սրբալույս Մեռոնի օրհնության արարողության կարգը։

բ) Ճշտել արտասահմանյան և միութենական թեմերի պատգամավորների թիվը։

գ) Ընտրել Կենտրոնական կազմակերպիչ հանձնաժողով՝ գլխավորելու Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրման աշխատանքները։

դ) Ապահովել արտասահմանյան պատգամավորների Ս. Էջմիածին գալու վիզաները։

ե) Արտասահմանյան թեմերին հեռագրով և նամակով հաղորդել Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստի բոլոր որոշումները։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը նշված հարցերի մասին ընդունեց հետևյալ որոշումները.

Առաջին հարցի մասին.

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, լսելով Տ. Վահան արքեպիսկոպոսի բացատրությունները, միաձայնությամբ հաստատեց Ազգային-եկեղեցական ժողովի հրավիրման, կաթողիկոսական ընտրության և օծման, եպիսկոպոսական ձեռնադրության և Սրբալույս Մեռոնի օրհնության հետևյալ կարգը.

1. Սեպտեմբերի 23—25-ը՝ պատգամավորների, հյուրերի և ուխտավորների ժամանումը Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

2. Սեպտեմբերի 26-ին՝ եպիսկոպոսական ժողով։

3. Սեպտեմբերի 27—30-ը՝ Ազգային-եկեղեցական ժողովի նիստերն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծումը։

5. Հոկտեմբերի 4-ին՝ եպիսկոպոսական ձեռնադրություն։

6. Հոկտեմբերի 5—6-ը՝ Ազգային-եկեղեցական ժողովի վերջին նիստը և գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների ընտրությունը։

7. Հոկտեմբերի 8-ին, Սրբոց Թարգմանչաց տոնին՝ Սրբալույս Մեռոնի օրհնությունը։

8. Ժողովի ընդմիջումներին և ազատ օրերին կազմակերպվելու է շրջագայություն դեպի պատմական հուշարձանները և մեր ծաղկող Հայրենիքի տեսարժան վայրերը։

9. Հոկտեմբերի 10—12-ին՝ պատգամավորների, հյուրերի և ուխտավորների մեկնումը։

Երկրորդ հարցի մասին.

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, լսելուց հետո գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի զեկուցումը արտասահմանյան և միութենական թեմերում ապրող հայաստացյալների թվի մասին, հաստատեց Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների թիվը ճշտող հետևյալ ցուցակը.

	[illegible]	[illegible]	[illegible]
Կիլիկիա (իր թեմերով)	6	7	13
Երուսաղեմ	5	1	6
Կոստանդնուպոլիս	3	4	7
Հյուսիսային Ամերիկա	3	4	7
Հարավային Ամերիկա	1	3	4
Կալիֆորնիա	2	2	4
Եգիպտոս	1	2	3
Բուլղարիա	1	1	2
Ռումինիա	1	1	2
Իրանա-Հնդկաստան	1	2	3
Թավրիզ	1	2	3
Թեհրան	1	2	3
Հունաստան	1	1	2
Եվրոպա	1	4	5
Իրաք	1	1	2
Լոնդոն	1	1	2
Մարսել	1	1	2
Էջմիածին	3	3	6
Արարատյան թեմ	1	22	23
Վրաստան	1	17	18
Շիրակ	2	16	18
Նոր-Նախիջևան (Ռոստով)	1	6	7
Բաքու	1	6	7
Հյուսիսային Կովկաս	1	7	8
Լեռնային Ղարաբաղ	1	7	8
Կիրովաբաղ	1	4	5
Ընդամենը՝	43	127	170

Երրորդ ճարցի մասին.

Գերագույն Հոգևոր խորհուրդը միաձայնությամբ հաստատեց Կենտրոնական կազմակերպիչ հանձնաժողովի ընտրությունը՝ հետևյալ կազմով.

Գեր. Տ. Վահան արքեպիսկ. Կոստանյան՝ նախագահ
Գեր. Տ. Եղիշե արքեպիսկ. Տերտերյան
Գեր. Տ. Սահակ եպիսկ. Տեր-Հովհաննիսյան
Գեր. Տ. Վազգեն եպիսկ. Պալճյան
Գերապատիվ Տ. Գեորգ ծայր. վրդ. Վաթյան
Պ. Ավետիք Բսահակյան
Պ. Ստեփան Կամսարական
Պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյան

Կազմակերպիչ հանձնաժողովի աշխատանքներին օժանդակելու համար որոշվեց հանձնաժողովի կազմը լրացնել հետևյալներով.

Տ. Կոմիտաս վրդ. Տեր-Ստեփանյան
Տ. Պարգև աբեղա Ավետիսյան
Տ. Վահան աբեղա Գալամդարյան
Տ. Հայրիկ աբեղա Գեորգյան
Տ. Եղիշե աբեղա Սարգսյան
Տ. Մուշեղ աբեղա Պետիկյան
Պ. Հմայակ Սեդրակյան

Չորրորդ ճարցի մասին.

Գերագույն Հոգևոր խորհուրդը որոշեց հեռագրով դիմել Կիլիկիո Կաթողիկոսարանին. Պատրիարքարաններին և արտասահմանի թեմական առաջնորդներին ու խնդրել հայտնել ընտրված պատգամավորների անունները, հայրանունները և ազգանունները, որոնք ներկայացնել Հայրենի բարեխնամ կառավարության և խնդրել տնորինելու վիզաների ստացումը։

Հինգերորդ ճարցի մասին.

Գերագույն Հոգևոր խորհուրդը միաձայնությամբ հանձնարարում է նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանին՝ խմբագրել համապատասխան հեռագրեր և նամակ և հաղորդել սույն նիստի բոլոր որոշումները արտասահմանյան թեմերին և թեմական առաջնորդներին։

Սույն որոշումները հրատարակել «Էջմիածին» ամսագրում։

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՅՑԵԼՈՂՆԵՐ

Մայր Տաճարը, որպես հոգեկան ամենահզոր մագնիս, առինքնում է Սովետական Միության ռեսպուբլիկաներից և արտասահմանից Հայաստան այցելող ամեն հասակի, սեռի և աստիճանի էքսկուրսանտներին։ Նրանք ծանոթանում են քրիստոնեության ամենահին ազոթատեղին և հայկական ճարտարապետության հրաշալի կոթողներից մեկը եղող Մայր Տաճարի պատմության և հիանում են նրա վերանորոգումից հետո զգեցած սքանչելի գեղեցկությամբ։ Բացի Սովետական Միության երկրներից եկած ստվարաթիվ այցելուներից, սեպտեմբերի 4-ին Մայր Տաճարն այցելեցին Ֆրանսիական և Դեմոկրատական Գերմանիայի պատվիրակությունները, որոնք շնորհակալություն հայտնեցին սիրալիր ընդունելության և պատմական արժեք ունեցող Մայր Տաճարի մասին տրված մանրամասն բացատրությունների համար։

ԱԲԵՂԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 7-ին դպրության և 8-ին սարկավագության աստիճաններն ստանալուց հետո, սեպտեմբերի 10-ին կուսակրոն քահանա ձեռնադրվեց և երեկոյան վեղար ստացավ քնիկ կարնեցի (Կեսարիա, Թյուրքիա) Դավիթ Թաշիրյանը, ձեռամբ ավագ լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տ. Հովհաննիսյանի։ Նորընծան կոչվեց Տ. Մաշտոց աբեղա։

ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԸ

Սեպտեմբերի 11-ին, Խաչվերացի տոնի առթիվ, երկսեռ հավատացյալների բազմությամբ լցված էր Ս. Հռիփսիմեի տաճարը։ Պատարագիչն էր ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։ Արարողության ներկա էր նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։

Երեկոյան, ըստ հայրենի ավանդական սովորության, կազմվեց Խաչվերացի թափորը Ս. Հռիփսիմեի տաճարի շուրջը։ Հոգևորականների և հավատացյալների մասնակցությամբ կազմված խաչի թափորի հանդիսադրողն ու առաջնորդողն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։

ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ՇԻՐԻՄԸ

Մայր Տաճարի ավագ դանգակատան հարավում հանգչող Հայրենյաց պաշտպան Ներսես Աշտարակեցի և Հայոց Հայրիկ Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսների շիրիմների կողքին է տեղավորված երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի շիրիմը, որի վրա դեռևս չեղած տապանաքարի բացումը կատարվեց սեպտեմբերի 24-ին, Ս. Գևորգի տոնի օրը։ Հավարտ պատարագի հոգևորականներից և հավատացյալներից բաղկացած ստվար թափորը շրջապատեց հոգելույս Հայրապետի շիրիմը, որը ծածկված էր սպիտակ քողով, նորին Վեհափառության դիմանկարը կրող ծաղկեպսակով և թարմ ծաղիկներով։

Սահակ սրբազանը հուզիչ քարոզով բացատրեց լուսահոգի Հայրապետի կյանքի ու գործունեության կարևորագույն գծերը, ապա վերցրեց շիրիմը ծածկող բոզը, որի տակից երևաց սև մարմարե տապանաքարը հետևյալ արձանագրությամբ.

Գ Է Ո Ր Գ Զ.

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ծնեալ 12-ն Նոյեմբերի 1868 ամի
Վախճանեալ 19-ն մայիսի 1954 ամի

Կատարվեց հաղեհանգստյան պաշտոն։ Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պսակ վարդապետը երգեց «Ահեղ խորհուրդդ»։

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ

Սեպտեմբերի 25-ին, Մայր Տաճարում, եպիսկոպոսական պատարագ մատուցեց Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 23-ից սկսյալ Ս. Էջմիածին են ժամանում Ազգային-եկեղեցական ժողովի ինչպես սովետական երկրների, նույնպես արտասահմանյան երկրների՝ Հյուսիսային Ամերիկայի, Հարավային Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Բուլգարիայի, Լիբանանի, Սիրիայի, Ռումինիայի, Պաղեստինի (Երուսաղեմ), Եգիպտոսի, Իրանա-Հնդկաստանի պատգամավորներն ու ուխտավորները։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության և օծման կապակցությամբ Ս. Էջմիածին են ժամանել նաև Ռուսաց Պրավոսլավ եկեղեցու Պաարիարքի ներկայացուցիչ գերաշնորհ Տ. Պիտիրիմ միտրոպոլիտը, Պսկովի Պատրիարքի ներկայացուցիչ Բաթումիի միտրոպոլիտ Տ. Եփրեմը՝ ուղեկից հոգևորականների հետ։

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Նախատեսված թվականից երկու օր հապաղումով, սեպտեմբերի 28-ին, Վեհարանի մեծ դահլիճում գումարվեց եպիսկոպոսական ժողով, որտեղ հաստատվեց Ազգային-եկեղեցական ժողովի աշխատանքների կարգը։

Իսկ սեպտեմբերի 29-ին, Հոգևոր Ճեմարանի մեծ դահլիճում գումարվեց Ազգային-եկեղեցական ժողովի առաջին նիստը։ Բացումը կատարեց գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը՝ «Հայր մերով» և «Զգործս ձեռաց մերոց մարթանքով» երկիցս հոտնկայս մեծարվեց անմոռանալի հիշատակը հանգուցյալ Գեորգ Զ. Կաթողիկոսի, որի սև ժապավենով եզերված մեծագիր լուսանկարը դրավում էր սրահի ճակատի կենտրոնը։

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ամենապատիվ Ալեքսիի ողջույնի ուղերձ կարդաց Բելոռուսիայի միտրոպոլիտ Պիտիրիմ սրբազանը և բեղմնավոր աշխատանք ու հաջողություն մաղթեց Ազգային-եկեղեցական ժողովին։

Ժողովում ընտրվեց նախագահություն, ատենապետություն, քարտուղարություն և խմբագրական մարմին։ Ապա Վահան արքեպիսկոպոսը կարդաց զեկուցում Գերագույն Հոգևոր Խորհրդի գործունեության մասին, որը դտնվեց գնահատության արժանի։

ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Համաձայն Ազգային-եկեղեցական ժողովի առաջին նիստի որոշման, սեպտեմբերի 30-ին, Մայր Տաճարում, Իշման սեղանի վրա մատուցվեց սուրբ պատարագ, ներկայությամբ բոլոր պատգամավորների, ուխտավորների և ստվարաթիվ հավատացյալների։ Պատարագիչն էր Եգիպտոսի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը։ Հավարտ պատարագի, հանդուցյալ Հայրապետի համար կատարվեց հոգեհանգստյան պաշտոն։ Խոսք առավ Կիլիկիայի Կաթողիկոսության ներկայացուցիչ-պատգամավոր գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը և դրվատեց հանդուցյալ հայրապետի հայրենասիրությունը։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԹՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 30-ին, հետմիջօրեին, Հոգեվոր ճեմարանի դահլիճում կայացավ Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստը՝ օրակարգ ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը։

Գերազանցորեն համերաշխ և միասնական մթնոլորտում կատարված կարծիքների փոխանակությունից հետո պատգամավորների խափորն ուղղվեց դեպի Մայր Տաճար, որտեղ դոնփակ և գաղտնի քվեարկությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Ռումինահայ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հազգեն եպիսկոպոս Պալճյանը։

Մայր Տաճարի զանգակների ուրախ զողանջներով նորընտիր Վեհափառը առաջնորդվեց Վեհարան։

Վերացվեց մեկ ու կես տարի Լուսավորչի Գահը շրջապատող սև քողը։ Ցնծացին Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու համայն հայ ժողովուրդը։

Տերը անսասան թող պահե Ամենայն Հայոց Հայրապետությունը։

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

(Տեսակցություն Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի ավագ գիտական աշխատակից Ալ. Սահինյանի հետ)

ՀԱՐՑՈՒՄ.— Որքա՞ն ճիշտ են մեր հին մատենագիրների տեղեկությունները Ս. Էջմիածնի Տաճարի մասին։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Էջմիածնի Մայր Տաճարը հանդիսանում է հայկական ճարտարապետության զարգացման ընթացքը ցույց տվող հանգուցային կոթողներից մեկը։ Նա իր վրա է բևեռել ոչ միայն վերջին դարերում հայ ճարտարապետության պատմության հարցերով հետաքրքրվող հայրենի և օտար գրեթե բոլոր հետազոտողների, այլև դարերի ընդերքից ելնող հայ շատ մատենագիրների ուշադրությունը։

Ինչպես հայտնի է, հնագույն տեղեկությունները հայտնում են Ագաթանգեղոսը և Ղազար Փարպեցին։ Ագաթանգեղոսի մոտ հիշատակված ավանդության համաձայն, Մայր Տաճարի նախնական ձևի կառուցումը կատարվել է Գրիգոր Լուսավորչի կողմից, քրիստոնեական կրոնը Հայաստանում պետական հռչակվելու ժամանակ (301 թ.)։

Ղազար Փարպեցին հայտնում է, որ այն «...հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց։ քաջ զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան»։ Նշանակում է, մոտ երկու դար հետո Մայր Տաճարի հորինվածքը, իրրև քրիստոնեական պաշտամունքի անդրանիկ կառուցվածքի ձև, այլևս չի բավարարում ժամանակի պահանջներին և 5-րդ դարի վերջին քառորդում (483 թ.) հիմնովին վերակառուցվում է։

Այս ուշադրավ տեղեկությունները (ինչպես և հետագա ժամանակաշրջանի մյուս պատմիչների Տաճարի վերակառուցումներին վերաբերող վկայությունները) հաստատվում են հուշարձանի վերջերս կատարված վերանորոգման աշխատանքներին զուգընթաց պեղումների նյութերով։

Պարզվում է, որ Մայր Տաճարի գմբեթակիր մույթերից յուրաքանչյուրի տակ (այժմյան սալահատակից ներքև) գոյություն ունեն տարբեր չափերի և ոճական տարբեր մշակում ունեցող միմյանց վրա դրված երկուական խարիսխներ։

Առաջին խարիսխները վերին խարիսխների համեմատությամբ ունեն առավել պարզ և ճիշտ միանման մշակումներ (պրոֆիլներ)։ Նրանց արևելյան, արևմտյան և դեպի գմբեթակիր տարածությունն ուղղված ճակատների լայնությունները միմյանց հավասար են և ունեն բավականին մեծ չափեր։ Իսկ դեպի արտաքին (հյուսիսային և հարավային) պատերը ուղղված ճակատները զգալիորեն նեղանում են։

Երկրորդ խարիսխները, տարբերվելով առաջիններից, ունեն միևնույն բնույթի, բայց զանազան մշակումներ (պրոֆիլներ)։ Խարիսխներից յուրաքանչյուրի երկու ճակատը, որոնք ուղղված են դեպի գմբեթակիր տարա-

ծությունը, ունեն առաջին խարիսխներին համապատասխան մեծ լայնություններ, իսկ մյուս երկուսը, որոնք ազատ են եղել գմբեթի ծանրությունը կրելուց, անհամեմատ շատ նեղ են։ Կասկածից վեր է, որ վերին խարիսխները գմբեթակիր հորինվածքի խարիսխներ են, որոնց մույթերի երկու ճակատներից սկզբնավորվել են գմբեթի ծանրությունը կրելու ընդունակ՝ մեծ լայնության կամարներ (գմբեթակիր)։ Իսկ երկու ճակատներից սկսել են թաղերի համեմատաբար նվազ ծանրություններին համապատասխան, ավելի փոքր լայնությունների կամարներ (թաղակիր)։

Ինչպես նշվեց, առաջին խարիսխների երեք ճակատները միմյանց հավասար են։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ դրանց վրա հանգչող մույթերի այդ երեք ճակատների համար էլ ի նկատի են ունեցվել միևնույն ծանրությունը կրող միմյանց հավասար կամարները։ Այստեղ գմբեթակիր կամարներ, հետևապես և գմբեթ չեն եղել։ Ուրեմն առաջին խարիսխների մույթերից սկզբնավորվել են միայն թաղակիր կամարներ։

Ճիշտ համանման ձևի մույթեր ու համանման մշակման խարիսխներ գոյություն ունեն քրիստոնեական վաղ շրջանի Հայաստանի եռանավ կառուցվածքներում (Քասաղ, Աշտարակ, Դվին և այլն)։ Նշանակում է առաջին խարիսխները, ինչպես իրենց կառուցվածքի ձևով, այնպես էլ մշակման ընույթով (պրոֆիլներով) նման են քրիստոնեական վաղ շրջանի կառուցվածքների ճարտարապետական համանման մանրամասներին և ամենայն հավանականությամբ քրիստոնեական պաշտամունքի Հայաստանի անդրանիկ կառուցվածքների ժամանակաշրջանի արգասիք են։

Հետևապես առաջին խարիսխներին համապատասխան շենքն է, որը պետք է ունենար Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի ուղղանկյուն պարզ կառուցվածքների հորինվածքը և ըստ երևույթին հիմնված լիներ Ագաթանգեղոսի մոտ հիշատակված ավանդության համապատասխան՝ քրիստոնեական կրոնի ընդունման սկզբնական շրջանում (301 թ.)։

Երկրորդ խարիսխների մշակումը՝ պրոֆիլների ձևը հար և նման է ինչպես Քասաղի, Աշտարակի սկզբնական կառուցվածքներին հետագայում (ամենայն հավանականությամբ 5-րդ դարում) ավելացրած մասերի (աբսիդի, մույթերի) խարիսխների, այնպես է, 5-րդ դարի վերջերին կառուցված Բոյնիսի Սիոնի մույթերի խարիսխների մշակումներին։ Ակնհայտ է, որ երբ երկրորդ խարիսխները և նրանց համապատասխան շենքը սկսել են կառուցել, նախորդը ամբողջովին քանդել են, թողնելով միայն խարիսխները։ Փաստորեն նոր շենքը կառուցողը նախորդը հիմնովին վերաշինել է, այսինքն տեղի է ունեցել ճիշտ և ճիշտ այնպիսի վերակառուցում, ինչի մասին հաղորդում է պատմիչը։ Ուրեմն երկրորդ կառուցվածքից պահպանված մանրամասների ոճական առանձնահատկությունները համապատասխանում են 5-րդ դարի կառուցվածքների ճարտարապետական համանման ձևերի մշակումներին, իսկ վերակառուցման ակնառու պատկերը ճշտությամբ համապատասխանում է Ղազար Փարպեցու վկայությանը։

Այսպիսով մի կողմից ստույգ փաստ է դառնում 5-րդ դարում էջմիածնում և հետևապես և Հայաստանում կենտրոնագմբեթ հորինվածքի գոյությունը, որից պահպանվել են բացի հիշյալ խարիսխներից, նաև համապատասխան մույթեր, մույթերի հենակներից մի քանիսը, գմբեթակիր կամարները և հավանաբար, թեկուզ մեծ վերանորոգությունների ենթարկված, արտաքին պատերը։ Իսկ մյուս կողմից վավերացվում է պատմիչի վկայության իսկությունը։

Ընդ որում Վահան Մամիկոնյանի կառուցվածքը, ի տարբերություն բազմավաստակ գիտնական Թորոս Թորամանյանի պատկերած վերակազմության նախագծի, չի ունեցել շենքի չորս անկյուններում ավանդատներ։ Գմբեթակիր հորինվածքը խարսխված է եղել չորս անջատ կանգնած մույթերի վրա։ Թե հատակագծային ինչպիսի ճշգրիտ պատկեր կարող էր ունեցած լինել Վահան Մամիկոնյանի կառուցվածքը (արտաքինից ուղղանկյուն, թե՞ խաչաձև), հավանաբար հնարավոր կլինի պարզել պեղումներից ստացված նյութերի մշակման ընթացքում։

ՀԱՐՑՈՒՄ.— Որքա՞ն հետք մնացե՞լ է լուսավորչահիմն Տաճարից։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Տաճարի նախնական կառուցվածքի մանրամասներից առայժմ մեզ հայտնի են չորս մույթերի խարիսխները և նրանց համապատասխան հիմքերը։ Հետագա ուսումնասիրությունները ըստ երևույթին կտան նաև նոր նյութեր։

ՀԱՐՑՈՒՄ.— Ո՞րն է եղել Մայր Տաճարի նախնական ձևը. արդյո՞ք արտաքին աբսիդներ ունեցել է նա։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Մայր Տաճարը անշուշտ սկզբում ունեցել է մի պարզ ուղղանկյուն կառուցվածք։ Պահպանված խարիսխների անհամեմատ նեղ չափերից հետևում է, որ այն պետք է եղած լինի Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի կառուցվածքների խոշորագույններից մեկը (առայժմ մեզ հայտնիներից

ամենախոշորը)։ Իսկ կոնկրետ չափերի մասին առայժմ դժվար է որևէ ստույգ բան ասել։

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, արտաքին աբսիդները (խոսքը հյուսիսային, հարավային և արևմտյան աբսիդների մասին է), ժամանակակից չեն Մայր Տաճարի նախնական ձևին։ Արևելյան աբսիդի շուրջը հնարավոր չեղավ անհրաժեշտ հետազոտություն կազմակերպել, որի պատճառով նրա կառուցման ժամանակի մասին որոշակի բան ասել հնարավոր չէ։

ՀԱՐՑՈՒՄ.— Ի՞նչ խորության մեջ են Տաճարի հիմքերը և ի՞նչ տվյալներ կան նրանց կապակցությամբ։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Տաճարի հիմքերն ունեն 0,65—0,70 մետր բարձրություններ, որոնք իհարկե շատ ցածր են նման խոշոր կառուցվածքի համար։ Սակայն ամբողջ հուշարձանը դրված է համատարած ամենայն հավանականությամբ խճաշերտի հարթակի վրա։ Խճաշերտը իրենից ներկայացնում է մանր գետաքարեր, վերին շերտում կավահողի հետ, իսկ ներքևի շերտում՝ ավազի հետ։ Խճաշերտի խորությունը ստուգելու համար փորեցինք հիմքերի ներքևի եզրից դեպի ցած 1,27 մետր, խճաշերտը դեռևս շարունակվում էր. միայն ներքևի շերտում ավազը սկսեց աստիճանաբար խոնավանալ։

ՀԱՐՑՈՒՄ.— Ներկայումս կատարվող շինարարական աշխատանքների ժամանակ, Տաճարի պատերի վրա կամ հողի տակ, պատմական արժեք ունեցող հայտնաբերումներ եղե՞լ են։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Արևելյան աբսիդի արտաքին պատի կողմից (թանգարանի երկրորդ սենյակի մեջ) բացվեցին սկզբնական ստելոբատի մնացորդները, որը ըստ նախնական հաշիվների ունեցել է յոթը աստիճան։

Առաջին խարիսխների ներքևի հորիզոնի ուղղությամբ հայտնաբերվեցին կղմինդրի շատ բեկորներ, որոնք հավանաբար պատկանել են Տաճարի նախնական կառուցվածքի ծածկին։ Կղմինդրի բեկորներ գտնվում էին նաև երկրորդ խարիսխի հորիզոնին հավասար. ըստ երևույթին Վահան Մամիկոնյանի շինարարը նույնպես ունեցել է կղմինդրով ծածկ։ Գտնվեցին կերամիկայի շատ բեկորներ հելլենիստական վաղ և ուշ միջնադարի ժամանակաշրջանից։

Առաջին շենքի հիմքերի հորիզոնի ուղղությամբ գտնվեցին խճանկարի միայն մեկ բեկոր գունավոր ապակուց ոսկեզոծ երեսով և հելլենիստական շրջանի ապակու բեկորներ։

Բացվեցին առաջին խարիսխների հիմքերից բացի հնագույն կառուցվածքների հիմքերի նաև այլ մնացորդներ, որոնք թե ի՞նչ կառուցվածքների են պատկանել — առ այժմ դժվար է ստույգ ասել։

ՀԱՐՑՈՒՄ.— Ի՞նչ է Ձեր անձնական կարծիքը Մայր Տաճարի ճարտարապետական կառուցվածքի մասին։

ՊԱՏԱՍԽԱՆ.— Մայր Տաճարի կառուցվածքը ակնառու կերպով ցույց է տալիս հայկական ճարտարապետության զարգացման հանգուցային մի քանի շրջանները և դրանով իսկ բացառիկ տեղ է գրավում Հայաստանի ճարտարապետական արվեստի յուրմադարյան պատմության մեջ։

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ԱՎԱՐՏՎԱԾ Է

Դեկ տարուց ի վեր բովանդակ հայության ստվարագույն հատվածը ուշի-ուշով, հոգեկան անհուն բերկրանքով հետևում էր Ս. Էջմիածնում կատարվող վերանորոգչական աշխատանքներին։ Դժվար է գերագնահատել այն չտեսնված հետաքրքրությունը, որ մեր ժողովրդի բոլոր խավերն անխտիր ցուցաբերում էին վանքում կատարվող աշխատանքների նկատմամբ։ Դա կարելի էր նկատել ամեն քայլափոխում, ամեն առիթով։

Օր չէր անցնի, որ Մայր Տաճարը, բացի նորոգման աշխատանքներով զբաղված գործավորների ստվար խմբերից, չունենար մի քանի տասնյակ կողմնակի այցելուներ։ Տաճարին, ինչպես և այնտեղ կատարվող վերափոխություններին ծանոթանալու համար գալիս էին Հայաստանի գյուղերից ու շրջաններից, գալիս էին Երևանից, Անդրկովկասի և Սովետական Միության ամենատարբեր վայրերից, գալիս էին արտասահմանից։ Գալիս էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ, ամենատարբեր զբաղմունքի տեր մարդիկ՝ ակադեմիկոսներ հասարակական գործիչներ ու գյուղացիներ, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ և ուսանողներ, արհեստավորներ ու գրողներ, գիտնականներ ու զինվորականներ, գալիս էին խմբերով որպես էքսկուրսանտներ, գալիս էին միայնակ՝ իբրև տուրիստներ կամ պարզապես այցելուներ։

Քիչ չէին նրանց թվում շերմեռանդ հավատացյալներ, որոնք, չնայած Տաճարի ներսի անկանոն տեսքի, հարկ էին համարում իրենց աղոթքն անելու Իշման Սեղանի մոտ։ Եվ ամեն օր, օրվա բոլոր ժամերին, Տաճարի ներսում, աշխատանքային եռուզեռից հեռու մի հարմար անկյունում, փայտամածների բարդ շարքերի արանքից կարելի էր նկատել մի զույգ մոմակալներ՝ վառվող մոմերով և կիսախավարի մեջ՝ աղոթողների ստվերներ։

Ամեն ոք, ով վերջին տարում բախտ է ունեցել լինելու Ս. Էջմիածնում, գիտելու Մայր Տաճարի բարենորոգման աշխատանքները, կրկին ու կրկին համոզվել է, թե որքան վեհանձն է ու հոգատար Սովետական բարեխնամ կառավարությունը, որը լինելով այնքան ծանրաբեռնված բովանդակ երկրի վերաշինության վիթխարի գործերով, նյութական բոլոր անհրաժեշտ միջոցները տրամադրեց պատմական հուշարձանի վերանորոգման համար։ Եվ հասկանալի է, թե ինչու ամեն անգամ Տաճարի վերանորոգումը տեսնելիս չէր կարելի անհուն երախտագիտության զգացում չտածել դեպի մեր բարեխնամ կառավարությունը։

Իսկ ինչպիսի՞ մեծ հետաքրքրություն է հանդես բերել Մայր Տաճարի վերանորոգման նկատմամբ Սփյուռքի հայությունը։ Այդ մասին Մայր Հայրենիքից ստացված ամեն մի տեղեկություն ընդունվել է չտեսնված հրճվանքով, «Էջմիածին» հանդեսում, ինչպես

նան արտասահմանյան հայ պարբերական-ներում տպագրվող ամեն մի հոդված կլանվել է բացառիկ հետաքրքրությամբ։

Մայր Տաճարի վերանորոգման մեջ հայ ժողովուրդը, այդ թվում և Սփյուռքի հայությունը տեսնում է իր բազմամյա իղձերի կատարումը, Հայոց Առաքելական Եկեղեցու, Մայր Աթոռի ծաղկումը, հայ ճարտարապետության լավագույն պատմական հուշարձաններից մեկի վերանորոգումը։

ու նկարչական արվեստի խոշորագույն հաջողություններից մեկը, որը հնարավոր էր միայն մեր արվեստի զարգացման ներկա մակարդակի շնորհիվ։

Նորոգման աշխատանքների կատարման բարձր որակը և այն, որ այդ աշխատանքները, շնորհիվ շինարարների հմտության ու բացառիկ եռանդուն ջանքերի, կատարվեցին համեմատաբար շատ կարճ ժամկե-

Վեհագույն Հոգևոր Խորհրդի անդամները և Վարպետը զիտում են Մայր Տաճարի վերանորոգված որմանկարները

Սրտի անհուն բերկրանքով, ի լուր ամենքի, այսօր մենք արձանագրում ենք, որ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման հիմնական աշխատանքներն արդեն ավարտված են։

Կատարված է մի գործ, որը ոսկյա տառերով կարձանագրվի Հայ Եկեղեցու պատմության ստվարածավալ մատենագրքում։ Գալիք այն սերունդները, որոնց վիճակված կլինի տնորինելու Հայ Եկեղեցու գործերը, անհուն երախտագիտությամբ կնշեն պատմական այս մեծ փաստը, որպիսի երախտագիտությամբ այն արձանագրում են մեր Եկեղեցու ներկայի գործիչները։

Մայր Տաճարի բարենորոգման ավարտումը տոնական ուրախալի երևույթ է Հայ Եկեղեցու համար։ Այն հանդիսանում է նախ և առաջ արդի հայկական ճարտարապետական

տում, մի անդամ ևս ցույց տվին, որ մեր տաղանդավոր ժողովրդի ծոցից վերջին հյուսնամյակում դուրս են եկել բազմակողմանի ընդունակություններով օժտված մասնագետներ, որոնք ձեռնհաս են, վիթխարի բարդ կառուցումների հետ միասին, կատարել ամեն կարգի գործեր՝ ընդհուպ մինչև ճարտարապետական հուշարձանների վերականգնումը։

Էջմիածնի Մայր Տաճարը, բովանդակ հայության հավատո հանգանակը, հայ ժողովրդի անցյալ կուլտուրայի հիանալի կոթողը փայլում է նոր շուքով, դարձել է ավելի երիտասարդ, ավելի գեղեցիկ, ավելի հաստատուն գալիք դարերի համար...։

***

Դժվար է մեկ առ մեկ նկարագրել նորոգման բոլոր աշխատանքները, որոնք կատարվել են էջմիածնում վերջին տարում։ Այնուամենայնիվ մենք կաշխատենք համառոտակի պատմել այդ մասին։

Նորոգման աշխատանքների ամենակարևոր հատվածը, անշուշտ, պետք է համարել Տաճարի գմբեթակիր չորս մույթերի և դրանք իրար միացնող կամարների ճարտարագիտական ամրացումը։

ծանրությունը, ժամանակի ազդեցությունից և մասամբ խոնավությունից բավական խարխլվել էին։

Մասնագետներից բաղկացած հանձնաժողովի բազմակողմանի քննարկումներից հետո, կազմվեց մույթերի ու կամարների ամրացման հետաքրքիր նախագիծ (նախագծի հեղինակներ՝ ինժեներներ Կ. Ալթունյան և Բ. Դանոյան)։ Համաձայն այդ նախագծի, մույթերը լցվեցին ծեփից և դրանց քարե կմախքները չորս կողմից , սկսած հիմքից մինչև կամարների կրունկները, ուղղահայաց կեր-

Մայր Տաճարի վերանորոգման վրա աշխատող մի խումբ ճարտարապետներ

Ինչպես հայտնի է, նորոգման նախագիծը կազմելիս և չափագրումներ կատարելիս, հիշյալ մույթերի և կամարների վրա հայտնաբերվեցին շատ լուրջ ճեղքվածքներ, որոնք սպառնում էին Տաճարի կանգունությանը։ Անիմաստ կլիներ ձեռնարկել Տաճարի նորոգմանը, հոգ չտանելով նրա կանգունության մասին, չամրացնելով մույթերը, որոնք, կրելով իրենց վրա կենտրոնական գմբեթի ողջ

պով առնվեցին պողպատյա հաստ շերտերի մեջ։ Ապա այդ շերտերը հորիզոնական ձևով ամրացվեցին պողպատյա գոտիներով՝ իրարից մեկ մետր հեռավորությամբ։ Այդ բոլորից հետո, մույթերն առնվեցին երկաթյա ցանցի մեջ ու բետոնապատվեցին։ Բետոնի վրա կատարվեց գաջի ծեփում։

Նույն եղանակով ամրացվեցին կամարները։ Այդ աշխատանքների համար գործածվեց

ավելի քան 80 տոննա պողպատ։ Այժմ, երբ նորոգումն ամբողջովին ավարտված է, սովորական աչքով դժվար է նկատել, որ մույթերի տրամագիծը, նախկինի համեմատությամբ, զգալիորեն մեծացել է։

Այսպիսով, մույթերի ու կամարների ամրացումը միանգամայն վերացրեց Տաճարի կանգնությանը սպառնացող չափազանց լուրջ վտանգը։

Նորոգման աշխատանքների մյուս կարևոր մասը կազմում է Տաճարի ներսի մանրանկարների (ֆրեսկո) վերականգնումը։

Այժմ երբ ավարտված է Տաճարի նկարազարդումը, մեր առաջ վառ կերպով պատկերանում է անցյալի հայ նկարիչներ Նաղաշ և Հովնաթան Հովնաթանյանների տաղանդի ողջ մեծությունն ու հիասքանչությունը։

Նորոգումն սկսվելուց դեռ շատ առաջ մասնագետ որոշ անձինք հայտնեցին այն կարծիքը, որ եղած պատառների հիման վրա անհնարին է ամբողջովին վերականգնել Հովնաթանյանների աշխատանքը։ Իրականությունը հակառակն ապացուցեց։ Ոչ միայն վերականգնված է նախկինը, այլև, մասնագետների կարծիքով, կատարված աշխատանքը իր որակով ոչնչով չի զիջում անցյալինը։

Տեղին է նշել, որ վերջին հարյուրամյակում (գուցե և ավելի) ծավալի, բազմերանգության և բարդության տեսակետից հայ իրականության մեջ նման մանրանկարչական աշխատանք ոչ մի տեղ չի կատարվել։ Այս հանգամանքը առավել ևս ընդգծում է Էջմիածնում կատարված մանրանկարչական աշխատանքների արժեքը, անգամ եթե նրանք համարենք անցյալի ընդօրինակում կամ կրկնություն։ Դա պատիվ է բերում հայ մանրանկարչության արդի մասնագետներին և առաջին հերթին այդ արվեստի այնպիսի հմուտ վարպետի, ինչպիսին է Լիդիա Ալեքսանդրովնա Դուռնովան, որի անմիջական ցուցմունքներով այնքան ջանասեր և բարեխիղճ կերպով իրենց շնորհակալ գործը կատարեցին Երևանի Գեղարվեստական ինստիտուտի շրջանավարտ սաներ հանդիսացող մի խումբ երիտասարդ հայ նկարիչներ։

Այդ դժվարին, բարդ գործը չէր կարող հաջողությամբ պսակվել, այն էլ այդքան կարճ ժամկետում, եթե չլիներ մեր մանրանկարչական արվեստին քաջածանոթ մասնագետների աջակցությունը՝ հանձինս ժողովրդական նկարիչներ Մ. Սարյանի, Հ. Կոջոյանի, Գ. Գյուրջյանի, պրոֆ.-դոկտ. Ա. Աբրահամյանի և ուրիշների։

Արվեստագետ Լ. Ա. Դուռնովան (կենտրոնում) շրջապատված Մայր Տաճարի զարմանկարչությունը վերականգնող նկարիչներով

Ընդհանուր առմամբ միայն Մայր Տաճարի ներսում կատարված է ավելի քան 2.200 քառակուսի մետր նկարչական աշխատանք։ Բացի կենտրոնական գմբեթի կամարի և գլխավոր սեղանի ճակատի նկարներից, որոնք հիմնական վերականգնման են ենթարկված, Տաճարի մյուս բոլոր հատվածները՝ տոս սրսիդները, կամարները, մույթերի խոյակները, թանգարանի երեք ցուցասրահների առաստաղները, Իման Սեղանի գմբեթը, զանգակատան թաղը ամբողջովին նկարազարդված են նորից։ Բացի այդ, շուրջ 400 քառակուսի մետր մանրանկարչական աշխատանքներ են

Մարմարագործ Արսեն Արաբյան

կատարված Վեհարանում, հատկապես Ծաղկյա դահլիճում։

Այսպիսով, մանրանկարչական աշխատանքների ընդհանուր ծավալը կազմում է շուրջ 2.600 քառակուսի մետր։ Միայն նկարազարդման աշխատանքների վրա ծախսված գումարը կազմում է մոտ 1.700.000 ռուբլի։

Մայր Տաճարի խոցելի տեղերից մեկը եղել է տանիքը։ Այստեղից է, որ դարերի ընթացքում անձրևաջրերը ծծվել են պատերի մեջ և պատճառ դարձել հիանալի որմանկարների փչացման։ Նորոգման աշխատանքները սկսելիս նախ և առաջ հաշվի առնվեց այս հանգամանքը։ Տաճարի ամբողջ կտուրը, որը նախկինում պատված էր սալաքարերով, առանց վերջիններս հանելու, ծածկվեց ցինկապատ թիթեղով։ Նախկին վիճակում մնացին միայն գմբեթները, նկատի ունենալով, որ դրանց խիստ թեքությունը ոչ մի վտանգ չի սպառնում անձրևաջրերի ծծման տեսակետից։ Բայց և այնպես գմբեթների ծածկի սալաքարերի կարերը ևս ամրացվեցին ցեմենտի շաղախով։

Տաճարի ներսում, նկարազարդումից բացի, կատարվել են նաև այլ բարեփոխություններ։ Այսպես, օրինակ, պատերը, սկսած նկարազարդման գոտուց մինչև հատակը, ներկված են համապատասխան դույնի յուղաներկով։ Ամբողջովին սալարկված է հատակը։ Բոլոր լուսամուտների շրջանակները ու փեղկերը փոխվել են նորերով և ապակեպատվել։ Փոխված է նախաբեմն անցնող մետաղյա ցանկապատը։ Իշման սեղանի շուրջը, չորս մույթերի միջև ընկած տարածությունը, շուրջ 100 քառակուսի մետր մակերեսով պատված է հայկական բաց վարդագույն մարմարով։ Մարմարապատման աշխատանքները մեծ խնամքով կատարել է հայրենադարձ վարպետ Արսեն Արաբյանը (Հալեպից)։

Հետագայում, նորոգման աշխատանքների երկրորդ հերթի ժամանակ, նախատեսվում է մարմարապատել Տաճարի ամբողջ հատակը։

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Մայր Տաճարի էլեկտրական լուսավորությունը։ Նախքան նորոգումը Տաճարի լուսավորությունը շատ անմխիթարական էր, վերին աստիճանի աղոտ։ Չկար լուսավորման որևէ սիստեմ։ Առաստաղից կախված մի քանի անճաշակ ջահերը գրեթե փչացնում էին ներսի, առանց այն էլ տխուր տպավորությունը։

Նորոգման կապակցությամբ հիմնովին փոխված է Տաճարի լուսավորման ձևը։ Էլեկտրական հոսանքի բոլոր գծերը անց են կացված պատերի միջով և նկատելի չեն։ Տաճարը լուսավորում են տարբեր մեծությամբ 12 ջահեր, որոնցից երեքը կախված են թանգարանում։

Բացի այդ, ճարտարապետ Ռ. Իսրայելյանի նախագծով, Երևանի էլեկտրալուսավորման պիտույքների գործարանում պատրաստված են 48 հատ գեղեցիկ կերոններ, որոնք պսակվում են էլեկտրական լամպերի փնջերով։ Կերոնները ամրացված են մույթերի չորս անկյուններում՝ յուրաքանչյուր անկյունում երեքական հատ։ Գմբեթի թրմբուկի պատշգամբում (անտրեսոլ) դրված են 60 հատ էլեկտրական լամպեր, որոնք ուժեղ լուսավորում են գմբեթի կամարը։

Հետաքրքիր է հիշատակել, որ Մայր Տաճարի և Վեհարանի էլեկտրական լուսավորման ցանցի նախագիծը կազմել են, ինչպես և այդ աշխատանքների իրականացմանը ուշի-ուշով հետևել են ինժեներներ Արփենիկ Մնացականյանը և Էլիզա Մարտիրոսյանը։

Տաճարից բացի, հիմնովին նորոգված է Վեհարանը՝ Վեհափառ Հայրապետի աշխատասենյակը, ընդունարանը, նախասենյակները, կից սենյակները։ Վերականգնված են Ծաղկյա դահլիճի զարդանկարները։ Փոխված է շենքի կտուրը՝ այն թիթեղապատված է։ Նորոգվում են նաև խցերը։

Ակնառու փոփոխությունների է ենթարկվել վանքի բակը։ Այն ընդունել է ավելի բա-

բեկարգ տեսք։ Բակի հյուսիսային և արևելյան կողմերում կառուցվել են դեղեցիկ պարիսպներ՝ տեղական սրբատաշ տուֆ քարից։

Հյուսիսային պարիսպը, որը բաժանում է վանքի բակը էջմիածնի քաղաքային զրոսայգուց, ունի մոտ 5 մետր բարձրություն և 160 մետր երկարություն։ Բակի կողմից պարիսպն ունի 7 որմնախորշեր, որոնք նախատեսված են պատմական հուշարձանների համար։ Տաճարի հյուսիսային մուտքի առանցքով, նույն պարսպի մեջ, կառուցված է թաղապատ աղբյուր։

Արևելյան պարիսպը, որը կառուցված է նույն քարով, ունի 3 մետր բարձրություն և մոտ 130 մետր երկարություն՝ կամարակապ դարբասով։ Այդպիսի դարբաս է բացված նաև հյուսիսային պատի մեջ, որը դուրս է գալիս դեպի քաղաքային զրոսայգին։ Երկու դարբասների համար ևս կոած երկաթից պատրաստված են գեղեցիկ ձևավորված դռներ։

Բակի արևելյան մուտքի ձախակողմյան ուղղությամբ կառուցված է մի պարիսպ, որն անջատում է վանքի նախկին տպարանի բակը։ Հետագայում այդպիսի պարիսպ է կառուցվելու նույն մուտքի աջակողմյան ուղղությամբ, որը կանջատի խցերի բակը։

Տաճարի բակում բացված են նոր անցուղիներ, պատրաստված են ծաղկանոցներ։ Ստեղծված են հարմարություններ ինչպես այցելուների հանգստի, այնպես էլ տոնախմբությունների համար։ Առանձին հրապարակ է հատկացված ավտոմեքենաների կանգառման համար։ Առաջիկա աշնանը, ինչպես և 1956 թվականի գարնանը Տաճարի բակում տնկվելու են նոր ծառեր, պատրաստվելու են ծաղկանոցներ։

Վենետիկի Սաղկյա դաճլիճի վերանորոգված որմնակարչության մի մասը

Այն ամենը, ինչ արված է մինչև այժմ, կազմում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի, նրան հարակից շենքերի ու բակի բարեկարգման և նորոգման ընդհանուր աշխատանքների միայն մի մասը։

Պատմական այդ հուշարձանի նորոգման ու բարեկարգման գլխավոր նախագծի համաձայն, որի հեղինակներն են ճարտարապետներ Ս. Սաֆարյանը, Ռ. Իսրայելյանը, Լ. Սադոյանը (միաժամանակ նախագծի գլխավոր ինժեներ) և Ս. Գյուրզադյանը, նախատեսվում է առաջիկա 1956 թվականին շարունակել սկսված աշխատանքները։

Կենտրոնական բակի այսպիսի մեկուսացումը հետապնդում է մի նպատակ՝ տալ նրան պատմական հուշարձանի վայել տեսք և պահպանել նրան բուսականությունը ավելորդ երթևեկության հետևանքով առաջացող փչացումից։ Կարգելվեն կողմնակի ավտոմեքենաների մուտքը և մասսայական տոնախմբությունները։ Այդ նպատակի համար կհատկացվի նախկին Սինոդի բակը, որն իր հերթին կբարեկարգվի։ Մայր Տաճարի բակը մտնել կթույլատրվի միայն ցերեկային ժամերին՝ պատմական հուշարձանները դիտելու համար։

Տաճարի, Վեհարանի և Սինոդի բակերում



Վեհարանի Մաղկյա դահլիճի վերանորոգված ոճամանակաշրջանի մի մասը

Աշխատանքները պետք է ընթանան գլխավորապես վանքի շրջակայքի և հատկապես բակերի բարեկարգման ուղղությամբ։ Այսպես, օրինակ, կենտրոնական բակի բարեկարգման նախագիծը կազմված է այն հաշվով, որպեսզի հետագայում վերականգնվի Մայր Տաճարի մուտքի նախկին ուղղությունը Տրդատա դռնով։ Այս բակը իրենից պետք է ներկայացնի մի մեկուսացված, ստվերախիտ պարտեզ՝ բարեկարգ ծառուղիներով ու ծաղկանոցներով։ Արևմտյան կողմից Տաճարի բակը 60 մետր երկարության հենապատով ու մետաղյա ցանկապատով կանջատվի նախկին Սինոդի բակից։

կանցկացվեն ստորերկրյա էլեկտրական գծեր, կդրվեն մետաղյա գեղեցիկ սյուներ լուսավորության համար։

Ինչպես ասացինք, հյուսիսային պարիսպը անջատում է Տաճարի բակը քաղաքային ղբոսայգուց։ Պարսպի երկարությամբ, զբոսայգու կողմից կառուցվելու են ամառային մի քանի սյունազարդ պավիլիոններ՝ զովացուցիչ ջրերի, մրգերի և խորտիկների համար։ Պավիլիոններից մեկը կառուցվելու է այն վայրում, ուր ժամանակին եղել է Կոմիտասի կացարանը։ Այստեղ պահպանվել է այն ծառը, որի ստվերի տակ սիրել է հանդրստանալ մեծանուն երաժշտագետը։ Պա-

վիլիոնի պատին կփակցվի մարմարյա հուշատախտակ Կոմիտասի մասին։

Այսպես, ուրեմն, Էջմիածնի պատմական հուշարձանների նորոգման ու բարեկարգման հիմնական աշխատանքներն ավարտված են։ Այդ նպատակի համար Սովետական Հայաստանի կառավարությունն իր միջոցներից մինչև այժմ ծախսել է շուրջ 4.000.000 ռուբլի։ Մի զգալի գումար ևս կպահանջվի հետագա աշխատանքների համար։

Այս հանդիսավոր օրերին, երբ ավարտված են Մայր Տաճարի նորոգման աշխատանքները, բոլոր նրանք, ում համար թանկ է Էջմիածինը որպես պատմական հուշարձան, որպես Հայ Եկեղեցու կենտրոն, չեն կարող իրենց երախտագիտության ջերմ խոսքը չասել Սովետական Հայաստանի կառավարությանը, որի բարեխնամ հոգատարության շնորհիվ գլուխ բերվեց այդ պատմական շնորհակալ գործը։

Այդ կապակցությամբ չի կարելի երախտագիտությամբ կրկին չհիշել երջանկահիշատակ հանգուցյալ Վեհափառ Կաթողիկոս Գեորգ Հ.-ին, մեծ Հայրենասերին ու Հովվապետին, որը իր կենդանության օրոք այնքան ջանք գործադրեց Տաճարի նորոգման համար, սակայն ցավոք սրտի չարժանացավ տեսնելու իր երազած ու փայփայած գործի իրականացումը։ Թող բարենորոգված Մայր Տաճարը մի ուրույն հուշարձան լինի մեծ Հովվապետի պայծառ հիշատակին։

Անհրաժեշտ է նշել կառավարական մի շարք մարմինների՝ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ճարտարապետական գործերի վարչության և Հայ Եկեղեցու գործերի խորհրդի, ինչպես նաև Քաղաքային և գյուղական շինարարության մինիստրության հատուկ շինգրասենյակի ջանադիր, եռանդուն մասնակցությունը, որի շնորհիվ հնարավոր եղավ ապահովել նորոգման աշխատանքների անխափան ընթացքն ու բարեհաջող ավարտումը։

Եվ վերջապես հիշատակության են արժանի բոլոր այն բանվորները, նկարիչները, ինժեներները, ճարտարապետները, որոնք ամիսներ շարունակ օրնիբուն աշխատել են անխոնջ, չխնայելով իրենց ուժերը, եռանդն ու կարողությունները նորոգման աշխատանքներն օր առաջ ավարտելու, իրենց հանձնարարված գործը աղնվաբար ու բարձր որակով կատարելու համար։ Կատարված գործը պատիվ է բերում նրանց բոլորին։

...Կանցնեն շատ դարեր, Էջմիածինը կմնա կանգուն, որպես հայ ժողովրդի նյութական կուլտուրայի անսասան կոթողներից մեկը։ Եվ, ո՞վ գիտե, գուցե գալիք սերունդները հարկ կհամարեն կրկին նորոգել այն։ Սակայն նրանք չեն կարող երախտիքով չհիշել, որ հայ ժողովուրդը իր վերածնդյան վաղ շրջանում ստեղծելով բազմաթիվ հոյակապ կոթողներ, մեծ սիրով ու խնամքով պահպանել է նաև Էջմիածինը, և այդ բոլորը միասին կտակել է իրենց, իբրև իր ստեղծագործական տաղանդի լավագույն նմուշներ։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ*

§ 13

Եթե Փարպեցին և Խորենացին այնպես այլայլությամբ են պատմում դեպքերը, ի՞նչ պիտի աներ Սասնեցին, որ շատ ավելի հետին է, քան հիշյալ երկու պատմիչները։

Ըստ Սասնեցու, երբ Մեսրոպ գրերի գյուտի համար Գողթնից դուրս գալով Սահակի մոտ է գալիս, թագավորը շուտով մարդ է ուղարկում Ասորիք և կանչել է տալիս Դանիելին։ Սա գրերը վերցնում և անձամբ բերում է Մեսրոպին, բայց տեսնում են, որ պակասավոր են։ Ուստի Մեսրոպ՝ հայրապետի հրամանով առնում է այն գրերը, իջնում Ամիթ և հանձնում թարգմանողներին, որպեսզի «յարմարեսցեն ըստ վանկինն։ Բայց երբ սրանք չեն կարողանում, գնում է Եդեսիա՝ Պղատոն դիվանագլխին, սրանից էլ «Սամուս» Հոփանոս իմաստասերին, բայց երկուսից էլ անհույս է մնում։ Այս անհաջողությունը աստվածային շնորհ է համարում Սասնեցին, որպեսզի, ասում է նա, ամեն բանի մեջ էլ օտարին շնորհակալ մնացած չլիներք. «Ու այս ի խնամոցն Աստուծոյ մատակարարէր, ոչ ամենայնիւ առնել զմեզ մուրացիկս՝ շնորհակալս այլոց. զբովանդակ պարգևսն ի ձեռն այլազանից շնորհել մեզ՝ որպէս զառաքելութիւնն, զքահանայութիւնն և զարքայութիւնն (առաջինը հրեա Թադեոսի և Բարթողիմեոսի համար, երկրորդը՝ պարթև Լուսավորչի համար, երրորդը՝ Արշակունի Վաղարշակի համար ասված). այլ պահէր զայսպիսի բարիս և մերով արեան զանկուածովս ձիրէր մեզ, յիմար ցուցանելով զիմաստութիւն յաւիտենիս» (Սասնեցի, էջ 42)։

Այս անհաջողությունից սաստիկ տրտմած՝ Մեսրոպ ետ է դառնում և կրկին նվիրում է իր անձը պասի և աղոթքի։ Եփրատի ափով բարձրանալով և այրից այր անցնելով՝ վերջապես հասնում է Թալուի բերդը, և այնտեղ, մի նեղ քարայրում առանձնացած՝ սկսում է ճգնել։ Մեծ պասի շրջանն էր։ Մեսրոպ այն յոթը շաբաթը անոթի է անցկացնում, դիշեր ու ցերեկ երգելով ապաշխարության յուրահնար շարականները։ «Կրկին նորոգէր զպահոն և զազօթսն, ընթանալով զառ ի վեր ընդ ափունս Եփրատայ, յայրէ յայր անցնելով մինչև ի դղեակն Պալունեաց և անդ զկայ առնոյր ի փոքրագոյն այրի, յաւուրս Քառասնորդացն. և զեկին եւթնեակսն անսուաղ անցուցանէր, զտիւ և զգիշեր երգելով զերգս երից մանկանցն և շարական եղանակ ապաշխարութեան՝ ըստ թուոյ աւուրց պահոցն, զոր ընկալեալ երգէ եկեղեցի սուրբ» (էջ 43)։

* Շարունակված ամսագրի 1954 թվականի N N XI-ից, XII-ից և 1955 թվականի N N I-ից, II-ից, III-ից և IV-ից։

Վերջապես, քառանորդական պասը լրանալուն, տեսնում է այրածն հրեշտակին և հրեշտակների Տիրոջը, որ գրում էր 14 տառ սրտի տախտակների վրա. «Եւ ի կատարման եւթներեկացն ի պահու կալով, այրածն տեսանէր զհրեշտակն որպէս Ամբակումն և Հրեկողն, մանաւանդ թէ գերագոյն ևս Դանիլապէս և Մովսիսաբար, զՏէրն հրեշտակաց՝ մարգարէական աչօք որ գրէր մատանագիծ ի սալս սրտի իւրոյ չորեքտասան տառս (էջ 43)։

Աստված այնքան է մնում Մեսրոպի մոտ, այնքան է տալիս նրան «ընդարձակութիւն սրտի և իմաստութիւն անչափ», մինչև որ Մեսրոպ սովորում է բոլոր գրերը։ Այն քարը, որի վրա Աստված նշանակեց տառերը, մինչև այն ժամանակ էլ մնում էր ըստ Սանեցու. «որ և զօրինակն նշանէր ի վերայ քարի որ կայ մինչև ցայսօր (էջ 44)։

Սանեցու պատմության համառոտությունն է ներկայացնում Հայսմավուրքը, որ (տրե 15) նույնպես պատմում է, թե Դանիել անձամբ եկավ Հայաստան և երկու տարի անհաջող փորձեր արավ Մեսրոպի և Սահակի հետ։ Սրանից հետո Մեսրոպ ճանապարհորդության դուրս եկավ և վերջապես հասավ Սամուատ, «առ իմաստասէր ոմն ճգնաւոր Վախրիճ անուն և դադարեաց առուրս ինչ և ոչ նովաւ կարաց լնուլ զփափագ սրտին իւրոյ»։ Սրանից հետո պատմում է տեսիլքը, որ տեղի ունեցավ Բալուի մեջ տրե ամսի 17-ին, որ է նոյեմբերի 25-ը։

Պատմությունը իր ամբողջության մեջ համաձայն է Խորենացուն՝ միայն թեթև փոփոխությամբ. Դանիելի Հայաստան գալը սխալմունք է (փոխանակ գրերը գալու), իսկ Մեսրոպի ճգնությունը՝ և գրերի գյուտի Բալու տեղափոխությունը՝ հետին ժամանակի հավելված։

Թե Մեսրոպի տեսիլքը և գրերի գյուտը տեղի են ունեցել Բալուի մեջ՝ դիտի նաև Վարդան պատմիչ. «Վասն որոյ աղօթից տուեալ զանձն գործակցութեամբ սրբոյն Սահակայ, տայ նմա Աստուած զխնդրելին, չորեքտասան գիրս, աջով իւրով դրոշմեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսեսի ի լեառն Սինայ, և սմա ի լեառն Բալուայ, որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուածային վիմին և նկարք գրերոյն, և պատուի տեղին խնկօք և ջահիւք միշտ ի տաճկաց և քրիստոնէից բնակչաց տեղւոյնն» (Վարդան, էջ 49—50)։ Նույնը նաև իր Աշխարհագրության մեջ. «Աթոռ և Հենի, Դերջան և Բալու, ուր զգիրն եգիտ Մեսրոպ վարդապետն, այսոքիկ Արշակունիք կոչին» (ըստ Իս. Հարությունյանի, «Հայոց գիրը», էջ 363. տե՛ս «Բազմավէպ», 1887 թ., էջ 140). Իսկ Վարդանի «Աշխարհագրության» մեջ (էջ 519) գտնում ենք միայն «Աթոռ և Հենի Դերջան է, ուր զգիրն եգիտ Մեսրոպ վարդապետն»։

Գանձարանը, որ հետին զանազան հեղինակների խմբագրությամբ կազմված մի գործ է, նույնպես դիտի Բալուի տեսիլքը, որ ամբողջությամբ մեջ ենք բերում, հանելով Կարինյան № 466 (էջ 57—61) և Թավրիզի Ղալայի գրադարանի № 43 (էջ 150—154) ձեռագրերից.

«Բազում աշխատեալ
Եւ ոչինչ օգտեալ,
Զեռն յԱստուած ձգեալ,
Ի Բալու տգնեալ,
Մեսրոպ աղօթեալ,
Աստուած գթացեալ,
Հրեշտակ Տեառն իջեալ,
Մատամբ փորագրեալ,
Ի վիմին դրոշմեալ,
Աջ ձեռն երևեալ,
Իբր ի ձեռն գրեալ,
Եօթնն գիր յայտնեալ,
Այն հոգի ջահեալ,
Զայլ գիրսն յարուցեալ,
Սիղոբայք հեղեալ,
Բանն յար մնացեալ,
Ի գիրս միացեալ,
Զիմաստս պատմեալ,
Մեսրոպ հմտացեալ,
Գիր Վրաց զուգեալ,
Ի Աղուանից տուեալ»։

14

Բալուի բերդը և այն քարայրը, ուր ճգնել է Մեսրոպ, նույնպես այն քարը, որի վրա նշանակվել են հայերեն տառերը, կան մինչև այժմ։ Ակավասիկ հավատարիմ մի ճանապարհորդի հարազատ նկարագիրը նույն վայրերի մասին. «Հինգ ժամեն սկսանք իջնալ ի Բալուա հովիտն. ի հեռուստ կողջունենք Բալուա բերդի քարյա գլուխն. սիրտս իրեն կքաշե այդ կապույտ ժայռը, աչերս չեմ կրնար հեռացնել իրմեն, այդ քարի մեջն է հայոց լուսավորության արգանդն, հայկական գրոց գանձարանն, այն պաշտելի քարայրը, հորում աստվածային Մեսրոպ ճգնեցավ, տգնեցավ, մինչև ծնավ ազգ մի ողջույն. անտի ծագեց մեր լույս արևն...։ Ելանք ի բերդ։ Հին և վիթխարի պարսպաց ավերներ ու բեկորները կոխելով վեր կելնենք, քայքայալ մեծ դռնի մը կմտնենք միջնաբերդը, ուր շտեմարանաց

և սենեկաց ավերածներ, գետնահարկ կամարափով շենքերը մեկը մյուսին եռև կներկայանան մեզ. դեռ ողջ է դեղանատունը և մի քանի սենյակ. բայց ասենք բան մը չեն արժեր իմ աչքին։ Կդառնանք ի հյուսիս, ուր ապառաժ և լերջ քարեր են մեծամեծ, հոն եզերքին վրա քարին երեսը տաշված, վրան բևեռագիր անեղծ, մաքուր, 22 տող վերը և 7 տող վարը քանդակված, մեջտեղը բաց ձգված էր, ուր տող մը արաբերեն գիր փորագրած էին։ Այս «Գրման քարիս» կողեն դառ ի վայր, նեղ, սանդղաձև, գրեթե մրցման շավիղով իջանք քարայրի մը բերան, որո մեջ փոքրիկ քարայր մի ևս կա, երկուքին աջ առաստաղն ու պատերը սեցած. երկուքի մեջն ալ բեմի պես անկոփ քարերով շարվածք, և պատերուն վրա բազմաթիվ խաչեր փորված։— Ահա Ս. Մեսրոպա ճգնարանն, ըսավ Տեր Մեսրոպն։

«Սունկերուս վրա ինկա, հոն, ուր Սրբույն ծնկները մաշված էին, լգեցի այն քարեր և փոշիները, հորս շրթունք և ճակատ Սրբույն բյուրիցս քսվեր էին նվիրելով իր խորհուրդն և իղձերը աստվածային իմաստության. հոն դրի երեսներս, և չէի ուզեր վերցնել այն ժայռերեն, ուր նստեր, կոթներ, խոկալով և տքնելով Հայ Ազգին և Հայաստանյայց նկեղեցվույն լույս և կյանք ճարելու ճգնությամբ...։ Քա՜ր, ո՜ քարայր, հայոց արևուն լուանակամար, ուստի ծագեցավ մեզ ճառագայթ դպրության, «լոր խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին. նկարագրեցաւ մեզ գիր կենդանի յարգանդ մաքուր մեծին Մեսրովբայ, անմատոյց լուսոյն երկրպագեցուք։ Նից քարայրիս, արտաքո դռան, կա մի տաշածո երես մեծ գրատախտակի նման, արդյոք հայ տառերը ձևակերպելու տախտակն էր Սրբույն։ Ինչպես նաև երկու այլ քարայրեր, որոց առաջինն ավելի լուսավոր և ընդարձակ է, ունի սրահ մը, և երկրորդն՝ կրկին պատերով սենյակ մը, որո առաջին սենեկեն ներսը, դռան հանդեպ, քարայրին ճակատը փորված և կոկված մեծ քառակուսի մը, և փորվածոյի աջ անկյունը վերեն ծակեր կան ականջաձև, յորմէ մարդ մը կրնա իր ձեռքն երկնցնել. եթե արմունկդ կիսածալ ընես դեպի լանջդ՝ գրեթե նույն ծակին ձեր կառնու, և այն դիրքով կրնա մարդ մը իր թեր դնել այդ ծակին մեջ։— Ս. Մեսրոպա դպրոց կանվանեն այս քարայրը, ըսավ Տեր Մեսրոպն, և կավանդեն թե՝ այդ ծակեն ելած է Թաթը և այս տաշածոյին վրա գրեր է Ա, Բ, Գ—։ Արդարև երբ այդ տախտակին հառեր խոկալով Սուրբն իր ուշքն ու աչքը, պետք էր որ այս անկյան ծակեն ելներ Թաթն և գրեր «ոչ իբրև ի քուն երազոյ, այլ բացորոշ հայտնությամբ աստվածային...

«Կան երկու այլ քարայրեր ալ, միույն մեջ կգտնվի չրի հոր մը։ Ասոնց մեջը խունկի և մոմի մոխիրը սեցուցած են, մանավանդ ճգնարանին, ուր բարեպաշտոն կանայք կերթան կաղոթեն իրենց զավակաց համար։— Ավելորդ է ըսել թե Ս. Մեսրոպ պատրաստ գտած է այս այր ու վայրը, որ իրմեն հառաջ ո՞վ գիտե ի՞նչ նպատակի համար կոեր կոփեր են. դուրսի բևեռագիրն ալ մտածել կուտա թե՝ շատ հինուց գործ է, թերևս հիշատակարանաց դիվանը կազմելու մտքով տաշված լինին. եթե այսպես, զուգադիպություն մէ Ս. Մեսրոպինը (Գ. Վ. Արվանձտյանց, «Թորոս աղբարս, հատոր Բ, 1884 թ., էջ 154—162)։

Այս նկարագրությունից երևում է, թե մեր գործը ժողովրդական մի ավանդության հետ է, որ մինչև այժմ կենդանի է նույն գավառի ժողովրդի մեջ։ «Գրման քարերը կամ թյուրք բառով «յաղբյր թաշերը՝ ամեն տեղ մեր սնոտիապաշտ ժողովրդի կողմից նվիրական մի բան, գրեթե սրբություն են համարված։ Բալուի ավանդությունն էլ, որ Սասնեցու և Վարպանի պատմության համաձայն՝ շատ հին ժամանակ, շուրջ 11-րդ դարում ծագած է երևում, ծագած է անշուշտ նույն բևեռագիր արձանագրության պատճառով, որ խալդյան վաղեմի մնացորդ է և ամենևին կապ չունի Մեսրոպի հետ։ Միակ պատմական աստառը, որ կարող է իրը հիմք ծառայած լինել այս ավանդության, թերևս մի կարճ դադար է Մեսրոպի վերադարձի ժամանակ՝ Սամուսատից Վաղարշապատ։

§ 15

Հետին դարերում շարադրված մի անվավերական ևս կա, որ տպված է Գ. Արվանձտյանի «Հնոց նորոցս աշխատության մեջ, «ճաղաքս սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւթիս» վերնագրով։ Սրա մեջ (էջ 41—46) խոսվում է Մեսրոպի վրա և տրվում է մի քանի նորահնար տեղեկություններ։ Նախ ասվում է, թե Դանիել՝ աշակերտ էր Լուսավորչի, երկրորդ՝ թե Սահակ և Մեսրոպ միասին ծոմ պահեցին, միասին աղոթքի նստեցին և միասին էջ տեսան տեսիլքը. «ճայսմ ժամանակիս եղև խնդիր պակասութեան գրոյն Հայոց, զոր ունէին, Իթ գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորոյ աշակերտ սրբոյն Գրիգորի. իսկ սուրբն Սահակ և Մեսրոպ բազում աշխատութեամբ պէտս արարին, սովոյ և ծարաւոյ յոտանաւոր յարչարանաց ի յերինս տքնեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, ոչինչ ճաշակելով քայց միայն յաղթեան Աստուծոյ պարապեալ... յետոյ երևեցաւ ի տեսլեան հրեշտակ Տեառն... էջ յերկիր առ նոսա և որպէս ի տունջեան խոսէր ընդ նոսա, և յաման ինչ խեցեղէն՝ մատամբ նկարեալ տայր նոցա զգիրս եոթնն։

§ 16

Շատ կարևոր է քննել այն հարցը, թե ի՞նչ էր անում Մեսրոպ այնքան երկար ժամանակ Եդեսիայում, ի՞նչ էր իր որոնումների և խուզարկությունների նպատակը, ի՞նչ էր պատճառը այն տանջանքի, որ նա կրում էր։ Մի՞թե մի շատ դժվար բան էր որևէ լեզվի այբուբեն կազմելը։ Եթե նա Դանիելյան այբուբենից դժգոհ էր, չէ՞ր կարող առանց թափառելու Միջագետք և Եդեսիա, հենց Հայաստանում կազմել մի այնպիսի այբուբեն, որ լրացներ իր բոլոր պահանջները։

Անշուշտ Մեսրոպի դժվարությունն ու որոնումները լեզուների գիտության չէին վերաբերում, որովհետև հայերենի տառեր հնարելու համար նախ և առաջ հայերեն իմանալ պետք էր և ո՞վ էր այն միջագետցին, որ Մեսրոպից ավելի հայերեն իմացած լիներ։ Իսկ եթե հունարենի և ասորիերենի գիտության կարիք կար, Մեսրոպ ինքը, եթե ոչ Սահակ կամ ուրիշ գիտակ անձեր Հայաստանում կարող էին հարկավոր չափով օգտակար լինել։ Ուրեմն որոնումները այս կողմից չէին։

Նաև Մեսրոպի դժվարությունները տառաձևերի հնարման մեջ էլ չէին, որովհետև այդպիսի դժվարություններ երբեք չծագեցին ո՛չ վրացերեն և ո՛չ էլ աղվաներեն տառերի հնարման ժամանակ։

Հարցումների պատասխաններ գտնելու համար պետք է երթանք մի քիչ հետ, և նորից ձեռ առնենք Դանիելյան դրերը։

Ի՞նչ ստացավ Մեսրոպը Դանիելից. այբուբենի ցուցա՞կ, թե՞ մի ամբողջական գրվածք։ Անշուշտ դա մի հասարակ ցուցակ էր, որի վրա գրված էր ասորերեն լեզվով՝ «Այս է գիր Հայոց» և տառերի մոտ էլ գրված էր համապատասխան ասորերեն տառը։ Ճիշտ այնպես, ինչպես այսօր մենք տեսնում ենք Էջմիածնի (այժմ Երևանի) ձեռագրատան № 7117 ձեռագրում. «Գիր յունաց. որ է հելլենարէն», «Ասորեաց գիրն է», «Էրացոց գիրն էր», «Գիր Խաթեաց» և այլն։ Այս վերնագիրներից հետո տպված է այդ լեզուների ամբողջ այբուբենը՝ իրենց անուններով և արժեքով (հայատառ)։ Անմիտ բան կլիներ, եթե երևակայենք, թե այդ ցուցակը մի առանձին թերթիկ կամ պնակիտ էր, որովհետև ո՞ւմ ցավն էր կազմել այդպիսի աննպատակ մի թերթիկ և դցել մի կողմ։ Ուստի պիտի ընդունենք, թե դա գտնվում էր որևէ ասորերեն գրքի կամ ժողովածուի մեջ, ինչպես է և մեր վերոհիշյալ № 7117 ձեռագիրը։ Դանիել պատահարար գտել էր այդ ձեռագիրը և տեսել, այնտեղ «հայերեն» այբուբենը. և երբ Վռամշապուհ Վահրիճի և Աբելի միջոցով պահանջեց այդ դրերը, Դանիել արտագրեց այդ ցուցակը. տառերը. որ ասորական այբուբենի շարքով էին, շարեց հունարենի շարքով, ասորերեն համապատասխան տառերի փոխարեն գրավ հունարեն համապատասխան տառերը և ուղարկեց Վռամշապուհին։

Թե իրոք Դանիելի մոտ գտնվածը տառերի մի ցուցակ էր և ոչ գիրք, այդ մասին վկայում են հենց պատմիչները։ «Ցայնժամ պատմէր նոցա արքայն՝ վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցեալոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբէտաց հայերէն լեզուի [գտեալ]... նախ ինքն տեղեկանայր ի Դանիելէ նշանագրոյն և ապա առեալ ի նմանէ առաքեր առ արքայն յերկիրն Հայոց... ընկալեալ զնոյն նշանագիրսն ի Հարելէէն, ուրախ լինէին... (Կորյուն, էջ 8)։ Այսպես և Փարպեցին, Խորենացին և ուրիշներ։

Բացի պատմագիրների վկայությունից՝ մեր առողջ դատողությունն էլ ցույց է տալիս, թե Դանիելի դտածը և ուղարկածը տառացուցակ էր և ոչ գիրք։ Որովհետև եթե գիրք լիներ, այդ գիրքը կա՞մ հայերեն պիտի լիներ և կա՞մ որևէ ուրիշ լեզվով։ Չէր կարող ուրիշ լեզվով լինել, որովհետև Մեսրոպ իսկույն գեն պիտի գցեր, ասելով, թե դա հայերեն չէ։ Բայց չէր էլ կարող հայերեն լինել, որովհետև տեսնվեց, որ հայերեն լեզվին հարմար չի գալիս։ Եվ եթե ո՞չ հայերեն էր և ո՞չ ուրիշ լեզվով, ուրեմն հասարակ մի ցուցակ էր՝ վերնագրված «Այս է գիր Հայոց», ինչպես ասացինք։

Այս բացատրությունից հետո ամեն ինչ պարզվում և հասկանալի է դառնում։ Եթե Մեսրոպ իրոք գնաց Ամիդ՝ Դանիելի մոտ, իր նպատակն էր անձամբ տեսնել այն գիրքը, ուից քաղված էր «Հայոց այբուբենը», իմանալու համար, թե որևէ ուրիշ բացատրություն կա՞, կարելի՞ է նրա մեջ գտնել պակաս տառերը։ Եվ երբ տեսավ, որ Դանիելը ոչինչ չի գտաե, գրքումն էլ ոչինչ չկա, անցավ Եդեսիա, այն քաղաքի նշանավոր դրադարանում շարունակելու համար իր որոնումը։ Խարվելով ցուցակի վերնագրից՝ «Այս է գիր Հայոց», և հավատալով, որ իրոք դա հայոց գիրն է, նա մի առ մի աչքից անց կացրեց Եդեսիայի գրադարանի հազարավոր ձեռագրերը, տեսնելու համար, թե մի ուրիշ տեղ չէ՞ գտնի՞ այդ ցուցակը, կա՞ն այնտեղ պակաս դրերը, կամ թե կա՞ արդյոք որևէ գիրք գրված այդ այբուբենով, որ իմանա, թե պակաս հնչյունները ինչպե՞ս էին արտահայտված։ Մեսրոպի աշխատանքը զուր անցավ, այսինքն ոչ մին գտավ և ոչ մյուսը. կամ եթե գտավ մի գիրք, տեսավ, որ հայերեն լեզվով չէ, այլ որևէ օտար լեզվով, Ա՛յն ժամանակ համոզվեց, թե ինքը խարված է. Դանիելյան դրերը հայերեն,

չեն, ուստի դեն գցեց նրանք և իսկույն հնարեց իր ուզած ձևով ու գրությամբ հայերեն գրերը, ինչ որ երկարատև աշխատանքի կարոտ չէր։

Իմ կարծիքով, ամբողջ թյուրիմացությունը, որին զոհ գնացին թե՛ Դանիել և թե՛ Մեսրոպ, արամեական (հին ասորական) և արամյան (հայ) բառերի շփոթությունից էր առաջանում և նորագյուտ այն տառերը ուրիշ բան չէին, բայց եթե ինչ որ արամեական հնացած տառեր։

Հետաքրքիր է, թե ի՞նչ են մտածում այս հարցի առթիվ այլ քննիչներ։

Ամենից ավելի Ս. Վ. Պարոնյանն է, որ զբաղված է այս հարցով («Երկրագունդ», 1885 թ., էջ 99—109 և «Հանդէս ամսօրեայ», 1896 թ., էջ 72—76)։ Իր կարծիքն այն է, թե Դանիելի ունեցածը և ուղարկածը ո՛չ թե մի ցուցակ էր, այլ ամբողջական մի գիրք՝ հայերեն լեզվով և այն անծանոթ հին-հայկական տառերով։ Դանիել դուրս բերավ այդ գրքից հայերեն տառերը, որով և տառերը կոչվեցին Դանիելյան գրեր։ Սրա ապացույցները հետևյալներն են. ա) Հասարակ մի ցուցակ ի՞նչպես կարող էր ընդունելի դառնալ Մեսրոպի կողմից իբրև հայերեն տառեր, ի՞նչպես կարելի էր իմանալ տառերի արժեքը, կամ նույնիսկ ճանաչել, թե նրանք հայերեն էին. բ) Թղթի մի կտոր ի՞նչպես կարող էր հարգ ունենալ Մեսրոպի և Վռամշապուհի մոտ և երկամյա փորձարկության ենթարկվել. գ) Պատմագիրները վկայում են, թե Դանիել «կարգեաց ըստ ձևոյ օրինակի յունականին» («Խորենացի»). «Ի նմին Դանիէլէ տեղեկանայր զկարգ նշանագրացն» (Փարպեցի)։ Կարգ և կարգել նշանակում են «դասավորություն, դասավորել». ուրեմն նախապես այդ գրերը կարգ չեն ունեցել. և ի՞նչ կլինի մի բան, որ կարգ չունենա, բայց լեզուն և արժեքը իմացվի։ Դա կլինի ամբողջական գիրք, որ ստացավ Մեսրոպ և ո՛չ թե ցուցակ։ Եվ իզուր է ենթադրել, թե նա ուներ ուրիշ կարգ և Դանիել փոխեց, վերածեց հունականի, որովհետև բոլոր այբուբեններն էլ միևնույն կարգն ունեն։

Բայց, ավելացնում է Պարոնյան, այդ գրքի տառերը հին ու մին, տգեղ ու անվայելուչ էին։ Մեսրոպ լուծեց նրանք գեղեցկացնելով հեռանալ իսկականից, որ համարում էր հին և պատկառելի։ Ուստի գնաց, ման եկավ աշխարհն աշխարհ, որպեսզի գտնի այդ նույն հայերեն տառերով, բայց այս անգամ գեղեցիկ և վայելուչ գրությամբ գրված մի գիրք։

Այս բոլորի պատասխանը վերևում մեր ասած բացատրության մեջ կա արդեն. հիմնական պատճառաբանությունը ա՛յն է, որ եթե այդ գիրքը և այդ գրերը հայերեն եղած լինեին, հայերենին անհարմար չպիտի գային և պակաս տառեր չպիտի ունենային։ Եթե նույնիսկ մի քանի տառ պակաս էլ լիներ, կարելի էր պակասը որևէ ձևով լրացնել։ Դրա համար աշխարհներ ման գալու կարիք չկար։ Իսկ եթե Մեսրոպ շրջում է քաղաքներ, որոնումներ է կատարում, նշանակում է մի ավելի մեծ նպատակ ունի՝ որոշել, թե նա իրոք հայերե՞ն է, թե չէ։ Ճիշտ չէ նույնպես ասել, թե բոլոր այբուբեններն էլ նույն կարգն ունեն. ասորերենի առաջին չորս տառերը հունարենի հետ նույն են, բայց հետո կարգը փոխվում է. նորից մի քանի տառ միասին են գնում, վերջում բոլորովին փոխվում է։ Իսկ թե Դանիելյան այբուբենի պակասությունը ա՛յն էր, որ նրանք այն գրքում գեղեցիկ ու վայելուչ ձևով գծագրված չէին և կամ եթե Մեսրոպ վայելուչ ձևով գծագրել տար, ընականից հեռացած պիտի լինեին, դրանք նկարչությունից ոչինչ չհասկացող մարդու իրոքեր են և ամենևին արժեք չունեն։ Արդեն ո՛չ մի պատմիչ էլ չի ասում, թե այն տառերը ագեղ կամ տձև էին, այլ թե պակասավոր էին և հայերեն լեզվին չէին համարվում։

Մյուս քննիչները ընդհանրապես և լռելյայն ընդունում են, որ Մեսրոպի ձեռքն եղածը պարզ մի ցուցակ էր և ոչ գիրք։

§ 17

Մեսրոպի համբորդությունը, կրած ծանր աշխատանքը և որոնումները բացատրելու համար Սահակյան էլ («Բաղմավէպ», 1907 թ., էջ 441—443) ուրիշ ենթադրություն է անում։

Նոր տառաձևեր հնարելու մեջ ոչինչ չկար դժվարին, ասում է նա։ Դժվարն այն էր, որ կարողանար ստուգել, թե իր կազմած այբուբենից դուրս ուրիշ հնչյուններ չկայի՞ն արդյոք հայերենի մեջ։ Դրա համար պետք էր ունենալ հայ լեզվի բառամթերքը ձեռքի տակ. և ահա Մեսրոպի աշխատանքը եղավ կազմել առաջին անգամ հունարենից-հայերեն բառարան «հունարեն տառերով (որոնց անբավականությունը ա՛յնքան տեսանելի պիտի ըներ աշխատանքը), որպեսզի կարող ըլլար բազդատական ճամբով իմանալ՝ թե ո՞ր ձայները կարելի չէ ներկայացնել հույն տառերով և թե ո՞ր ձայներուն համար ուրիշ լեզուներե տառ փոխ առնելու է և կամ նոր հնտրելու էր։

Սահակյան այս հույն-հայերեն բառարանի համար է հասկանում Փարպեցու և Խորենացու հետևյալ վկայությունները. «Հանդիպեցուցանէր զհայերէն աթուիթայսն ըստ կարգման սիլովբայից Ցունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահա-

կայ զաթուքայիցն գաղափար, ըստ անսայթաքութեան յունինն (Փարպեցի, էջ 16, նոր տպ.)։ «Փոխադրելով զհայերէն աթուքայսն ըստ անսայթաքութեան սիւդորայից հելլենացւոց» (Խորենացի, Գ, ծգ)։ Դրա համար էր, որ կազմվել էր Սահակի նախագահությամբ մի հանձնաժողով՝ բաղկացած հինգ անդամից (Մեսրոպ, Հովհան Եկեղեցացի, Հովսեփ Պաղնացի, Տեր Խորձենացի և Մուշե Տարոնացի), որոնք շարունակ դիմում էին Սահակին և օգտվում նրա մեծ հունագիտությունից։

Մեսրոպի կազմած այս բառարանի հետքերը մենք տեսնում ենք 5-րդ դարի զանազան գրվածքների մեջ, ինչպես Մակաբայեցոց գիրքը կամ Փավստոս, որոնց մեջ հայերեն զանազան հոմանիշներ շարված են իրար կողքի։

Ըստ այսմ Մեսրոպ՝ 4 հոգու ընկերակցությամբ հավաքել է գոնե 40—50.000 հունարեն բառ, դրել նրանց հայերեն քառապատիկ ավելի հոմանիշները, 36 հատիկ հայերեն տառ հորինելու համար։ Բայց ներողություն... որովհետև հայերեն լեզվից 21 հնչյուն արդեն հունարեն այբուբենից ծանոթ էր, ուրեմն այն 40—50.000 բառերի հավաքածուն 15 տառի համար էր։ Մեսրոպ վրացերեն և աղվաներեն տառերն էլ հորինեց. արդյոք սրանց լեզվի համա՞ր էլ նախ բառարան կազմեց. և այս անգամ ի՞նչ ձևով. դարձյա՞լ հունարեն-վրացերեն և հունարեն-աղվաներեն, թե՞ այս անգամ հայերեն-վրացերեն և հայերեն-աղվաներեն։ Եվ որովհետև Մեսրոպ ինքը շատ լավ հայերեն, բավական էլ հունարեն իմանալով հանդերձ՝ 4 օգնական էր առել (չհաշվելով Սահակին), արդյոք վրացերեն և աղվաներեն բառարանների համա՞ր քանի օգնական էր առել, քանի որ այս լեզուները ընավ չգիտեր։

Այսպե՞ս են կազմել հարյուրավոր ժողովուրդներ իրենց այբուբենը...։

Տեղն է կարծեմ հիշեցնել «Ողը մուսանտարան հանելու» ավանդական առածը։ Ծալքատեղի գլխին դրած է եղել դանակը. եղը պիտի մորթեին. փոխանակ դանակը վերցնելու և եղը մորթելու, եղը պարաններով քաշում են ծալքատեղի դլուխը և մորթում այն դանակով։

Երևի Սահակյան ազդված է Խճիճյանից, որ իր «Հնախոսությանն» մեջ (հատոր Գ, էջ 73) կարծում է նույնպես, թե Մեսրոպի կրած դժվարությունը ո՛չ թե տառաձևերը հնարելու մեջ էր, այլ հայերենի բոլոր հնչյունները այբի առաջ ունենալու։ Ամբողջական այբուբեն հնարել կարենալու համար պետք էր, ասում է Խճիճյան, լեզվի բոլոր բառերը աչքի առաջ ունենալ, որպեսզի որևէ հնչյուն բաց չթողներ։ Այս դժվարությունը Խճիճյան լուծում է տեսիլքի միջոցով, իսկ Սահակյանը տեսիլքի տեղ դնում է բառարան !։

§ 18

Ամփոփելով մինչև այստեղ նշանակված բոլոր տարբերությունները, որ տալիս են մեր հնագույն պատմագիրները, տեսնում ենք, թե ձգտում կա Մեսրոպի դերը վերագրելու Դանիել եպիսկոպոսին կամ Հռուփանոս գրչին կամ Սահակին և կամ ասոմածային հայտնության։ Պատմագիրների այդ հետևի, հնտեսաբար և անարժեք վկայության վրա հիմնվելով, արդի քննիչներից ոմանք կարծեցին, թե մեր գրերի մեծ մասը Դանիելի հնարածն է, իսկ մնացյալը լրացրել է Մեսրոպ. ուրիշներ կարծեցին, թե ամեն ինչ Հռուփանոսինն է, այսինքն թե՛ գրերի վերջնական ձևը, թե՛ անունները և թե՛ դասավորությունը։ Հիշելի է, օրինակի համար, Հ. Ն. Անդրիկյան, որն ասում է («Բազմավէպ», 1907 թ., էջ 510 ծան.), թե Դանիել հնարել է բաղաձայնները, որոնցից պակասում էին «թավերը կամ միջակներն ու նուրբերը». ինչպես նաև ձայնավորները։ Էլ ի՞նչ ձայն մնաց։ Իսկ Հռուփանոս ստեղծեց ձայնավորները և այդ թավ, միջակ ու նուրբ ձայները։ Բայց այս բոլորից ո՛չ մեկն է ուրիշ։ Ո՛չ Դանիել, ո՛չ Հռուփանոս և ո՛չ էլ Սահակ կարող են վայելել հնարչի անունը, քանի որ Կորյունն այնպես պարզ կերպով ցույց է տալիս, թե Մեսրոպ եղավ մեր գրերի հայրը և իր աչով ծնավ նրանք։ Դանիել մինչև իսկ որոշ չափով արդեպ եղավ մեր գրերի արագ դյուտին։ Եթե Վռամշապուհ տված չլիներ այն չարաբաստիկ սուտ լուրը՝ թե Դանիելի մոտ կան «հայերեն գրեր», Մեսրոպ չպիտի դիմեր այս անձին (անձամբ կամ գրով), չպիտի ձեռնարկեր այն երկարատև ճամբորդության, այլ իր սեփական խելքով պիտի հնարեր նոր հայերեն այբուբեն, որ իհարկե շատ դժվար բան չէր։ Հնությունը ամեն տեղ և ամեն ժամանակ հարգ է վայելել։ Ի՞նչ էր անում Մեսրոպ քաղաքից քաղաք թափառելով իր օգնականների հետ, ի՞նչ էր անում այնքան ժամանակ Եդեսիայի դիվանը թարթափելով։ Ուրիշ բան չէր նրա նպատակը, եթե ոչ հին-հին գրքերի մեջ գտնել վերջապես այն հին հայերեն գիրը. որի համար լսել էր թե կա։ Խ-

քը և իր օգնականները ահա այդ գրքերի մեծ հավաքածուները, մատենադարանները մեկիկ-մեկիկ աչքից անցկացնելով, ամեն մի գրքի մեջ որոնում էին այդ ցանկալի գիրը։ Եվ երբ համոզվեց Մեսրոպ, թե այդպիսի բան չկար, ա՛յն ժամանակ միայն դարձավ իր նախկին մտքին՝ աշխատությամբ հնարել հայերեն գրերը, որ, ինչպես կարելի է գուշակել, տևեց շատ կարճ ժամանակ։ Ինչո՞ւ Մեսրոպ ամենևին նեղություն կամ աշխատանք չկրեց վրաց և աղվանից գրերը հնարելու ժամանակ, քանի որ այս ազգերը իրեն համար ոտար և լեզուներն էլ անծանոթ լինելով՝ պետք է, որ ավելի չարչարվեր։ Իհարկե չնեղվեց, որովհետև երևան չկավ մի Դանիել, որ ասեր, թե վրաց և աղվանից հին գրերն ունի։ Դանիելը ո՞չ թե մեր գրերի գյուտի սատար և ձեռնտու եղավ, այլ, ընդհակառակը, ուշացրեց մեր գրերի գյուտն ու գրականությունը։ Առանց Դանիելի միջամտության, մենք գոնե երեք տարի ավելի շուտ պիտի ունենայինք հայերեն գիր և գրականություն, երկու տարի հաշվելով Դանիելյան գրերի փորձը և գոնե մի տարի՝ Մեսրոպի ճամբորդությունը։

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Դանիելյան գրերը երկու տարի փորձեց Մեսրոպ, բայց պակասավոր գտնելով խափանեց.— 2. Առավ մի խումբ աշակերտներ և օգնականներ, և Ամիդի վրայով գնաց Եդեսիա. ընդունվեց ասորոց Ռաբուլաս և նունաց Ակակիոս եպիսկոպոսներից. աշակերտների մի խումբը դրավ ասորական դպրոցը, իսկ մյուս խումբը ուղարկեց Սամուսատ՝ հունական դպրոցը. ինքը իր ընկերներով ընկավ խուզարկության ետևից և հնարեց հայերեն գրերը. գնաց Սամուսատ, մի գեղագիր գրագրելու և նույն տառերը գեղեցիկ նկարել տալու համար.— 3. Սամուսատում գտավ Հռուփանոսին և տառերը նկարել տվեց. իսկույն ուզեց թարգմանել Առակաց գիրքը, որ գրչագրեց Հռուփանոսը.— 4. Վերադարձավ Եդեսիա և Ամիդի վրայով Հայաստան.— 5. Այլ պատմիչների տված տարբերությունները— Խորենացին չի հիշում Ամիդը և Մեսրոպին տանում է «Միջագետք»՝ Դանիելի մոտ, հետո Եդեսիա.— 6. Եդեսիայում դիմում է Պղատոն ճարտասանին, հետո գնում է Սամոս կղզին՝ Հռուփանոսին. երկուսից էլ ձեռնունայն՝ ՀՐԱՇՔՈՎ գանում է հայերեն տառերը, որ ձեռակերպում է Հռուփանոսը.— 7. Հայերեն գրերի գյուտի վայրն է Եդեսիա. սխալ է դնել Սամուսատ և ավելի սխալ է Սամոս. Հռուփանոսը մի հասարակ գրչագիր էր. ո՛չ մի դեր չունի հայ տառերի հորինման մեջ, բացի գեղեցիկ կերպով օրինակելուց.— 8. Խորենացու ՀՐԱՇՔԸ. որ պատմում են նաև մյուս պատմիչներ, Կորյունը սխալ հասկանալու արդունք է.— 9. Հաստատում ենք, որ հայերեն գրերի գյուտի վայրն է Եդեսիա և Ո՛չ Սամուսատ.— 10. Փոքր-Կորյուն չափազանց համառոտում է և մեր երորդ— չորրոդ գլուխների տվերն է միայն պահում.— 11. Ըստ Փարպեցու՝ հայերեն գրերը նույն Դանիելյան նշանագրերն են, որոնց բերին լրացրել են հունարենի վրայից՝ Սահակ և չորս ուրիշ քահանաներ: Դանիելի գերի այս բարձրացումը և Մեսրոպի դերի ոչնչացումը Փարպեցու սխալն է.— 12. Հերքում ենք Փարպեցուն պաշտպանելու համար արված փորձերը.— 13. Ըստ Սասնեցու Մեսրոպ՝ Դանիելից, Պղատոնից և Հռուփանոսից անհույս մնալով՝ դառնում է Հայաստան և Բալուի քարայրում հղելով՝ գտնում է հրաշքով հայերեն գրերը: Այս նույնը գիտեն նաև Հայսմավուրքը, Վարդան և Դանձարանը.— 14. Բալուի բերդի, Մեսրոպի քարայրի և հրաշքի քարի նկարագիրը. առասպելի ծագումը.— 15. Մի վերջին անվավերական էլ.— 16. Դանիել Ասորու մոտ գտնված տառերը ոչ հայերեն, հավանաբար արամեական տառերի մի ցուցակ էր լոկ.— 17. Սխալ է կարծել, թե Մեսրոպ կազմեց նույն-հայերեն քառարան.— 18. Հայերեն գրերի միակ հեղինակն է Մեսրոպ: Դանիելը խանգարեց նրան և ուշացրեց մեր գրերի գյուտը:

(Շարունակելի)



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ*

Ի՞նչ արժեք ունի Շիրակացու թվաբանական այս աշխատությունը գիտության համար. ո՞րն է նրա տեղը գիտության պատմության մեջ— կհարցնեք դուք։

Անշուշտ ձեզ հայտնի է, որ Շիրակացուց շատ առաջ մաթեմատիկական գիտությունը զարգացած է եղել հին Եգիպտոսում, Բաբելոնում, Հունաստանում և Հռոմում։ Մաթեմատիկայի պատմության մեջ հայտնի են այնպիսի ականավոր մաթեմատիկոսներ, ինչպիսին էվկլիդեսն է, Թեոն Ալեքսանդրացին, Եվդոկիոս Ասկոլանացին և ուրիշները։ Շիրակացուց շատ առաջ գրվել են մաթեմատիկական ավելի բարդ աշխատություններ, քան Շիրակացու թվաբանության դասագիրքն է. գրվել են անգամ հանրահաշվական խնդիրներ։ Սակայն Շիրակացու թվաբանական աղյուսակների ժողովածուի արժեքը կայանում է նրանում, որ նա հնագույն շրջանից մեզ հասած թվաբանական չորս գործողությունների ամենահին ամբողջական տեքստն է։ Մինչև այժմ մաթեմատիկայի պատմության մեջ հայտնի է բազմապատկության հունարեն մի փոքրիկ աղյուսակ միայն 4-րդ դարից (մ. թ.), մոմի սալտակի վրա, որը Բրիտանական թանգարանի սեփականությունն է և հրատարակել է անգլիացի գիտնական Սմիտը։ Ավելի ուշ շրջանից մեզ է հասել թվաբանական չորս գործողությունների մի աշխատություն, որի հեղինակն է Նիկոլայ-Արտավազդ Զմյուռնացին, որը գրված է դարձյալ հունարեն։ Ձեռագիրը Փարիզի Ազգային մատենադարանի սեփականությունն է։ Վերջինս սակայն Շիրակացուց հինգ դար հետո է։

Ի դեպ, պարզվել է մի հետաքրքիր նորություն, որ կապված է Նիկոլայ-Արտավազդի անձնավորության հետ։ Պրոֆ. Ն. Ադոնցը, որ շնչած ծանոթ չի եղել մեր հայտնագործությունների հետ, բայց այլ կապակցությամբ ուսումնասիրելով Նիկոլայ-Արտավազդի անձնավորությունը, եկել է այն եզրակացության, որ նա հայ է, բյուզանդական արքունիքում աշխատող դրագիր։ Իսկ մենք Նիկոլայի թողած վերև հիշված հունարեն աղյուսակները համեմատելով Շիրակացու աղյուսակների հետ, երբ գտանք, որ Նիկոլայը օգտվել է Շիրակացուց, հայերենից հունարեն է թարգմանել Շիրակացու թվաբանական աղյուսակները, չէինք հասկանում, թե այդ ինչպե՞ս կարող է պատահել։ Այս հարցով լուրջ զբաղվեց դոց. Գ. Պետրոսյանը և պարզեց այն փոխառությունները, որ կան Շիրակացուց Նիկոլայի մոտ։ Այժմ եթե նույնիսկ վիճելի համարվի մեր ենթադրությունը՝ Շիրակացուց օգտվելու փաստը,

---

* Շարունակված ամսագրի 1955 թվականի № VIII-ից։

այնուամենայնիվ, անհերքելի է մնում այն, որ մաթեմատիկայի պատմության մեջ հայտնի Նիկոլայ-Արտավազդը ևս հայ է։ Այսպիսով, մենք այժմ բաց ճակատով կարող ենք ասել, որ Շիրակացու և Նիկոլայ-Արտավազդի աշխատությունները մեր ժողովրդի ճամեսա մուծումներն են ընդհանուր գիտության գանձարանում։

***

Շիրակացու թվաբանական աշխատությունների հայտնաբերումով, սակայն, մենք չբավարարվեցինք և շարունակեցինք մեր պրոպրատումները Շիրակացու մյուս աշխատությունները ևս գտնելու հույսով։ Բարեբախտաբար այդ ուղղությամբ ևս մեր կատարած աշխատանքը ապարդյուն չանցավ. հայտնաբերեցինք Շիրակացու տիեզերագիտական և տոմարագիտական մի ընդարձակ աշխատությունը, որի համառոտ խմբագրությունն էր միայն հայտնի՝ կազմված մի քանի գլուխներից. այն հրատարակել է պրոֆ. Պատկանյանը՝ «Անանիայի Շիրակունոյ Մնացորդք բանից» աշխատության մեջ։ Մեր հայտնաբերած տեքստը, որ բաղկացած է 84 գլուխներից, հրատարակվեց 1940 թվին։ Տեքստը խմբագրեց հանգուցյալ պրոֆ. Հ. Աճառյանը։ Դուք չեք կարող պատկերացնել՝ թե ինչպիսի՛ ուրախություն, ինչպիսի՛ հոգեկան հրճվանք էր ապրում մեր մեծանուն գիտնականը, երբ առաջին անգամ իմացավ այդ տեքստի հայտնաբերումը։

Ես մանրամասն կանգ չեմ առնի այս աշխատության վրա, որովհետև դրա համար երկար ժամանակ է պետք։ Ես միայն կարող եմ այստեղ համառոտիվ թվարկել այն հիմնական փաստերը, որոնք ցուցանշում են Շիրակացու աշխարհայացքը և գիտական ուղղությունը։

Շիրակացին իր այս աշխատության մեջ որոշակի դնում է երկրի կլորության հարցը։ Երկրի կլորությունը մեր ներկա սերնդի համար սովորական, հասարակ հարց է թվում, իսկ այն ժամանակ այդ շատ լուրջ հարց էր։ Նկատի ունեցեք, որ գոյություն ուներ պաշտոնական տեսակետ, որի դեմ դուրս գալն այնքան էլ հեշտ չէր։ Հակառակ տեսակետ արտահայտողը կարող էր համարվել աղանդավոր, կարող էին կտրել նրա ձեռքի և ոտքի ջլերը, կարող էին շիկացած երկաթով խարանել ճակատը աղվեսադրոշմով։ Բայց, այնուամենայնիվ, հայ խիզախ գիտնականը հանդես է գալիս իր ինքնուրույն տեսակետով և պնդում, որ երկիրը կլոր է. «Երկիրն... ինձ ի դէպ թուի ասացեալն՝ իբրև զձու, որպէս նորա դեղինն ի միջին գնդաձև կառուցեալ կայ, և սպիտակուցն շուրջ զնովաւ, նոյնպէս երկիրս ի միջոյ կառուցեալ կայ, օդ շուրջ զնովաւ և երկին պատ առեալ զամենայնիւ։ Այսինքն՝ երկիրը ինձ թվում է, որ ձուի նման է, ինչպես որ նրա դեղնուցը կլոր միջոցն է, սպիտակուցը նրա շուրջը, իսկ կճեպը շրջապատում է չորս կողմից. նույնպես և երկիրը մեջտեղումն է, օդը նրա շուրջը, իսկ երկինքը պատում է նրան չորս կողմից։ Ըստ որում, պիտի նկատի ունենալ, որ Շիրակացին այդ ասում է յոթերորդ դարում և ասում է առանց տատանվելու, հակադրվելով մյուս տեսակետներին, նույնիսկ՝ բիբլիական ընդունված պաշտոնական տեսակետին, որը երկիրը համարում է քառակուսի։

Իր նույն աշխատության մեջ, մի այլ տեղ ևս, նա անդրադառնում է նույն մտքին, բայց այս անգամ վարագուրված, երազի ձևով. «Եւ արդ մի՛ զիս եպերէք սիրելիք,— գրում է նա,— գիտէ ծածկագէտն, զի ոչ ստեմ։ Մինչդեռ էի յաղօթս առ առաւօտուն ի վկայարանի Սրբոյն Եւգենեայ և միտք իմ յայս խորհուրդս ծփէին, քուն էառ զիս։ Եւ տեսանէի որպէս թէ արեգակն ի ծագելն խոնարհեալ յերկիր իջանէր։ Եւ ես յառաջն ընթանայի և ի գիրկս ընդունէի զնա։ Եւ նա էր պատանի, անմուրուս, ոսկեգիսակ, և շրթունք բերանոյ նորա որպէս թէ ոսկով լինէր օծեալ։ Եւ ինքն սպիտակս և փայլունս զդեցեալ հանդերձս։ Եւ լոյս սաստիկ ելանէր ի բերանոյն։ Ասացի ցնա՝ եթէ ի վաղնջուց ցանկացեալ էի ի քէն լսել բան. արդ՝ աղէ պատմեա՛ ինձ, եթէ յորժամ ի մէնջ ծածկիս, ո՞ւմ տաս լոյս. զո՞ն կենդանիք ի ներքոյ երկրի՝ եթէ ոչ։ Եւ նա ասէ՝ ո՛չ, այլ լերանց և ափափայից ձորոց և անձաւաց անկենդանեաց տամ լոյսս։

Շիրակացին, զգում ես, որ վախենում է իր տեսակետը բացահայտ արտահայտելուց և

բերում է այն որպես երազ. եթե կմեղադրեն իրեն՝ կաշխատի արդարանալ՝ թե այդ իր սեփական տեսակետը չէ, այլ պատմում է երազը։

Շիրակացին տիեզերագիտական իր նըշված աշխատության մեջ քննության է առել լուսնի և արեգակի մեծությունները, համեմատել է նրանք իրար հետ, և հանգել ճիշտ եզրակացության՝ որ արեգակը մեծ է լուսնից։ Այս առթիվ մի շարք օրինակներ բերելուց հետո, նա ամփոփում է. «Ու յայսմ ամենայնէ յայտ է, թէ մեծ է արեգակն ըստ վկայութեան աստուածային գրոց, որում ն արտաքնոցն բարեաց ի ճահ պատահին վկայութիւնքն։

Շիրակացին գիտական ճիշտ բացատրություն է տալիս արեգակի և լուսնի խավարումներին։ Նրա տեսակետով, երբ արեգակը, լուսինը և երկրագունդը կանգնում են իրար դեմ դիմաց, հավասար միալար գծի վրա՝ մեկը խոչընդոտ է դառնում մյուսին և լույսը բեկվում է, առաջանում է խավարումը. «...Արեգակն դեր ի վերոյ լուսնին է. և լուսինն դիպեալ ի ներքոյ արեգական... յորժամ հաւասարազոյգ լիցին՝ մինն զի իցէ ի վերոյ և միւսն ի ներքոյ կշիռ նմին և արեգակն բերան բացեալ հոսէ հեղլով զբոլորութիւն լուսոյն հանդէպ ուղիղ կշռութեամբ ի միջոյ լուսնին, ոչ թողու անցանել ի ներքին անօսրութիւն օդոյն, որ սփռեալ տարածանի ընդ ծով և ընդ ցամաք»։

Շիրակացին իր մի այլ աշխատության մեջ փորձում է նույնիսկ սահմանել, թե ինչպիսի հաշիվ պիտի կատարել պարզելու՝ թե երբ են տեղի ունենալու արեգակի և լուսնի խավարումները։ Շիրակացու այս աշխատությունը գիտական բացառիկ արժեք ունեցող գործ է։ Եվ մարդ, իսկապես, մնում է ապշած՝ թե այն ժամանակ զարգացման ինչպիսի աստիճան էր պետք նման հարցեր քննելու և լուծելու համար։ Ճիշտ է, Շիրակացուց շատ առաջ հույն գիտնականները, որոնց նա անվանում է «արտաքին» գիտնականներ, երկրի կլորության, խավարման և այլ հարցեր քննել և լուծել էին, և Շիրակացին օգտվում է նրանցից, սակայն, այնուամենայնիվ, ընդհանուր զարգացման շատ բարձր աստիճան էր պետք նման հարցեր միջնադարյան խավար իրականության մեջ քննության առնելու համար։

Շիրակացու կարծիքով, երկինքը, երկիրը և այս երկսի միջև ընկած տարածության վրա գտնվող ամեն ինչ բաղկացած է չորս տարրերից՝ հողից, ջրից, օդից և կրակից։ Այս տարրերից ամեն մեկն ունի իր հատկությունը. այսպես, կրակի հատկությունն է ջերմ և ցամաք, օդի բնությունը՝ ջերմ և խոնավ, ջրի բնությունը՝ խոնավ և ցուրտ, հողի բնությունը՝ ցուրտ և ցամաք։ Եվ այս չորս տարրերը միանալով իրար հետ, իրենց հատկությունները իրար են փոխանցում և ստեղծում այս կամ այն նյութի որակը։

«Ցաղագս ծովոյ» գլխում Շիրակացին անդրադառնում է ծովի ընդունած և բաց թողած ջրերի հավասարակշռության հարցին և հակադրվում է այն գիտնականներին, որոնք գտնում են, թե ծովերի խորքից իբր թե անցքեր կան դեպի աղբյուրները — ծովերի ջրերը հոսում են գետնի տակով և ապա դուրս գալիս աղբյուրների ձևով։ Շիրակացին ճիշտ է գտնում այն գիտնականների տեսակետը, որոնք ծովի ջրերի հավասարակշռված մնալը բացատրում են գոլորշիացման պատճառով. «...ջերմութիւն արեգականն ծծէ և քարշէ դբաղցունս և զնուրբսն և զթեթևսն գոլորշեաւն հանէ յօդն։ Որպես օրինակ նա բերում է ջրի թորումը. երբ նավարկության ժամանակ խմելու ջուրը պակասում է, նավավարները վերցնում են ծովի աղի և դառը ջուրը, լցնում են կաթսայի մեջ, կաթսայի կափարիչի վրա դնում են սպունգը — սպունգը ընդունում է գոլորշին, ջուր դարձնում և թորում ամեն տեսակ աղտեղությունից։ Շիրակացու տեսակետով, նույնը տեղի է ունենում նաև ծովի ջրերի հետ, որոնք գոլորշիանում են և թափվում երկրի վրա անձրևի ձևով. «Իսկ փիլիսոփայքն բարիք ասացին վասն միակշիռ կալոյ ծովու, թէ ջերմութիւն արեգականն ծծէ և քարշէ դբաղցունս և զնուրբսն և զթեթևսն գոլորշեաւն հանէ յօդն։ Ու թանձունքն և ծանունքն մնան, այսինքն է մրրեալքն և պղտորեալքն։ Ու որ անդէնն մնան, են աղիքն և դառինքն։

Շիրակացին իր այդ աշխատության «Ցաղագս երկնային զարդուց» գլխում սպանիչ քննադատության է ենթարկում ախթարա-

կան այն գիտնականներին, որոնք պնդում էին, թե մարդկանց բախտավոր կամ անբախտ, չար կամ բարի, աղքատ կամ հարուստ, իշխող կամ ծառա լինելը՝ նախախնամությունից է որոշված լինում և այն կարելի է գուշակել երեխայի «ի՞նչ աստղի տակ ծնվելու» հիման վրա։ Շիրակացին քաղդեական այդ «գիտնականների» պնդումները համարում է «արարքաչանք», «ավհուկների դյութանք», «ցոփարանություն» և քննադատում նրանց։

Երեխան երբ ծնվում է, ասում է Շիրակացին, տատմոր ուշադրությունն անմիջապես դառնում է ո՞չ թե դեպի աստղերը, այլ երեխան՝ տեսնելու թե երեխան կենդանի է, թե մահացած, տղա է, թե աղջիկ, և նա ժամանակ չի ունենում անգամ երկինք նայելու։ Շիրակացին անմտություն է համարում ծնունդը աստղի հետ կապելը. «Թե մարդկանց ճակատագիրը նախապես աստղերով որոշված լիներ, ասում է Շիրակացին, ապա թագավորները ժառանգաբար որդիներին չէին նշանակի իրենց գահաժառանգը, քանի որ թագավորի ժառանգները մի ժամում և մի աստղի տակ չէ, որ ծնվում են։ Եթե այդ «տեսությունը» ճիշտ լիներ, այն դեպքում ծառաները ևս թագավոր կդառնային։ Եթե մարդկանց հարուստ կամ աղքատ լինելը նախապես է որոշված, այն դեպքում ինչո՞ւ են մշակները աշխատում և ձգտում լավ կյանքի, քանի որ նրանց սահմանված է միշտ մուրացիկ վիճակում մնալ և նրանց չարչարանքն անարդյունք պիտի մնա։ Կամ ինչո՞ւ են վաճառականները անտեղի ճանապարհորդում, չարչարվում, երբ կարող են հանգիստ նստել մի վայրում և ձրի հարստություն կդիզվի նրանց համար։

Շիրակացին սուր քննադատում է քաղդեական «տեսությունը» չար ու բարին սահմանելու հարցում։ Եթե երեխան ի բնե չար է ծնվում, այն դեպքում ինչո՞ւ են պատժում նրան, քանի որ ի ծնե կանխորոշված է, որ նա չար պիտի լինի, եթե նա ուզենա իսկ, չի կարող իր բնույթին հակառակ՝ բարի գործել. ուրեմն, չարությունը իր մեղքը չէ։ Եթե չարությունը նախախնամությունը նախապես է սահմանում, այն դեպքում ավելորդ են օրենքները, որոնք պատժում են մարդկանց ոչ իրենց մեղքի համար։ Ավելորդ են դատավորները, որոնք պատվում են բարեգործներին և պատժում չարագործներին։ Եվ, վերջապես, ասում է Շիրակացին, «Թե փոքրիկ, անմեղ, անգիտակից երեխայի մեջ չարություն է դրվում, այն դեպքում չար է ինքը արարիչը, որ փոքրիկ, անգիտակից մանկան մեջ չարություն է դնում. «Զի թէ ի ընէ չարք իցեն՝ յոյժ չար է արարիչն, որ արարն զնոսա»։

Շիրակացին գիտե՝ թե ինչից է առաջանում գիշերը։— Երկիրը, ասում է նա, «ստուերաւն ղմեղ գիշերացուցանէ»։ Նա, ի դեպ, գիտե նաև, որ լուսինը սեփական լույս չունի և արեգակից է առնում իր լույսը. «Սա հաւանիմ բազմաց իմաստասիրաց՝ յարեգականէ ասել առնուլ զլոյսս»։

Շիրակացին գիտե նաև՝ թե ինչպիսի հարաբերության մեջ են մեր լսողությունն ու տեսողությունը։— Ի՞նչպես է պատահում, հարցնում է նա, որ երբ երկինքը որոտում է և կայծակ է խփում, մենք նախ կայծակն ենք տեսնում և հետո՝ միայն լսում որոտը։ Եվ նա այդ բացատրում է՝ թե լույսն ավելի արագասլաց է, քան ձայնը։

Շիրակացին փորձում է բացատրել նաև այն հարցը, թե ինչպես է, որ մեր երկրագունդը վայր չի ընկնում։ Մարդը, միջնադարյան սահմանափակ հայեցադաշտ ունեցող մարդը, նայում էր իր շրջապատին և տեսնում, որ ամեն ինչ վերից ընկնում է և նրա մեջ ակամա հարց է ծագում, թե ինչպես է, որ մեր երկիրը չի ընկնում։ Այս առեղծվածը, պետք է ասել, մինչև Նյուտոնը, երկար հուզել է գիտական աշխարհը։ Շիրակացին այս երևույթին հետաքրքիր, օրիգինալ բացատրություն է տալիս։ Նրա կարծիքով երկրագնդին հավասարակշռություն տվողը՝ բնության մեջ գործող հակադիր ուժերն են. երկիրն իր ծանրությամբ հակում է ներքև իջնել, իսկ հողմը ներքևից երկրագունդը հրում է դեպի վերև և այս երկու ուժերի հակադրության հետևանքով ստեղծվում է հավասարակշռություն։ «Երկիր,— գրում է նա,— իւրով ծանրութեամբ հակէ ի վայր իջանել, հողմն իւրով ուժգնութեամբ ցանայ ի վեր բերել զնա. և ոչ ծանրութիւնս երկրի թողացուցանէ ի վեր բերել և ոչ ուժգնութիւն հող-

մոյն թոյլ տալ ի վայր իջանել։ Եւ այնպէս հաւասարակշիռ կէտն կալեալ կայ։

Շիրակացին հնագոյն այն աստղաբաշխներից մէկն է, որ գիտական ճիշտ բացատրութիւն է տալիս Միր կաթինին (Հարդգոդի ճանապարհին)։ Նա հերքում է իր ժամանակ տարածված այն առասպելը, որ իբր այդ՝ Հերա աստվածուհու ստինքից թափված կաթն է երկնակամարի վրա։ Նա մերժում է նաև հայկական առասպելը, որ իբր ցուրտ ձմռան մի օր հայոց Վահագն աստվածը գնացել է Ասորեստան, գողացել է ասորական Բարշամ աստծու հարդը և երկնքով վերադառնալիս հարդից է թափել ճանապարհում, ուստի Հարդգոդի ճանապարհ է անվանվել։ Նա գտնում է, որ Միր կաթինը ո՛չ այլ ինչ է, եթե ոչ մանր աստղերի կուտակումներ. մի տեսակետ, որ Շիրակացուց շատ հետո միայն գիտականորեն ապացուցեցին ֆրանսիական և յապոնական աստղաբաշխները։

Ուշադրության արժանի է, որ Շիրակացին իր այս աշխատության մեջ, միջանկյալ ձևվով, երբեմն առաջ է քաշում փիլիսոփայական բարդ հարցեր ևս։ Այսպես, նրա մոտ պարզորոշ դրված է փիլիսոփայության բացատրման օրենքը։ Նա իր «Տիեզերագիտութեան» մեջ խոսելով մեռնող և նորից ծնվող բնության մասին, գրում է. «Լինելութիւն իցէ սկիզբն ապականութեան և ապականութիւնն դարձեալ իցէ սկիզբն լինելութեան։ Զի յայսմ անվնաս հակառակութենէ աշխարհ առցէ զտեւողութիւն։ Ամեն մի լինելություն իրենից ենթադրում է քայքայում, իսկ ամեն մի քայքայման մեջ լինելության սաղմը կա, և քայքայման ու լինելության այս հակադրությունն է, որ աշխարհի հավերժ գոյացության հիմքն է։ Հանդիսանում— մի տեսակետ, որ ժամանակին արտահայտել են հին հունական սոսաչավոր փիլիսոփայության ներկայացուցիչները՝ Հերակլիտը, Դեմոկրիտը և ուրիշները։ Շիրակացին նույն միտքը կրկնել է մի ա՛յլ կապակցությամբ ևս. «Տեսանելով առաջնոցն զլուսինն լցեալ և մաշեալ՝ ասացին թէ է մեզ պատկեր։— Մեր նախնիքները տեսնելով՝ որ լուսինը կլորում է և նորում, նմանեցրին իրենց և ասացին՝ թե մեր պատկերի նման է։

Ես չեմ ուզում Շիրակացու տիեզերագիտության այս աշխատության մասին ծավալվել. այդ շատ հեռու կտանի մեզ, կտանի դեպի տիեզերական անհունությունը, որ աստղաբաշխի իրավասության շրջանակն է։ Սակայն Շիրակացու այս աշխատության արժեքն այնքան ակնբախ է, որ պետք է աստղաբաշխ լինել՝ պատկերացնելու նրա կարևոր տեղը գիտության պատմության մեջ։

Անվիճելի է, որ Շիրակացին, որպես տիեզերագետ, խոշոր տեղ ունի համաշխարհային գիտության պատմության մեջ։ Ուրախությամբ պետք է հայտարարեմ ձեզ, որ մեզ մոտ հրատարակվող «Սովետական մեծ էնցիկլոպեդիայում» Շիրակացին արդեն մտել է գիտնական հեղինակների շարքի մեջ և ունի իր արժանավոր տեղը։

***

Շիրակացու աշխատությունների մեջ ուշադրության արժանի է նրա «Զափ և կշիռներ»ին վերաբերող երկը, որը հայագիտության մեջ հայտնի է վաղուց։ Նրանով մանրամասն զբաղվել է ակադ. Հակոբ Մանանդյանը։ Շիրակացին իր այս աշխատության մեջ բերում է իր ժամանակ գործածվող բոլոր չափերը և կշիռները և համեմատում նրանք իրար հետ, որը և մեզ հնարավորություն է տալիս պարզել վիճելի չափերի և կշիռների ճիշտ տարողականությունը։

Շիրակացու գիտական աշխատություններից ամենից արժեքավորը՝ ես համարում եմ նրա տոմարական աշխատությունները, որոնց վրա դժբախտաբար ժամանակ չունեմ կանգ առնելու։ Իմ համոզմունքն է, որ Շիրակացու տոմարը, և, ընդհանրապես, հայկական տոմարական գրականությունը երբ հրատարակվի և թարգմանվի, այն խոշոր տեղ պիտի գրավի ընդհանուր տոմարի պատմության մեջ։

Շիրակացին առաջին հայ տոմարագետն է, որ կազմել է ՇլԹ աղյուսակը, այսինքն՝ 532 տարիների տոմարական աղյուսակը։ Եվ այս աղյուսակն է, որ սկիզբ է հանդիսացել մեր հայկական տոմարի և հայկական թվականի։ Մենք «Շիրակացու մատենագրության» մեջ հրատարակեցինք ՇլԹ այդ աղյու-

սակը և ուսումնասիրությունը։ Մեզ հայտնի են Շիրակացու տոմարական արժեքավոր ա՛յլ աշխատությունները ևս, որոնք պատրաստում ենք հրատարակության։

❖❖❖

Շիրակացու պատմական աշխատություններից մեզ հասել է Հիպոլիտի մի երկի թարգմանությունը ևս, որի վրա Շիրակացին բավականին լրացումներ է արել տեղական նյութերի հիման վրա։ Նրա այս հավելումներից մեզ համար արժեքավոր է այն հատվածը, որը արտագրված է Խորենացուց և հիշված է հեղինակը՝ «Մովսիսի Խորենացւոյ» ձևով։ Այս մեզ հիմք է տալիս պնդելու, որ 7-րդ դարում, Շիրակացու ժամանակ, Խորենացու Պատմությունը արդեն գրված, ավարտված աշխատություն էր, ուստի և հարկ չկա շարունակել մեր բազմավաստակ պատմիչի շարշարանքները — նրան պիտի փնտրենք ոչ թե 7-րդ դարից հետո, այլ՝ առաջ։

Մենք հնարավորություն չունենք կանգ առնելու Շիրակացու «Ցաղագս ամպոց և նշանաց», «Ցաղագս շրջագայութեան երկնից, թէ ս՛ոպէս իմաստասիրացն թուեցաւ», «Ցաղագս ամենց թուականաց Հին և Նոր Կտակարանաց», նրա թանկագին քարերի մասին գրած աշխատության և ա՛յլ մանր աշխատությունների վրա, ուր ճիշտ բացատրություններ են տրված բնական մի շարք երևույթների՝ անձրևի, ձյունի, կարկտի, եղյամի մասին և այլն։

❖❖❖

Աշխատենք պատասխանել Շիրակացու գիտական ժառանգության հետ կապված մի հարցի ևս և վերջացնենք մեր դասախոսությունը։— Ի՞նչ դեր ու տեղ ունի Շիրակացին հայ մատենագրության մեջ։ Այս հարցին մենք ժամանակին անդրադարձել ենք մեր «Շիրակացու մատենագրությունը» խորագրով աշխատության մեջ և ցանկանում ենք միայն կրկնել այժմ. «Շիրակացու մեծությունը, մեր կարծիքով, կայանում է ո՛չ միայն նրանում, որ նրա աշխատությունները բարձր որակի երկեր են, որ Շիրակացին ինքը լավ հայրենասեր է հանդիսացել, որ նա հակաբյուզանդական ուղղություն է ունեցել և այլն։ Հայ մատենագրության մեջ բազմաթիվ հեղինակներ կարելի է թվել, որոնք այքի են ընկնում նման բարեմասնություններով։ Շիրակացու մեծությունը, նրշված մատենագիրների համեմատությամբ, մեր կարծիքով, կայանում է նրանում, որ նա հիմնադիրը հանդիսացավ հայկական գիտական գրականության և հնարավորություն ստեղծեց գիտությունն օգտագործել հայ ժողովրդի ինքնուրույնությունը պահպանելու գործում։ Չպիտի մոռանալ, որ եթե հայ մարտիկը օտար բռնակալի դեմ կռվում էր որով, ապա հայ մտավորականությունը բռնակալի գաղափարախոսության դեմ կռվում էր գրչով։ Եթե Մաշտոցը հիմք դրեց հայ ներկա գրականության որպեսզի հայ ժողովրդին կարողանա աղատել հոռմեական, ասորական և օտար ա՛յլ ազդեցություններից, ապա Շիրակացին հիմք դրեց հայկական գիտական գրականության՝ պաշտպանելու հայ ժողովրդի ինքնուրույնությունը, պայքարելու բյուզանդական և ա՛յլ օտար ազդեցությունների դեմ։— Դրանո՞ւմ է ահա Շիրակացու աշխատության քաղաքական խոշոր իմաստը։

Շիրակացին իր ինքնակենսագրության մեջ մի տեղ խոսելով իր կատարած մատենագրական ծանր աշխատանքների մասին, իր ստեղծած գիտական մեծ վաստակի մասին, վշտացած նշում է, թե «ոչ ոք եղև շնորհակալ և մեծարող իմոց աշխատանացս», այսինքն՝ ոչ ոք շնորհակալ չեղավ, ոչ ոք չմեծարեց իմ աշխատանքների համար։ Շիրակացու այս խոսքի մեջ պատեության շեշտ կա, գայրույթի խոսք՝ ուղղված իր ժամանակակիցներին, խուլ բողոք՝ ավատական ճրդհիմ, ծանր իրականության դեմ։

Սակայն Շիրակացին սխալվել է, երբ իր այդ վիշտը ընդհանրացրել է։ Չենք ուզում մեղադրել նրան, քանի որ նա ինչքան էլ հանճարեղ լիներ, չէր կարող իհարկե կանխատեսել, որ երբևէ կգան ժամանակներ, ոսկյա ժամանակներ, երբ ոգրվանոի տակից լույս աշխարհ կհանվեն նրա մեծարժեք հետազոտությունները և ըստ պատշաճի

կգնահատվեն նրանք։ Շիրակացու մտքովը չէր կարող անցնել իհարկե, որ պողպատյա կամքով լեցուն նոր սերունդը իր սիրասուն մայրաքաղաքում՝ Երևանում կկառուցի Ազգային մատենադարանի հոյակապ նոր շենք՝ որպես երախտագիտական խոսք իր գրասեր պապերին։ Եվ այդ շենքի առջև կխոյանան հին հայկական մեր ոգեղ ականավոր մատենադիրների արձանները, որոնց մեջ մեկը հենց կլինի իրեն՝ Շիրակացու արձանը— Շիրակացին կանգնած, գլխարաց, մտածկոտ հայացքը ուղղած կողքին դրած երկրագնդի կաղապարին՝ կարծես քե ասելիս լինի իր արձանի վրա ոսկյա տառերով փորագրված ծանրահաստատ, դարերի թանձր խավարի միջից շողարձակված և մեզ հասած իր խոսքը. «Ես կիրն... ինձ ի դեպ բուի ասացնալն որպէս զձու...»։

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿԵՁԱՌԻՍԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Կեչառիսի վանքի հուշարձանների նշանավոր խումբը գտնվում է Ախտալի շրջանի Ծաղկաձոր գյուղում, շրջանային կենտրոն հանդիսացող քաղաքատիպ Ախտա ավանից 8 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք, իսկ Երևանից՝ 57 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք և վերջինիս հետ կապված է հատուկ ավտոբուսային մշտական երթևեկությամբ։

Գյուղը տեղավորված է Ծաղկունյաց լեռների արևելահայաց լանջի մի փոքրիկ հարթակի վրա, ձորակի եզրին, շրջապատված անտառապատ լեռներով և ծաղկավետ հովիտներով ու սարահարթերով։

Ծաղկաձոր գյուղը հնում կոչվել է Կեչառիս կամ Կեչառուք, որի անունով էլ կոչվել է վանքը և մտել Այրարատյան նահանգի Վարաժնունիք գավառի մեջ, կազմելով Վարաժնունյաց իշխանների սեփականությունը։ Վարաժնունիք գավառը միջին դարերից կոչվել է նաև Ծաղկունք կամ Ծաղկունյաց գավառ, որի հետևանքով, հավանաբար, Կեչառիսն էլ սկսել է կոչվել Դարաշիշակ—Ծաղկաձոր։

Ե՞րբ է այստեղ բնակություն հաստատվել և ինչո՞ւ է կոչվել Կեչառիս—ստույգ հայտնի չէ։ Գյուղում պահպանվել են միանավ բազիլիկ տիպի մի եկեղեցու ավերակները, որի կառուցման ձևը խիստ բնորոշ է 5-րդ դարին։ Դա մի պարզ ապացույց է, որ գյուղը դեռ 5-րդ դարում գոյություն ուներ։

Վարաժնունյաց տոհմի ու նախարարության քայքայման և Բագրատունյաց Անիի թագավորության ստեղծման կապակցությամբ, Վարաժնունիք գավառն անցնում է Բագրատունիների ձեռքը, որոնք գավառի մի մասը նվիրում են Պահլավունի իշխաններին մոտավորապես 10-րդ դարի երկրորդ կեսերին։

Վասակ Պահլավունին իրենց քաղաքական կենտրոնը դարձնում է Բջնի ավանը, վերակառուցում և ամրացնում է Բջնու բերդը։ Վասակի որդի Գրիգոր իշխանը, որը հայտնի է Գրիգոր Մագիստրոս անունով, Բջնիում կառուցում է Աստվածածնի հոյակապ տաճարը 1031 թվականին, որը հետո դառնում է մենաստան, այնտեղ հաստատելով իրենց իշխանության հոգևոր թեմի աթոռը։ Վերջինս Հայաստանի չորս ամենախոշոր ու աղդեցիկ թեմերից մեկն էր, առանց որի համաձայնության չէին կարող լուծվել ինչպես կրոնական, այնպես էլ պետական կարևոր հարցերը։ Բջնու հոգևոր թեմի սահմանները 13-րդ դարում տարածվում էին Սևանա լճից մինչև Ախուրյան գետը, հյուսիսից՝ մինչև Գուգարաց աշխարհը։

Գրիգոր Մագիստրոսը Վարաժնունիքում ունեցած իրենց կալվածները՝ Բջնին, Կեչառիսը և այլն, 1045 թվականին նվիրում է բյուզանդացվոց Ռոմանոս կայսեր, իսկ դրա փոխարեն նա Միջագետքում ստանում է նոր կալվածներ և մագիստրոսական տիտղոս։ Դրանից քիչ հետո, սելջուկները Հայաստանի

հետ միասին գրավում են նաև Վարաժնունյաց կամ Ծաղկունյաց գավառը։

Զաքարյան Իվանե և Զաքարե եղբայրները, 12-րդ դարի վերջերին, սելջուկներից գրավելով Հայաստանի հյուսիսային մարզերը, որոնց թվում նաև Ծաղկունքը և այդ առթիվ Վրաց Թամարա թագուհուց ստանալով հիշյալ մարզերի սեփականության իրավունքը, նրանք իր հերթին այդ մարզերը բաշխում են Հայաստանի իրենց վասալ իշխաններին։ Կեչառիսը, ինչպես այդ պարզվում է ուսումնասիրություններից, Զաքարյանները նվիրում են Պռոշյան իշխաններին։

13-րդ դարի երկրորդ քառորդում սկիզբ առած մոնղոլական արշավանքները և այնուհետև, համարյա մինչև 16-րդ դարը թյուրքմոնղոլական ցեղերի միջև տեղի ունեցող անընդհատ պատերազմները՝ Հայաստանի հողի վրա, ինչպես և ժողովրդի անդուլ շահագործումը, կեղեքումն ու բռնությունը, երկիրը հասցնում են ծայր աստիճան քայքայման ու աղքատացման։ Հայաստանի բազմաթիվ բնակավայրերի հետ մեկտեղ Ծաղկաձոր գյուղն էլ ավերվում ու անմարդաբնակ է դառնում՝ շուրջ երկու դար մնալով ամայի ու լքված վիճակում։

Պատմական աղբյուրները 12-րդ դարում Այրարատյան նահանգում հիշատակում են Կեչրոր անունով քաղաք։ Կեչառիս և Կեչրոր անունների որոշ մոտիկությունը մի շարք տեղագիրների հիմք է տվել կարծելու, որ Կեչրոր քաղաքը հավանաբար Կեչառիսը լինի կամ նրան մոտիկ մի վայրում։ Ոմանք նույնիսկ մատնացույց են անում Կեչառիսից ներքև գտնվող դեպի արևելք, Հրազդան գետի ափին Ոնդամալ գյուղը։ Սակայն հնագիտական-տեղագրական մանրազնին հետազոտությունները չեն հայտնաբերել բնակավայրի այնպիսի մնացորդներ, որոնք դեթ մոտավոր չափով հիշեցնեին նրա քաղաքատիպ լինելը։

Ռուսները, գրավելով Արևելյան Հայաստանը, 19-րդ դարի երեսնական թվականներին Ծաղկաձորում բնակություն են հաստատել տալիս Ռուսաստանից արտաքսված մի խումբ ռուս աղանդավորական ընտանիքներ։ Այնուհետև, ռուսական կառավարությունը Ծաղկաձորը դարձնում է ամառանոցային վայր, ուր, 1932 թվականից սկսած, ամառային ամիսներին փոխադրվում են Երևանի պետական հիմնարկները։ Անկախ այդ բոլորից, մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Ծաղկաձորը մի փոքրիկ ու

ԿԵՉԱՌԻՍ ՎԱՆՔ.— Ընդհանուր տեսք արևելքից։

ԿԵՉԱՌԻՍ ՎԱՆՔ.— Ս. Գրիգոր եկեղեցու հարավյին ճակատը։

անվանված գյուղ էր՝ Ջնջուու և ապա Դարաչիչակ անուններով։

Կեչառիս—Ջնջուու—Դարաչիչակ գյուղը, որն այժմ վերանվանված է Մաղկաձոր, սկսեց արագ թափով զարգանալ ու բարգավաճել Սովետական իշխանության տարիներին, դառնալով Սովետական Հայաստանի քաղաքատիպ գեղեցիկ բնակավայրերից մեկը։ Նրա բնական գեղեցիկ գիրքը, փարթամ բուսականությունը, առողջարար և զով կլիման նրան դարձրել են Սովետական Միության կարևոր առողջարաններից ու ամառանոցային վայրերից մեկը։

Կեչառիսի վանքի հուշարձանների խումբը պատկանում է հայ ճարտարապետության արժեքավոր կոթողների թվին։ Նրա կառուցողական առանձին ձևերն այսօր էլ ուսանելի են ընդհանուր ճարտարապետության համար, իսկ նրա հարուստ վիմագրությունը արժեքավոր նյութ է հայ պատմագրության համար։

Պատմական աղբյուրները շատ աղոտ տեղեկություններ են պարունակում Կեչառիսի վանքի մասին, եղածներն էլ համոզիչ չեն ու հակասական։ Այդ հանգամանքը իր հերթին մեծ շփոթ ու հակասություն է առաջացրել հետագա տեղագիրների և ուսումնասիրողների մոտ։

Կեչառիսի վանքի պատմության վրա որոշ չափով լույս են սփռում հուշարձանների վրա եղած արձանագրությունները, որոնք ներկայացվում են հոդվածի վերջին՝ 4-րդ մասում մեր ընթերցանությամբ։ Ուշադիր կերպով ուսումնասիրելով այդ արձանագրությունները, մանավանդ նրանք, որոնք վերաբերում են վանքի հիմնադրմանը և նրան զուգընթաց քննության առնելով պատմական աղբյուրներում Կեչառիսի մասին եղած տեղեկությունները, միանգամայն պարզ է դառնում, որ վանքի սկզբնական կառուցվածքը Ս. Գրիգորի տաճարն է, որը հիմնադրել է Գրիգոր Մագիստրոս իշխանը 1003 թվականին։

Խնդիրն այն է, որ բոլոր տեղագիրները և ուսումնասիրողները, բացի այն, որ նրանց շփոթության մեջ են գցել պատմական աղբյուրներում Կեչառիսի վանքի մասին եղած ոչ ճիշտ ու հակասական տեղեկությունները, այլև այն, որ նրանք, առանց բացառության, ճիշտ չեն ընթերցել Ս. Գրիգոր եկեղեցու հարավային դռան ճակատակալ քարի վրա եղած արձանագրության տարեթիվը։

Այդ արձանագրությունը (արձանագրություն № 1) վերաբերում է Ս. Գրիգոր եկեղեցու կառուցմանը Գրիգոր Մագիստրոսի կող-



ԿԵՉԱՌԻՍ ՎԱՆՔ.— Ս. Գրիգոր եկեղեցու ներսի տեսքը։

ԿԵՉԱՌԻՍ ՎԱՆՔ.— Դավթի ներսի տեսքը:

մից հայոց ՆԾԲ (1003) թվականին, հայոց Գագիկ առաջին թագավորի և Սարգիս կաթողիկոսի ժամանակ։ Բոլոր բանասերների կողմից տարեթվի Ծ տառը կարդացվել է որպես Զ, որը մեծ անճշտություն է առաջացրել արձանագրության ժամանակի և բովանդակության միջև։ Հայտնի է, որ Գագիկ առաջինը թագավորել է 990—1020 թվականներին, իսկ Տեր Սարգիսը կաթողիկոս է եղել 992—1018 թվականներին։ Հետևապես, եթե Ս. Գրիգոր եկեղեցու կառուցումը, որը վանքի գլխավոր եկեղեցին է ու ամենահին կառուցվածքը, ընդունենք ՆԶԲ (1033) թվականը, ապա դա կվերաբերեր ոչ թե Գագիկի թագավորության և Տեր Սարգսի կաթողիկոսության ժամանակին, այլ Հովհաննես-Սմբատի թագավորության և Տեր Պետրոսի կաթողիկոսության ժամանակաշրջանին, որը չի համապատասխանում արձանագրության բովանդակությանը։

Բացի այդ, մասնագետի աչքով դննելով վերը նշված արձանագրության թվականի տասնավորը և այն համեմատելով ուրիշ արձանագրություններում նույնաձև փորագրված տասնավորների հետ, վստահորեն կարելի է ասել, որ նշված արձանագրության տարեթվի տասնավորը ոչ թե Զ, այլ Ծ տառանիշն է։

Ալպիսով հիշյալ արձանագրության տարեթիվը ՆԾԲ (1003) թվականն է, որը ճշտով համապատասխանում է նրա բովանդակությանը։

Կեչառիսի վանքը մեծ զարգացման և տրնտեսական հզորացման է հասնում 12—13-րդ դարերին, դառնալով ֆեոդալական Հայաստանի ամենախոշոր կրոնական կենտրոններից մեկը։ Նա ունեցել է իր հոգևոր դպրոցը, ուր հայտնի է եղել 13-րդ դարի նշանավոր բանաստեղծ և եկեղեցական ու քաղաքական գործիչ Խաչատուր վարդապետ Կեչառեցին։

13-րդ դարից հետո Կեչառիսի մասին շատ աղոտ տեղեկություններ կան։ Մի ավետարանի հիշատակարանում ասվում է, որ ոմն Գալուստ արեղա 1491 թվականին Կեչառիսի վանքում արտագրել է այդ ավետարանը։ 1578 թվականին հիշվում է վանքի վերադիտող Փիլիպոս եպիսկոպոսը. ապա մի ավետարանի հիշատակարանում ասվում է, որ այդ Փիլիպոս եպիսկոպոսի աշակերտ Առաքել սարկավագը 1576 թվականին Կեչառիսում արտագրում է հիշյալ ավետարանը։ Դրանից հետո ոչ մի տեղեկություն չկա Կեչառիսի վանքի մասին։ Հայտնի է միայն, որ 1827 թվականին երկրաշարժից քանդվեց Ս. Գրի-

ԿԵՉԱՌԻՍ ՎԱՆՔ.— Կաթողիկե եկեղեցին հարավ-արևմուտքից:

գոր տաճարի գմբեթը և տանիքի մի մասը, պատերի մեջ առաջացան ճեղքեր, մասնակի կերպով վնասվեցին նաև մյուս եկեղեցիները։ Հավանական է, որ հենց այդ ժամանակից էլ վանքը մնացած լինի ամայի ու լքված վիճակում։

Սովետական իշխանության տարիներին, Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից մեծ աշխատանքներ են տարվել Կեչառիսի վանքի հուշարձանների վերանորոգման, մաքրման ու բարեկարգման ուղղությամբ։ Ամբողջապես վերականգնված են պատերից թափված երեսապատ քարերն ու քիվերը, տանիքները պատած են սալաքարերով կամ կղմինդրներով, ամբողջ հուշարձանների խումբը շրջափակված է քարաշեն, երկաթյա ձողավոր ցանկապատով։

Հուշարձաններում կազմակերպված է հատուկ թանգարան, ուր ցուցադրված են Կեչառիսի և նրա մոտակա վանքերին վերաբերող տեքստեր, լուսանկարներ ու գծագրեր։

2. ԿԵՉԱՌԻՍԻ ՎԱՆՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կեչառիսի վանքի հուշարձանների խումբը բաղկացած է չորս եկեղեցիներից, մեկ գավթից, մի քանի դամբարան-մահարձաններից։

1. Ս. Գրիգոր եկեղեցի.— Վանքի գլխավոր եկեղեցին է, որը, ինչպես ցույց է տալիս հարավային դռան ճակատակալ քարի վրա եղած արձանագրությունը (արձանագրություն № 1), կառուցել է Գրիգոր Մագիստրոսը 1003 թվականին։ Գմբեթակիր մեծ դահլիճ է, ուղղանկյուն հատակագծով։ Կողերի պատերի արևմտյան մասերից ու արևելյան եզրերից ձգվող կիսասյուներ միանալով կամարներով, իրենց վրա են կրել երբեմնի խոշոր գմբեթը։ Արևելյան կողմից ունի կիսակլոր մեծ աբսիդ՝ բարձր բեմով, որի կողքերին կան խորաններ։ Արևելյան պատի մեջ, արտաքուստ, կան երկու եռանկյունաձև մեծ խորշեր։ Հարավային և արևմտյան կողմերից ունի գեղեցիկ շքամուտքեր։ Սալահատակված է, տանիքը պատած է սալաքարերով։ Այս հուշարձանը իր մեջ խտացրել է 10—11-րդ դարերի հայ ճարտարապետության բնորոշ գծերը, որոնց նախատիպերը այնքան տարածում էին ստացել 7-րդ դարում։

2. Գավիթը.— Գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան կողմում, կից։ Ներսում եղած քարե չորս սյուները և յուրաքանչյուր պատին կից ձգվող երկուական կիսասյուները միանում են կամարներով, կազմելով թաղակապ ծածկը՝ կենտրոնում հատուկ լուսանցքով— երդիկով։ Սյուների և կիսասյուների բները քարե ամբողջական մեծ գլաններ են, դրանց համապատասխան խարիսխներով ու խոյակներով։ Վերջիններս զարդարված են ստալակտիտ քանդակներով։ Գեղեցիկ շքամուտքը արևմտյան կողմից է։

Հայտնի չէ, թե ե՞րբ է կառուցվել այդ հոյակապ շենքը, կամ ովքե՞ր են եղել նրա կառուցողները։ Նրա հյուսիսային պատի ներսի երեսի վրա եղած ՌԾԵ (1206) թվականը կրող արձանագրությունը (արձանագրություն № 18) ցույց է տալիս, որ նա կառուցված պետք է լինի մինչև 1206 թվականը, հավանաբար 12-րդ դարում։

3. Ս. Նշան եկեղեցի.— Գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցու հարավային կողմում։ Այս հուշարձանի կառուցման ճիշտ ժամանակը նույնպես որոշ չէ. նրա կառուցողական ձևերը խիստ բնորոշ են 11—12-րդ դարերին։ Համեմատելով մյուս հուշարձանների կառուցման հերթականության հետ, կարելի է ասել, որ դա կառուցված պետք է լինի 11-րդ դարի վերջերին կամ 12-րդ դարի սկզբներին։

Սա մի փոքրիկ, գեղեցիկ շենք է, ներսից կողերի պատերից ու արևելյան աբսիդի եզրերից ձգվող կիսասյուները, միանալով կա-

ԿԵՉԱՌԻՍ ՎԱՆՔ.— Ս. Նշան եկեղեցին արևմուտքից։ Հարավային կողմում՝ Կարուղիկե եկեղեցու հյուսիսային ճակատը։

ԿԵՉԱՌԻՍ ՎԱՆՔ.— Ս. Հարությունն եկեղեցին հարավ-արևմուտքից:

մարներով, իրենց վրա են կրում գմբեթը՝ ութակող թմբուկով և սրածայր վեղարով։ Միակ մուտքը արևմտյան կողմից է, զարդարված դանաձև կիսասյունավոր շրջանակով։ Սալահատակած է. տանիքը պատած է սալաքարերով։

4. Կաթուղիկե եկեղեցի.— գտնվում է Ս. Նշան եկեղեցու հարավային կողմում. արևմտյան մուտքի ճակատաքարի ու կամարաքարի վրա եղած արձանագրության համաձայն (արձանագրություն № 37), եկեղեցին կառուցել է Պողոյան Խաղբակի որդի Վասակը՝ 13-րդ դարի առաջին քառորդում։

Արտաքուստ ուղղանկյուն հատակագիծ ունեցող գմբեթավոր շենք է, ներսից անկյունների մեջ ունի խորաններ, որոնք նրա հատակագիծը ներսից դարձնում են խաչաձև, ուղղանկյուն խաչթևերով։ Արևելյան կողմից ունի կիսաշրջոր աբսիդ, բարձր բեմով։ Խաչթևերի միացման անկյուններից ձգվող կիսասյուները միանում են կամարներով, իրենց վրա կրելով գմբեթը։ Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է, զարդարված դանաձև կիսասյունավոր շրջանակով։ Սալահատակած է. տանիքը պատած է սալաքարերով։

5. Ս. Հարություն.— Վանքի չորրորդ եկեղեցին է։ Գտնվում է հուշարձանների խմբից դեպի արևմուտք, մոտավորապես 150 մետր հեռու։ Դռան ճակատաքարի ու կամարաքարի վրա եղած արձանագրության համաձայն (արձանագրություն № 32) հուշարձանը կառուցված է 1220 թվականին։

Փոքրիկ, գեղեցիկ, գմբեթավոր շենք է, ուղղանկյուն հատակագծով։ Գմբեթի թմբուկը դանաձև է՝ սրածայր վեղարով։ Միակ մուտքը արևմտյան կողմից է, որը բացվում է մի փոքրիկ, գեղեցիկ սրահի մեջ։ Վերջինս արևմտյան կողմից ընդհանուր պատի փոխարեն ունի կամարապատ բացվածք, կողերից դանաձև հաստ կիսասյուներով։

Կեչառիսի հուշարձանների խմբին պատկանող դամբարաններից աչքի են ընկնում Ս. Գրիգոր եկեղեցու հարավային պատին կից երկու դամբարանները, որոնց կառուցման ժամանակը և ում պատկանելը հայտնի չեն։ Դրանցից մեկը հավանաբար պատկանի Պահլավունի Գրիգոր իշխանին, որը զոհվելով Կաղզվանում, բերում թաղում են Կեչառիսի վանքում։

Մահարձաններից նշանավոր են վանքը կառուցող քարգործ Վեցիկ վարպետի և Հովսեփ քահանայի մահարձանները՝ համապատասխան տապանագրություններով (արձագրություն № № 49, 50, 51)։

Կեչառիսի վանքի բոլոր հուշարձաններն էլ կառուցված են բազալտի սրբատաշ քարերով։

3. ԿԵՉԱՌԻՍԻ ՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԵՂԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այստեղ անհրաժեշտ ենք համարում թվարկել Կեչառիսի վանքի մասին մինչ այժմ եղած հիմնական հրատարակությունները.

1. Հ. եպիսկ. Շահխաթունյան, «Ստորագրություն կաթուղիկե էջմիածնի և ճինգ գաւառաց Այրարատայ», հատոր II, էջմիածին, 1842 թ.։

2. Հ. Ղևոնդ Մ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890 թ.։

3. Մ. արքեպիսկ. Սմբատյան, «Տեղագիր Գեղարքունեաց ծովագարդ գաւառի», Վաղարշապատ, 1895 թ.։

4. «Արաքս», գրական և գեղարվեստական հանդես, գիրք Ա, Պետերբուրգ, 1892 թ.։

5. Ազգագրական հանդես», գիրք XXII, Թիֆլիս, 1912 թ.։

6. Թ. Թորամանյան, «Նյութեր հայ ճարտարապետության պատմության», հատոր II, Երևան, 1948 թ.։

(Շարունակելի)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՅԱՊՈՆԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մայիսի 26-ից մինչև 29-ը Հայաստանում հյուր եղավ յապոնական գիտնականների դելեգացիան, որը Սովետական Միություն է այցելել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախագահության հրավերով։ Դելեգացիայի կազմում կային յապոնական ուկանավոր գիտնականներ՝ Յապոնիայի Գիտությունների ակադեմիայի անդամներ, համալսարանների պրոֆեսորներ, գիտության տարբեր բնագավառների մասնագետներ։

Հայաստանում հյուրերը ծանոթացան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի մի շարք գիտահետազոտական հիմնարկների գործունեությանը։ Նրանք եղան Ֆիզիկայի, Այդեգործության ու գինեգործության, Կենդանաբանության, Գրականության ինստիտուտներում, Էկոնոմիկայի սեկտորում, ինչպես նաև Գիտությունների ակադեմիայի էքսպերիմենտալ բազայում, կենդանաբանական այգում, քիմիկա-դեղագործական լաբորատորիայում։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում հյուրերին ընդունեց ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Յապոնական գիտնականները դիտեցին Երևանը, այցելեցին Մատենադարանը, Պատմական թանգարանը, Կրասնոկայայի անվան դպրոցը, երրորդ հիվանդանոցի վիրաբուժական կլինիկան։ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում նրանք ներկա գտնվեցին Հայկական ժողովրդական երգի-պարի վաստակավոր անսամբլի համերգին, ինչպես նաև ունկնդրեցին Պետական օպերայի մենակատարներին։

Հյուրերը մեկնեցին Էջմիածնի շրջան, եղան Միկոյանի անվան կոլտնտեսությունում, մոտորա-տրակտորային կայանում և ծանոթացան հայկական հին ճարտարապետության հուշարձաններին։ Նրանք ուշադրություն կատարեցին գեպի Սևանա լիճը։

Մեկնումից առաջ յապոնական գիտնականների խումբը զրույց ունեցավ Հայաստանի հեռագրական գործակալության թղթակցի հետ և հաղորդեց ռեսպուբլիկայում իր ստացած տպավորությունները։

Դելեգացիայի ղեկավար, Յապոնիայի Գիտական խորհրդի նախագահ պրոֆեսոր Կայա Սեյձին ասաց.

— Նախ թույլ տվեք ձեր մամուլի միջոցով Հայաստանի Գիտությունների ակադեմիային, ձեր բոլոր գիտնականներին, կազմակերպություններին և առանձին անձանց սրտագին շնորհակալություն հայտնել հյուրընկալության և ջերմ ընդունելության համար, որ մեզ ցույց տրվեց ձեր ռեսպուբլիկայում։

— Զրույցին ներկա գտնվող իմ կոլեգաները տարբեր մասնագիտությունների գիտնականներ են։ Ես կարծում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը կհայտնի Հայաստանում ստացած իր տպավորությունը։ Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա իմ տպավորությունները առաջացան դեռևս օդում, այն ժամանակ, երբ մենք անցանք Ձյունածածկ գագաթները և հանկարծ մեր հայացքի առջև փռվեց Սևանա լճի կապույտ հարթությունը։

Դեռ Յապոնիայում մենք շատ էինք լսել այն մասին, որ Սովետական Միությունում բնության վերափոխման մեծ աշխատանքներ են կատարվում։ Արդեն Հայաստանի օրինակով մենք համոզվեցինք, թե որքան վիթխարի են այդ աշխատանքները։ Իսկ Միկոյանի անվան կոլտնտեսությունում մենք ակնբախորեն տեսանք, թե Հայաստանի լեռնային գետերի ջուրը ինչպես է օգտագործվում կոլտնտեսային դաշտերը ոռոգելու համար։

Կոլտնտեսություններում մեզ խիստ զարմացրեց գյուղատնտեսության մեքենայացման բարձր մակարդակը։ Այդ կոլտնտեսության դաշտերում բոլոր աշխատանքների 85 տոկոսը կատարվում է մեքենաների օգնությամբ։

Ես հնարավորություն ունեցա նաև ծանոթանալ Գիտությունների ակադեմիայի Ֆիզիկայի ինստիտուտի գործունեությանը։ Այնտեղ մեզ պատմեցին, որ ինստիտուտը հետազոտություններ է կատարում երկու ուղղությամբ՝ կոսմիկական ճառագայթների և տարրական մասնիկների ուսումնասիրման ասպարեզում։ Այդ երկու պրոբլեմներն էլ իմ կարծիքով տեսական նշանակություն ունեն։ Ես համոզվեցի նաև, որ Հայաստանի գիտնականները հաջողությամբ են աշխատում տեսական այդ մեծ պրոբլեմների ասպարեզում, որոնք նշանակություն ունեն համաշխարհային գիտության զարգացման համար, որի մեջ նրանք իրենց ավանդն են ներդնում։

Զրույցին մասնակցող պրոֆեսոր Օուտին ասաց.

— Վերջին երեսուն տարում ես աշխարհի շատ երկրներ եմ այցելել։ Բայց հազիվ թե կա այնպիսի մի երկիր, որը աճեր այնպես արագորեն, ինչպես Հայաստանը։ Դա ակնբախորեն երևում է բնության վերափոխման այն մեծ աշխատանքներում, որոնց մասին խոսեց պրոֆեսոր Կայան։ Իմ կարծիքով, այդ ամենը քաղաքական փոփոխությունների հետևանքն է։ Ես Հայաստանում լավ ըմբռնեցի այն դարձվածքի իմաստը, թե «Որպեսզի երկիրը լավ լինի, լավ քաղաքականություն է հարկավոր»։ Վերադառնալով Ճապոնիա, ես կխոսեմ այդ դարձվածքի արդարացիության մասին, որի ճշմարտության մեջ համոզվեցի ձեր ռեսպուբլիկայի օրինակով։

Երևանում մենք տեսանք բարեկարգ բաղմահարկ շատ շենքեր, որոնց մոտ դեռևս պահպանվել են փոքրիկ տնակներ։ Ես կարծում եմ, որ քաղաքի կառուցման ու զարգացման պլանի հետագա իրականացման ընթացքում, որի մասին մեզ պատմեցին այստեղ, հինը լիովին կչքանա նորի առջև։ Բայց այդ նորի մեջ, ինձ թվում է, կպահպանվի ու կարտացոլվի ձեր ժողովրդի հարուստ պատմական անցյալը։ Ինչպես Երևանում, այնպես էլ Մոսկվայում ու Լենինգրադում, ամենուրեք մեզ դիմավորեցին սրտագին ու հյուրընկալորեն։ Սովետական մարդկանց դեմքերը, թե պաշտոնական զրույցների ժամանակ, ինչպես նաև կարճատև հանդիպումների ընթացքում, միշտ բարեկամություն էին արտահայտում։ Եվ մեզ համար հաճելի էր գիտակցել, որ նրանց հիշողությունից ասես լիովին վերացել է այն, որ տասը տարի առաջ յապոնացիները իրենց թշնամիներն էին։

Հայաստանում գտնվելու առնչությամբ իր տպավորությունները հաղորդեց նաև Տոկիոյի հանալասարանի պատվավոր պրոֆեսոր Ասամին։

— Մինչև Միկոյանի անվան կոլտնտեսությունն այցելելը մենք եղել ենք նաև Մոսկվայի մարզի տնտեսություններից մեկում։ Այդ երկու կոլտնտեսություններին ծանոթանալը մեզ հնարավորություն տվեց պատկերացում ստանալ ձեր երկրում գյուղատնտեսությունը վարելու, նրա մեքենայացման բարձր մակարդակի մասին։ Միայն այժմ ես ըմբռնեցի, թե ինչ է կոլտնտեսությունը։

Իմ ուշադրությունը գրավեց այն փաստը, որ ձեզ մոտ լայնորեն կիրառվում են բամբակահավաք մեքենաները։ Այդ մեքենաների գոյությունը հանրահայտ է։ Պետք է ասել, որ ես ծանոթ եմ դրությանը Հարավային Ամերիկայի բամբակի պլանտացիաներում։ Չնայած բամբակահավաք մեքենաների առկայությանը, դրանք չեն օգտագործվում։ Այնտեղ դեռևս ստում են բամբակի բերքահավաքի ժամանակ գործադրել նեգրերի էժան բանվորական ուժը։ Իսկ ձեզ մոտ, Սովետական Միությունում, այդ մեքենաները գործադրվում են ըստ նպատակի։

Ճապոնական գիտնականները, ինչպես և ամբողջ յապոնական ժողովուրդը, նույնպես պայքարում են հանուն խաղաղության։ Ճապոնիայի Գիտական խորհուրդը որոշում է ընդունել, որ յապոնական գիտնականները պետք է աշխատեն հօգուտ խաղաղության, նա հանդես է եկել ատոմային զենքի գործադրման դեմ, որի կործանարար ուժը զզացել է յապոնական ժողովուրդը։

Ատոմային էներգիայի խելացի օգտագործման հարցը մեծ նշանակություն ունի Ճապոնիայի համար, որպես երկրի տնտեսության զարգացման աղբյուր։ Եվ եթե այն գործադրվի այլ նպատակներով, ապա կարող են կրկնվել Նագասակիի և Հիրոսիմայի սարսափները։

(ՀՀԳ)

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, 1 հունիսի 1955 թ.)

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ԱՌՋԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ.— Տեղի ունեցավ հայ մեծ գրող, լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ծննդյան 150-ամյակին նվիրված կուսակցական հասարակական հանձնաժողովի նիստը։ Հանձնաժողովը որոշեց մեծանուն գրողի ծննդյան տարելիցը նշել լայն կերպով։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը լույս կընծայի Խ. Աբովյանի երկերի ակադեմիական հրատարակության 6-րդ և 7-րդ հատորները։ Առանձին գրքերով, հայերեն և ռուսերեն լեզուներով լույս կտեսնի «Վերք Հայաստանի» հրաշակավոր վեպը։ Հայերեն և ռուսերեն լեզուներով լույս կտեսնեն նաև առանձին աշխատություններ՝ նվիրված գրողի կյանքին և ստեղծագործությանը։

Ռեսպուբլիկայի գյուղերում, արդյունաբերական ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում կազմակերպվելու են դասախոսություններ, կազմակերպվելու են հանդեսներ և երեկույթներ՝ նվիրված Խ. Աբովյանին։ Մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում տեղի կունենան գիտական սեսիաներ։ Հոբելյանական երեկույթներ տեղի կունենան նաև Մոսկվայում և Սովետական Միության այլ ռեսպուբլիկաների մայրաքաղաքներում։

Հոկտեմբերի 15-ին Երևանում տեղի կունենա հոբելյանական հանդիսավոր նիստ՝ մասնակցությամբ կուսակցական մարմինների, հասարակական կազմակերպությունների, կուսակցա-լուսավորչական հաստատությունների ներկայացուցիչների։

Մեծաքանակ գրողի և լուսավորչի Գիշատակը հավերժացնելու համար Երևանի մանկավարժական ինստիտուտի շենքի առջև դրվելու է Խ. Աբովյանի կիսանդրին։ Դա կլինի մեր նոր գրականության հիմնադրի երրորդ արձանը մայրաքաղաքում։

ՎԵՑՏՆԱՄԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ 10-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ.— Հայկական ՍՍՌ Կուսակցության Մինիստրությունը, Արհեստագործական միությունների կենտրոնական խորհուրդը և Արտաքին առևտրի հետ կուսակցական կապի Հայկական ընկերությունը սեպտեմբերի 1-ին Երևանում կազմակերպել էին հանդիսավոր երեկո՝ նվիրված Վիետնամական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի հոչակման 10-ամյակին։ Հայ-ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ թատրոնի դահլիճը, որ տեղի ունեցավ երեկոն, զարդարված էր Վիետնամական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի, Սովետական Միության և Սովետական Հայաստանի գրոշակներով։

Երեկոն հանդիսավոր ելույթ ունեցավ Արտաքին առևտրի հետ կուսակցական կապի Հայկական ընկերության նախագահ Բ. Աստվածատրյանը, Վիետնամական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի 10-ամյակի մասին զեկուցումով հանդես եկավ կուսակցության մինիստր Ա. Շահինյանը։

Վերջում կայացավ համերգ։

ՆՈՐՎԵԳԻԱԿԱՆ ԿՈՒՍՏՈՒՐԱՅԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Հունիսի սկզբներին Երևան ժամանեց Նորվեգիայի կուսակցության գործիչների պատվիրակությունը, որը ՍՍՌՄ էր հրավիրված Սովետական Միության Կուսակցության մինիստրության կողմից։ Պատվիրակության կազմի մեջ մտնում էին Նորվեգիական թատերական արվեստի հայտնի գործիչներ։ Հյուրերին ցույց տրվեց շքեղ ընդունելություն։ Նրանց Երևանում մնացին մի քանի օր, որի ընթացքում ծանոթացան արվեստի և կուսակցության հաստատությունների գործունեությանը, եղան թատրոններում, գիտության քաղաքի շինարարությունը և տեսարժան վայրերը։

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Հունիսի վերջերին Սովետական Միություն ժամանեց Լիբանանի ֆուտբոլիստների հավաքական թիմը։ Հյուրերը ընկերական հանդիպումներ ունեցան Մոսկվայի, Կիևի, Ստալինոի, Ռոստովի ֆուտբոլիստների հետ։ Ամենուրեք Լիբանանի սպորտսմենների ցույց տրվեց շքեղ, բարեկամական ընդունելություն։

Հուլիսի 9-ին լիբանանցիները ընկերական հանդիպում ունեցան Երևանի «Սպարտակ» ընկերության թիմի հետ։

Այդ օրը Երևանի ռեսպուբլիկական ստադիոնն էին հավաքվել ավելի քան 30.000 հանդիսականներ։ Խաղից առաջ, նվագախմբի կատարած հայկական ուրախ քայլերգի հնչյունների և հանդիսականների բուռն ծափերի տակ, հատու քայլերով դաշտ դուրս եկան երկու թիմերի խաղացողները։ Կատարվեցին Լիբանանի և Հայաստանի պետական հիմները։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեի նախագահ Գ. Սիմոնյանը ողջույնի խոսքով դիմեց հյուրերին։ Պատասխան խոսքով հանդես եկավ Լիբանանի սպորտային պատվիրակության դեկավար պարոն Նիկոլա Մաժդալանին, որը փոխադարձություն հայտնեց Երևանի աշխատավորներին ջերմ, արտադրն ընդունելության համար։

Հայ մարմնամարզիկ երիտասարդուհիները հյուրերին նվիրեցին ծաղկեփնջեր։ Լիբանանցիներին ծաղկեփնջեր նվիրեցին նաև «Սպարտակ» թիմի բոլոր խաղացողները։ Բացի այդ, «Սպարտակ» թիմի պատվո Հովսեփ Աստվատրյանը Լիբանանի ֆուտբոլիստներին նվիրեց պատվավոր գավաթ։

Երկու թիմերի ընկերական հանդիպումն ավարտվեց Սրևանցիների հաղթանակով։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԳԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Օգոստոսի վերջերին Հայաստան այցելեցին Ցրանդիայի տնտեսական խորհրդի պատվիրակության անդամները։ Հյուրերը գիտեցին Երևանի տեսարժան վայրերն ու նորակառուցները, մանրամասն ծանոթացան Գյումրուի և Սևանի էլեկտրակայանների աշխատանքներին, որից հետո մեկնեցին Վրաստան։

նույն ժամանակում Երևանում ձգան Իսայիայի և Լատինական Ամերիկայի երիտասարդության պատվիրակությունները, որոնց մասնակցել էին Երիտասարդության համաշխարհային 5-րդ ֆեստիվալին վերջավայում։ Երկու պատվիրակություններն էլ մեծ հետաքրքրությամբ դիտեցին Երևանի շինարարությունը, այցելեցին թանգարաններն ու կրթական հաստատությունները, եղան Ս. Էջմիածնում, Արզնիում, Սևանում և այլ վայրերում։

Մեկնելուց առաջ նրանց չեխ հանդիպում ունեցան Երևանի երիտասարդության հետ։ Հանդիպման երեկոյին մասնակցեցին նաև ֆրանսահայ աստիճանները, որոնց Մայր Հայրենիք էին ժամանել՝ ծանոթանալու նրա վերելքին ու հաջողություններին։

ԿՈՄԻՏԱՍԻ ԶԵՌԱԳՐԵՐԸ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան Փարիզից ստացել է հայ հոյակապ երաժշտագետ Կոմիտաս վարդապետի մի շարք ձեռագրերը, որոնց մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա ստեղծագործության ուսումնասիրության համար։ Ձեռագրերի մեջ կան «Անուշ» օպերայի մենակներ ու խմբական մասեր, որոնք՝ տաղանդավոր երաժշտագետը գրել է հայ ժողովրդական մեղեդիների ոգով։ Բացի այդ, կան և ուրիշ գրություններ, գանազան դիտողություններ, լուսանկարներ և այլն։

Ստեղծված է հատուկ հանձնաժողով, որը զբաղվում է ստացված փաստաթղթերի ուսումնասիրության և կարգավորման գործով։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑՆԵՐ.— 1955 — 1956 ուսումնական տարում Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրությունը Գորիսում, Ապարանում և Արտաշատում բացելու է երաժշտական 7-ամյա դպրոցներ, որոնց կունենան դաշնամուրի և լուրջակի դասարաններ։

Ներկայումս Հայաստանում գործում են 17 մանկական երաժշտական դպրոցներ, որոնցում սովորում են մոտ 3.000 երեխաներ։ Այդ դպրոցներում գլխավորապես դասավանդում են Երևանի կոնսերվատորիան և երաժշտական միջակարգ ուսումնական հաստատությունները ավարտած ուսուցիչներ։

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԻՐԵՎԱՆՈՒՄ.— Սովետական Հայաստանի կառավարության որոշմամբ Երևանում կառուցվելու է հեռուստատեսական (տելեվիզիոն) կենտրոն։ Շինարարական աշխատանքները արդեն սկսված են։ Այդ նպատակի համար նորքում կառուցվելու է առանձին շենք։ Հեռուստատեսական կենտրոնի առաջին հերթի կառուցումը նախատեսվում է ավարտել 1956 թվականի աշնանը։ Դա հնարավորություն կտա քաղաքի բնակիչներին իրենց տները նստած դիտելու և լսելու համերգներ, ներկայացումներ, կինո-ֆիլմեր։

Կենտրոնի երկրորդ հերթի շինարարությունը կսկսվի եկող տարի։ Կկառուցվի քաղմահարկ մի շենք, որտեղ կտեղավորվեն հեռուստատեսական հաղորդումների մի քանի ստուդիաներ։ Հեռուստատեսական կենտրոնի գործողության շառավիղը հավասար կլինի 100 կիլոմետրի։ Երևանից մինչև 100 կիլոմետր հեռավորության վրա գտնվող բնակավայրերի բնակիչները կարող են ընդունել կենտրոնի հաղորդագրությունները՝ եթե ունենան հեռուստատեսական ապարատ (տելեվիզոր)։

Ներկայումս Սովետական Միության Կապի մինիստրության մի քանի ձեռնարկություններում պատրաստվում է անհրաժեշտ սարքավորանք Երևանի հեռուստատեսական կայանի համար։

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆՈՐ ԲԱԼԵՏԸ.— Ժամանակակից ականավոր հայ երաժշտագետ Արամ Խաչատրյանը, «Գայանե» բալետի հեղինակը, գրել է մի նոր բալետ, որը կոչվում է «Սպարտակ»։ Այդ բալետի երաժշտությունը, որի ունկնդրումը տեղի ունեցավ Երևանում և Մոսկվայում, մեծ հետաքրքրություն է առաջացրել Սովետական Միության երաժշտական հասարակայնության շրջաններում և արժանացել միահամուռ հավանության։ Սովետական հանրահայտ երաժշտագետ Դ. Շոստակովիչը այդ առթիվ գրում է, որ Ա. Խաչատրյանի նոր ստեղծագործությունը նոր, ուրախալի իրադարձություն է մեր երաժշտական կյանքում։ Ա. Խաչատրյանի երաժշտական ոգի ստեղծագործության մեջ ցայտուն կերպով արտահայտվում է ժողովրդայնությունը և ազգային ոճն ու առանձնահատկությունը։

«Սպարտակ» բալետի նյութը վերցված է հին Հունաստանի ճորտերի կյանքից։ Առաջիկա թատերաշրջանում Ա. Խաչատրյանի նոր աշխատությունը բեմադրվելու է Մոսկվայի և Սովետական Միության մի շարք թատրոններում։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՄ.— Անդրկովկասյան երկաթուղիների Հայաստանի բաժանմունքը խոշոր շինարարություն է կատարում։

Ներկայումս ավարտվում է Երևանի երկաթուղային կայարանի երկհարկանի ոչակապ շենքի կառուցումը։ Շենքը ուղեորների սպասարկման համար կունենա բոլոր հարմարություններ։ Այն կառուցված է բաց նարնջագույն սրբատաշ քարով։ Գեղեցիկ այուն աչքաշարը զարդարում է կայարանի մուտքը քաղաքի կողմից։ Ներկայումս կառուցվում է շենքի գլխավոր գմբեթը և կատարվում են ներսի հարդարման աշխատանքներ։ Կայարանի առջևի հրապարակը կրնդարձակվի և կբարեկարգվի։

Բացի այդ, ավարտված է բնակարանային խոշոր շինարարություն։ Երևանում, Միկոյան պողոտայի վրա ավարտվում է երկաթուղային աշխատողների 84 բնակարանից բաղկացած հինգհարկանի շենքի կառուցումը։ Այս տարի նույն պողոտայի վրա կսկսվի 100 բնակարանից բաղկացած մի այլ շենքի շինարարությունը։

Վերջերս օգտագործման հանձնվեցին Մասիս, Էջմիածին, Անի, Արարատ և Սովետական կայարանների աշխատողների համար կառուցված բնակելի շենքերը, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 8 բնակարանից։

ԵՐԵՎԱՆԻ ԿԻՆՈՍՏՈՒԴԻԱՅՈՒՄ.— Ընթացիկ տարում Երևանի կինոստուդիան արտադրել է մի քանի կինոնկարներ, որոնցից առավել նշանավորներն են «Ուրվականները հեռանում են լեռներից» գեղարվեստական ֆիլմը և «Հայկական Կինոհամերգ» ներկայումս նկարահանվում է ևս երկու գեղարվեստական ֆիլմ։ Դրանցից մեկը հայ ականավոր դրամատուրգ Ա. Շիրվանզադեի «Պատմի համարն է» գրքի նկարահանվում է ռեժիսոր Ա. Հայ-Արտյանի ղեկավարությամբ։ Մյուս ֆիլմը, որը կոչվում է «Կայծակի հետքերով», նկարահանվում է ըստ Հարավաֆրիկյան պրոդուսերի գրող Ֆ. Աքրահամի համանուն վիպակի։

ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Արդյունաբերության մյուս ճյուղերի հետ զուգընթաց, Սովետական Հայաստանում տարեցտարի զարգանում է մանդի արդյունաբերությունը։ Հետպատերազմյան տարիներին, սկսած 1946 թվականից, մանդի արդյունաբերության զարգացման վրա ծախսվել է ավելի քան 254.000.000 ռուբլի։ Վերջին 4—5 տարում կառուցվել և շահագործման են հանձնվել 14 նոր ձեռնարկություններ, որոնց թվում Երևանի և Կիրովականի հացի նոր գործարանները, Երևանի և Ալավերդու գարեջրի գործարանները, Արզնիի ապակու գործարանը, գինու և կոնյակի մի քանի նոր գործարաններ և այլն։ Բացի այդ, Գիմնազիան վերակառուցվել և ընդարձակվել են արդյունաբերական 10 ձեռնարկություններ։

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ.— Հունիսի սկզբներին Երևանում տեղի ունեցավ անդրկովկասյան ռեսպուբլիկաների կուրորտագետների գիտական սեսիան, որը հրավիրել էր Հայաստանի Առողջապահության Մինիստրության Կուրորտագիտության և բուժման ֆիզիկական մեթոդների ինստիտուտը։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կուրորտագետների կողմից սեսիայում կարդացվեցին ավելի քան 40 գիտական զեկուցումներ, որոնց նվիրված էին Անդրկովկասի հանքային ջրերի ուսումնասիրության, ինչպես նաև այդ ջրերի միջոցով քանդված հիվանդությունների բուժման հարցերին։

Սեսիան մեծ հետաքրքրություն առաջ բերեց Հայաստանի բժշկական աշխատողների շրջանում։ Որոշվեց հայորդ համատեղ սեսիան հրավիրել Բաքվում։

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ.— Երևանի տնտեսության վայրերից մեկն է հանդիսանում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բուսաբանական այգին, որը գտնվում է դեպի ավան գյուղը տանող ճանապարհին, Երբեմնի սամալի ու քարքարոտ մի վայրում։ Այգին այժմ գրավում է ավելի քան 100 հեկտար տարածություն։ Այստեղ աճեցվում և ուսումնասիրվում են աշխարհի զանազան վայրերից բերված շուրջ 900 տարբեր տեսակի ծառեր ու թփեր։ Այգու ամբողջ բուսականությունը բաժանված է ըստ աշխարհագրական վայրերի։ Կան չինական, եվրոպական, միջինասիական, կովկասյան, ղրիմյան բուսականության բաժիններ։

Հարուստ և բազմազան է Հայաստանի բուսականության բաժինը, որը գրավում է 11 հեկտար տարածություն։ Այստեղ ներկայացված են ռեսպուբլիկայի տարբեր վայրերում աճող զանազան ծառատեսակներ, թփեր, խոռեր, ծաղիկներ և այլն։

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԿՎԱՐՏԵՏԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ ԱՎԵՍՏՐԻԱՅՈՒՄ.— Վերջերս Ավստրա-սովետական բարեկամության միամսյակի կապակցությամբ, սովետական մի խումբ արտիստներ, որոնց թվում նաև Կոմիտասի անվան պետական կվարտետը, մեկնել էին Ավստրիա, ուր մեծ հաջողությամբ հյուրեր ունեցան։

Կվարտետի երաժիշտներից մեկը, ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստ Ռ. Դավթյանը իրենց հյուրերի մասին պատմում է հետևյալը.

— Ամենուրեք մեզ ցույց տրվեց լիակատար ընդունելություն։ Երկու շաբաթվա մեջ մեր խումբը տվեց 11 համերգ։ Եռատ հետաքրքիր էր մեր հանդիպումը Վիեննայի երաժշտական ակադեմիայի պրոֆեսորների և ուսանողների հետ։ Այստեղ, մեր կվարտետի հյուրից հետո տեղի ունեցավ բուռեկամական զրույց։ Ավստրիական երաժիշտները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում դեպի Սովետական Միության երաժշտական կյանքը, հանդիսում և քարոզ են ցնահատում մեր շատ երաժշտագետների։

Երկար ժամանակ մեր հիշողության մեջ կմնա կվարտետի համերգը Մոցարտի անվան դահլիճում, Բացի Շուբերտի, Չայկովսկու, Շոստակովիչի ստեղծագործություններից, մենք կատարեցինք նաև հայկական ժողովրդական երգեր, որոնց մեծ հետաքրքրություն առաջ բերին ունկնդիրների մեջ։

Բացի Վիեննայից մենք ելույթներ ունեցանք նաև Զալցբուրգ, Բրեգենց, Ինսբրուկ, Բադեն, Նոյերվիներշտադ քաղաքներում։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

„ԳԻՐՔ ԵԼԻՑ ՀԱՅՈՑ"

ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳԱԼՖԱՅԵԱՆ (ՀՈՎԻՎ ԵԴԻՄԻ ՀԱՅՈՑ)

(Տպարան Կ. Տոնիկյան, Բեյրութ, 1966 թ., 051 էջ)

Վերջերս Բեյրութում լույս տեսավ Եդեմի հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Կարապետ ավագ քահանա Գալֆայանի «Գիրք Ելից Հայոցը»։

Արժանապատիվ Տ. Հայրը, Սփյուռքի մեր քահանայական դասի մեջ, իր ուրույն տեղն է գրավում իր պատրաստությամբ, հայրենասիրությամբ, գրական ու վարչական իր վաստակներով։ Երկար տարիներ նա այնքան ժեռհատորեն հովվում է Եդեմի իր խնամքին հանձնված հոգևոր հոտը, միաժամանակ իր գրական ոլման գցելով Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական ազգատիպ գրականության գանձարանի մեջ և պատմա-բանասիրական մի շարք արժեքավոր մենագրություններով հարստացնելով մեր հայագիտությունը։ Նրա բեղուն գրչին են պատկանում «Զոմախյան՝ իր ծննդավայր գյուղի համառոտ պատմությունը. 1930 թվին հրատարակված Նյու-Յորքում, Կաթողիկոսական «Հայկական զուլյցներ», ժողովրդական ասույթների հետաքրքիր մի ժողովածու (1945 թ.), ապա «Եղեմական հուշառոմ և էջմիածնական հուշեր», Եդեմի հիմնարկության և հեղինակի գրական-հասարակական-ուսուցչական հիսնամյակին նվիրված (1950 թ.),

Հեղինակի չորրորդ գիրքը՝ «Գիրք Ելից Հայոցը» նվիրված է 1915 թվականի մեծ եղեռնին, Համաշխարհային առաջին պատերազմի ծանր, արյունոտ օրերին նահատակված, բզկտված, անգթորեն հոշոտված մեկ միլիոն հայ ժողովրդի զավակների անմոռ հիշատակին։ «Գիրք Ելից Հայոցս սիրելի իր պարզությամբ մեջ նկարել մեր անշիրիմ նահատակաց անմահական ճիչտակին»— գրում է հեղինակը (ընդգծումները հեղինակինն են։— Ռ. Մ.)։

Հայ եղեռնի մասին շատ է գրված ու խոսված, բայց չի սպառված այդ արյունոտ պատմությունը, որովհետև հայ ժողովրդի Համաշխարհային առաջին



պատերազմի օրերին ապրած ողբերգությունը, վիշտը, Թումանյանի բացատրությամբ, «մի անհուն ծով է, խավար մի ծով ոտնատիպ», և ահա արժանապատիվ Տ. Կարապետ քահանան այդ «անհուն վշտի» նոր ու արյունոտ պատկերներն է բերում, ամբողջացնելու համար այդ ողբերգության նշանակությունն ու մեծությունը հայ ժողովրդի վշտի և կորստի տեսակետից։

Իսրայելյանների «Եղիցի» նմանությամբ գիրքը վերնագրված է «Գիրք Ելից Հայոցս», այն տարբերությամբ երբայական «Ելքից», որ հայոց «Ելքը» մայր հողից ու ջրից է, հայրենի երկրի դաշտերից ու անտառներից, խաղաղ ու շեն գյուղերից։

Հեղինակը իր ականատեսի անմոռաց վկայությունն է բերում ցավոտ, հարազատ հուշերով և պատկերներով և գուշումը տեսած ու ապրած մարդկանց փառատաջի տեղեկություններով և պատումներով հյուսում է հայոց արյունոտ Գոլգոթայի սրտաճմլիկ պատմությունը, նոր ու ահավոր մանրամասնություններով։

Գիրքն սկսում է հեղինակի ինքնակենսագրական տեղեկություններով, անհոգ մանկության օրերի և իր ծննդավայր գեղեցիկ Զոմախյուի բնության նկարագրություններով։

«Մինչև երեսուն թվիվ այսպես էր հին օրերու կյանքը մեր» (էջ 18)։ այս տողերով է սկսում անցյալի անմիջտ հիշողություններ, դեպքերի և կրոնությունների մանրապատումը։ Անհանձրևալ սահում են գրքի առաջին էջերը և ընթերցողի աչքի առջև բացվում է Արևմտյան Հայաստանի մի գեղեցիկ անկյունը իր հայերի փոլորիտով, նահապետական իր բարքերով, ավանդություններով, հմայքով, ուրախություններով և թախիծով։

Ազգագրական մեծ արժեք են ներկայացնում վարդապետ և քննասեր գրչով գրված հեղինակի ծննդավայրի թաղակարանների, հարուստ-կապուտի, գեղջկական

բարքերի, հավատալիքների, խաղաղիկ առօրյա կյանքի հետաքրքիր և խայտաբղետ նկարագրություններ։ Մեր աչքի առաջ է ահա անցյալ դարի 2-րդ կեսին բռնակալության դաժան լծի տակ հեծող հայ գյուղի կյանքը։

Անցնում են մանկության ոսկի և հեքիաթային օրերը։ Հեղինակի հասունացման հետ սկսում են և նրա առաջին վշտերն ու հուսախաբությունները։ այժմ նա մեծերից լսում է շատ բաների մասին, հայ գյուղի և գյուղացու մասին։ Գրքի այս մասերում զետեղված են անցյալ դարի հայ գյուղի ցավոտ և հուզող խնդիրները (կրոնական հոսանքներ, բողոքականություն, հողային խնդիրներ և այլն)։

«Մեր երբակաե կյանքը» խորագրի տակ տրված են մեր անցյալ կյանքի զարշելիությունների հետաքրքիր նկարագրությունները։ Հեղինակի կենսագրական նոթերը, հիշողություններ, վանական գաստիարակությունը, ուսուցչական ու հասարակական կյանքը միահյուսվում են հայ գյուղի կյանքին, առօրյային, պայքարին։ Հեղինակի կյանքի փշոտ ճանապարհը մանկիկ է այն մեծ ամբողջությանը, որ խշվում է հայ գյուղի կյանքում։ Նա իր կյանքի պատումի մեջ խառնում է, արտացոլում հայ գյուղի ընդհանրությունն ու ամբողջությունը։ Այդ մեծ ամբողջի մեջ մերթ անհետանում է հեղինակի կենսագրության ուղեցույց կարմիր թելը, այն վերածվում է հայկական հասարակական կյանքի, որտեղում անհատների կյանքը ի՞նչ արժեք կարող է ունենալ, երբ հայ ժողովրդի ողջ ֆիզիկական կյանքը կանգնել էր որհասական վտանգի առաջ։

Համաշխարհային առաջին պատերազմի արյունոտ օրերն էին...։ Այդ սև օրերում կար միայն մի սեռուն միտք, կար մի մտահոգություն, դա հայ ժողովրդի գոյության հարցն էր, երբ ուզում էին ջնջել մեր ժողովրդի և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ ապագան։ կարելի չէր մտածել անհատների մասին։

Հաջորդ գլուխներում (էջ 127—166) ցույց են տրված Համաշխարհային առաջին պատերազմի սկիզբը, քաղաքական անցուդարձերը Թյուրքիայում։ Սամսոնի Սահմանադրության առաջին խանդավառ օրերը և դրանց անմիջապես հաջորդող ծանր, մղձավանջային, արյունոտ իրադարձությունները, հայկական ֆոտոռամները։ Գրքում բազմաթիվ տեղ է հատկացված հայ ժողովրդի այդ ծանր և անգնահատելի օրերին ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործունեությանը։

Արևմտահայ ժողովրդի մեծ օրհասը սկիզբ էր առել արդեն։ 1914 թվականին սկսված Համաշխարհային առաջին պատերազմը եկավ միանգամայն սանձազերծելու արյունախում Թալաաթների և Ինվերների հայակեր, ոճրարար կամքը։ 1915 թվականի ապրիլին ծայր առավ հայ ժողովրդի ոչնչացման ահավոր ու սարսափելի ծրագրի իրագործումը։

Կենտրոնից հրաման էր եկել՝ բնաջնջել Թյուրքիայում ապրող բոլոր հայերին, չխնայել անգամ երեխաներին, կանանց և ծերերին (տե՛ս փաստաթղթեր, էջ 801—804)։

«Մեր բոհեմական վերնագրի տակ հեղինակը նկարագրում է բոլոր արտագաղթը, հայկական բդեշխած, տանջված և հոշոտված քարավանների ահավոր երթը։ Գրքում անգամ հուշեր չեն, այլ մի ամբողջ ժողովրդի շարաչար նահատակության սոսկալի եղեռնապատումը, և այդ բոլորը՝ օրը ցերեկով, հայերս, եվրոպական պետությունների աչքի առաջ։

Կարդում ես «Գիրը Նիշ Հայոց» և շարժանկարի ժապավենի պես աչքիդ առջևից անցնում են հայ Ցեղեսանի, Զեյթունի, Հաշընի, Սեբաստիայի, Կարինի, հայ Ինջե-սուի, հեղինակի ծննդավայր Չոմախլուի և այլ հայկական գավառների տեսիլ պատմությունները իրենց արյունոտ դրվագներով, ահավոր գրկանքներով... Աչքիդ առաջ ներկայանում է դեռ երեկ հայ կյանքով շնչող գյուղերի, գավառների համայնական դերեզմանները...

Արտագաղթ... կողոպուտ... մահ... սարսափ... մանուկների և կանանց անիծող սրախողխողում... նախիր և լկանք... մասսայական բնաջնջման քստմնելի տեսարաններ (տե՛ս կարնեցի Լուսնթաղ Գավաֆյանի պատմությունը՝ էջ 273, Զարյի հայուհիների պատմությունը՝ էջ 282, Ծղկիթլյանի՝ էջ 517—530, Ռեթեոս Տեր Ներսեսյանի՝ էջ 331 և այլոց պատմությունները)։

Աշխատում ես շարունակել կարդալը, մտքով անցնում ես հայ ժողովրդի մարտիրոսացման արյունոտ ճանապարհով... բայց արցունքները սեղմում են կոկորդդ, ցնցվում ես ողջ էությամբ, հայ ժողովրդի «անհան վիշարբ, զարհուրելի մղձավանջը՝ իր մղձավանջային ծանրությամբ լցնում է հոգուդ։ «Սև օրեր, գուլամի օրեր էին»,— համաձայնվում ես հեղինակի հետ։

Գաղթի ճանապարհին՝ հոտի հետ նահատակվում էր նաև հոտի անմեղ հովիվը, մտավորականը, արվեստագետը, գիտության մարդը, ուսուցչականը, ողջակիզվում էր ողջ հայ ցեղը։ Լինում էին նաև բնաջնջման խրախճանքներ, բայց ի՞նչ կարող էր սենել անգեն մի ժողովուրդ, մինչև ատամները զինված, կազմակերպված բանակների դեմ։ Հայ ժողովրդի այդ մարտիրոսությունը իր նմանը չունի բարբարոսությունների պատմության մեջ։ Ու մեռնում էր տարագրության արյունոտ ճանապարհների վրա հայ ժողովուրդը գիտակից մահով, որպեսզի միշտ ապրեն կայի հայ սերունդները։

Անցնում է ահավոր փոթորիկը հայ հողի և հայ սրտերի վրայով՝ արյունով, նախճիրով... Քարդարարի յաթաղանից մազապուրծ ազատված հայ «խյլյակները», «հայ մնացորդացը», ինչպես բնորոշում է հեղինակը իր ուրվականը պատցնում է այս անգամ անապատի անջրդի, անծայր, ավազուտ տարածություններում։ Արյունոտ սարսափներից, տառապանքից և հալածանքներից հյուծված, տրորված, բզկտված, անտնունդ ու սովահար հայ «խյլյակների» ողբերգական կյանքի տարեգրություններն է, որ հավաքել և տեղավորել է հարգարժան հեղինակը իր դրի հայրդ էջերում։

Գոնիայի, Շամի, Ռաքգայի, Հալեպի, Դեյր-Էզ-Զորի և այլ գաղթավայրերում, ամենահեթան աղքատության սովի ու սրածության, համաճարակ հիվանդություններ-

բի պայմաններում, հալածանքների, աւարակման, խոշտանգման, սարսափի, հավատափոխության վտանգի ենթարկված հայ մարդու կյանքն է պատկերվում իր ապրած կենդանի դժոխքում, Դանտեի դժոխքից ավելի սոսկալի պատկերներով։ Օրական հարյուրավոր գազանականների կյանքեր, հնձված անապատի խորշակից, սովից, ծարավից, ընկնում են անհյուրընկալ երկնակամարի տակ, ամեն կողմ մահ, արցունք, անհուն վիշտ...

Հուսահատ և անմխիթար այդ օրերին, անապատում թափառող հայ «մնացորդացին բարեկամության և ազնվության մեջ երկարեց արաբ ժողովուրդը, որը նույնպես հեծում էր սուլթանական Թյուրքիայի արյունոտ թաթի տակ։ Անմոռանալի են դրքի այն էջերը, ուր սրտահույզ դրվագներ են տրված հայ և արաբ ժողովուրդների բարեկամության մասին։ «Մենք այլևս խայտներ (եղբայրներ) էինք»,— գրում է հեղինակը (էջ 461)։ Ազգային ազատագրական ճամբան բռնած արաբ ժողովուրդը սկսել էր արդեն հասկանալ կառավարության ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած խորդակ քաղաքականությունը։

Նույնը և քուրդ ժողովրդի նկատմամբ։ Իզուր չէ հեղինակը գրքում տեղավորել «Քուրդ աֆոորակներ» խորագիրը (էջ 562), ուր ցույց է տրված քուրդ աքսորյալների դառնագին և ծանր վիճակը։ Քուրդ պաշտոնյայի բերանով խոսում է ազգային անկախությունից զրկված ժողովրդի զավակը. «Կրոնքը կրոնք ըլլալ կդադրի, երբ մարդիկ անոր անունով կողոպտուն, ջարդ, սպանություն և պատերազմ կհրահրեն...» (էջ 561). «...Ով որ արդարության կապավինի, հաղթանակը անորն է...» (էջ 562)։

«1917-ի զարունքը», «Զինադադար» խորագրի տակ հեղինակը տալիս է վերջին նկարագրությունները հայ տառապանքի։ Հաշտություն... վերադարձ...։ Մահամերձ մարդկանց երեսին ժպտում է վերջին հույսի գառն ժպիտը... ու անապատներից, տարագրության մռայլ ճանապարհներից վերադառնում են կենդանի մեռյալները, անուտ վկաները հայոց արյունոտ եղեռնի, և որոնք իրենց հազարավոր սիրելիներին թաղեցին Եփրատի պղտոր, վարարուն ջրերում, անապատի կիզիչ ավազուտներում անգերեզման, անշիրիմ...

«...Զմռռնայ հիշատակը ամեն անոնց, որոնք մեռան, որպեսզի մենք ապրինք։ Եվ սիրել համորեն հայ մնացորդը՝ անխտիր. և հույսով, անկեղծ հավատքով ողջունել թխպոտ ամպերեն վեր ծիածանը խաղաղության, Աստուածեն՝ Մասիս, արևելյան կողմն աշխարհի» (էջ 604)։

«Գիրք Նլից Հայոցը» վերջանում է հեղինակի լավատեսությամբ։ Ի դեպ, պիտի ասել, որ հեղինակի այդ լավատեսությունը կարմիր թելի պես անցնում է դրքի սկզբից մինչև վերջ և այդ՝ դրքի արժանիքներից է։ Ամենասոսկալի, հուսահատ նկարագրություններից հետո անգամ հեղինակը մնում է լավատես և իր այդ լավատեսությամբ վարակում ընթերցողին։ «Անոնք մեռան, որ հայն ու Հայաստանը ապրին հավիտյան,— ահա հեղինակի տեսակետը (էջ 530)։

Գրքի վերջաբանում հեղինակի կողմից խանգավառ հիացմունքի խոսքեր կան նվիրված Մայր Հայրենիքի վերածնմանը։ Ազգային հպարտությամբ են հնչում նրա խոսքերը. «...Թյուրքը ամեն հիգ թափեց, որ բնաջնջե հայությունը... սակայն ի լուր աշխարհի կրնանք հայտարարել, որ ինկանք, բայց չմեռանք»։ «Մեր կենդանի ըլլալուն լավագույն ապացույցը՝ մեր վերածնած Մայր Հայրենիքի վերելքն վերելք սուրացող, գիտողները հիացող և մեզ հեռավորներս անգամ ներշնչող կյանքն է, ինչպես նաև հետզհետե աճող և ինքզինքը արժանացնել ճգնող Սփյուռքի հայությունը» (էջ 609)։ «Վերածնող Մայր Հայրենիքը այսօր ապահով և երջանիկ իր կյանքը կկերտե։ Ան հայության մեծագույն մխիթարանքն ու ներշնչման աղբյուրը կհանդիսանա, օժտված՝ բաղձալի կարելիությամբ և հեռանկարներով» (էջ 608)։

Այսպես է վերջանում հայրենասեր հեղինակի արժեքավոր այս գործը։ Այն իսկապես հասել է իր նպատակին՝ հայ նոր սերնդի սրտում անկորնչելի դարձնել եղեռնի օրերին ընկած հայ նահատակների անմոռանալի հիշատակը, արժարձել հայրենասիրության վեհ կրակը հայապն սերունդների սրտերում, այդպիսով ամրացնելով նրանց ապրելու, հարատևելու ճիգը, ազգապահպանման սուրբ գործը։

«Գիրք Նլից Հայոցը» նայտեի սուրբ ավանդն է արդիներին։ Կարդում ես այն և երգվում՝ անսահման, անշահախնդիր ու սուրբ սիրով սիրել հայրենի հարազատ հողը, դրանով իսկ ամենամեծ հարգանքը մատուցած լինելով Հայրենիքի նահատակների անհայտ սուրբ շիրիմներին։

«Գիրք Նլից Հայոցը» գրված է ճոխ, գեղեցիկ և պատկերավոր հայերենով։ Լեզուն տեղ-տեղ հասնում է արժեք բանաստեղծության։ Հեղինակը ունի պատմելու շնորհ և գրելու նուրբ ճաշակ։ Գիրքը սկզբից մինչև վերջը կարդացվում է լարված հետաքրքրությամբ։

«Գիրք Նլից Հայոցը» արժեքավոր է նաև իր պատմական, ազգագրական, տեղագրական հարուստ նյութերով, ընդ որում լայն տեղ է հատկացված ոչ միայն հայերի, այլ նաև օտարների (արաբների) առօրյա կենցաղի, բարքերի, սովորությունների ազգագրական նկարագրություններին։ Գրքի վերջում տեղ են գտել հայկական լարգերի կազմակերպիչներ Ենվերի, Թալաաթի առարագրություններով հայոց տարագրության ու քնաջնջման վերաբերող փաստաթղթեր։

Գիրքը նկարազարդ է, նրանում տեղ են գտել մի շարք ազգային գործիչների, հոգևորականների նկարներ, ինչպես և հայկական կոտորածներին վերաբերյալ լուսանկարներ, սրտաճմլիկ պատկերներ։ Գիրքը ձևավորված է գեղարվեստական ճաշակով։

Արժանապատիվ հեղինակը խոշոր և գնահատելի գործ է կատարել վերոհիշյալ հատորի հրատարակումով։ Նա լիուլի հասել է իր առաջադրած նպատակին։

Ընթերցասեր հայ հասարակությունը լերմորեն կընդունի հայրենասեր հեղինակի ողջունելի այս երկը։

Ռ. Մ.